ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ*



ԳԱՎԱՌ – 2009

ԳԱՎԱՌԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# *ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

## *2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ*

ԳԱՎԱՌ – 2009

Գավառի պետական համալսարան.
2008-2009 ուսումնական տարվա գործունեության
հաշվետվություն:- Երևան: Օրենք և իրականություն, 2009

*Հաշվետվությունը բովանդակում է ընդհանուր տեղեկություններ համալսարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների մասին, ինչպես նաև ներկայացնում 2008-2009 ուսումնական տարվա գործունեությունը՝ կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական ուղղություններով:*

# ԾՐԱԳՐԵՐ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2008-2009 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանի համար հետևողական աշխատանքի, կրթական բարեփոխումների շարունակական իրականացման, գործունեության նոր ձևերի ու մեթոդների որոնման ու ներդրման ժամանակաշրջան էր: Որպես գերխնդիր հռչակված են կրթության որակի ապահովումը, ակադեմիական և վարչական կարգապահության ու պատասխանատվության բարձրացումը, մրցունակ մասնագետների պատրաստումը: Համալսարանում լիարժեքորեն գործում է երկաստիճան կրթական համակարգը: Ուսումնական գործընթացը թե' բակալավրիատում և թե' մագիստրատուրայում կազմակերպվում է կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգերը: Սկզբունքորեն փոխվել է դասավանդման ձևը, հարստացել բովանդակությունը: Ավանդական դասախոսակենտրոն ուսուցումն իր տեղը զիջել է համագործակցային կրթությանը, որն իրականացվում է բազմաթիվ արդյունավետ մեթոդներով: Պրոֆեսորադասախոսական կազմի ջանքերով բոլոր մասնագիտական դասընթացների համար պատրաստվել են դասախոսությունների էլեկտրոնային շտեմարաններ: Ուսանողներին դասախոսությունները տրամադրվում են ինչպես տպագրված թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով: Կարևորվել են սովորողների ինքնուրույն, անհատական աշխատանքները, ակտիվությունը գործնական, սեմինար աշխատանքների ժամանակ, էականորեն նվազել են անհարգելի բացակայությունները՝ կապված կրեդիտային համակարգի պահանջների, մասնավորապես, դասերին հաճախելու, կիսամյակի ընթացքում ակադեմիական առաջադրանքները կատարելու և այդպիսով կրեդիտներ կուտակելու անհրաժեշտության հետ: Ուսանողների հետ տարվում են ամենօրյա բացատրական, ուսուցողական աշխատանքներ, ինչի արդյունքում նրանք ըմբռնում են կրեդիտային սկզբունքներով ուսման առանձնահատկությունները և գիտակցաբար պատասխանատվություն ստանձնում իրենց կրթության ելքային արդյունքների համար: Զգալիորեն մեծացել է համալսարանի դասախոսական և վարչական անձնակազմի ծանրաբեռնվածությունը՝ պայմանավորված ողջ ուսումնական տարվա ընթացքում ուսանողների հետ նոր մեթոդներով և ձևաչափերով անընդհատ աշխատելու անհրաժեշտությամբ: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքներին, պետական քննություններին:

Հաշվետու ժամանակահատվածում ծավալուն աշխատանք կատարվեց համալսարանի գործունեության նորմատիվ հիմքերը վերանայելու և Բոլոնիայի հռչակագրի դրույթներից բխող պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Համալսարանի գիտխորհրդի կողմից հաստատվեցին ինչպես բուհի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող, ՀՀ օրենսդրության հիման վրա մշակված ակտերը, այնպես էլ գործող կարգերի խմբագրված, բարեփոխված տարբերակները: Այժմ համալսարանն ունի գործունեության բոլոր ուղղությունների համար անհրաժեշտ փաստաթղթային բազա:

«Թափանցիկ կրթական համակարգեր» միջազգային կազմակերպության Հայաստանյան գրասենյակի առաջարկով համալսարանի վարչական և դասախոսական անձնակազմի ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խմբերը մշակեցին «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսների էթիկայի կանոնների նախագիծը», որը փորձաքննություն անցնելուց և ընդունվելուց հետո բուհերի համար կարող է դառնալ ուսանող-դասախոս

հարաբերությունները կարգավորող և ընդհանրապես բուհական համայնքի անդամների վարքականոնները սահմանող փաստաթուղթ:

Միջազգային հակակոռուպցիոն կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունները Գավառի պետական համալսարանի՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի ջատագով բուհի պատվիրակությանը հրավիրեցին մասնակցելու բուհերում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներին նվիրված, Մակեդոնիայի Հանրապետության Սկոպյե քաղաքում կազմակերպված «Կլոր սեղանին», որտեղ մեր Հանրապետությունից ներկայացվեց Գավառի պետական համալսարանի փորձը:

Համալսարանի գործունեության կարևոր ուղղություններից է արտաքին կապերի ընդլայնումը, միջազգային համագործակցության հաստատումը ինչպես ՀՀ միջբուհական կոնսորցիումի ծրագրերի շրջանակում, այնպես էլ համալսարանի կողմից երկկողմ պայմանագրերի, գործընկերության մասին հուշագրերի ստորագրման միջոցով: Գավառի պետական համալսարանը միացել է ՀՀ պետական բուհերի ռեկտորների և միջբուհական կոնսորցիումի բոլոր ձեռնարկներին, ակտիվորեն մասնակցել պետական բուհերի ձևավորած միացյալ աշխատանքային խմբերի կողմից ուսումնական և նախաավարտական պրակտիկաների անցկացման կարգի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին: Գավառի պետական համալսարանում կազմակերպվել են ինչպես ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի, այնպես էլ միջբուհական կոնսորցիումի նիստեր: Համագործակցության հուշագիր է ստորագրվել «VivaCell-MTC» ընկերության հետ: Մեր դասախոսներն ու տեխնիկական շահագործման բաժնի աշխատակիցները մասնակցել են «VivaCell»-ում կազմակերպված որակավորման բարձրացման դասընթացներին: Միաժամանակ, ընկերության մասնագետները դասախոսությունների շարքով հանդես են եկել համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողների համար: Բակալավրիատի և մագիստրատուրայի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն իրենց պրակտիկան անցկացնում են «VivaCell»-ի տարբեր բաժանմունքներում:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության՝ ABA/CELLI-ի հետ համատեղ իրավաբանական կլինիկական կրթության ծրագրի արդյունավետ իրականացման արդյունքում մեր պատվիրակությունը եղավ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիայի Հաստինքսի բարձրագույն իրավաբանական դպրոցի կլինիկայում, մասնակցեցինք դասընթացների Սան-Ֆրանցիսկոյի և Բերկլիի համալսարաններում:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Erasmus-Mundus. Արտաքին համագործակցության պատուհան» ծրագրի շրջանակում համալսարանը շարունակում է համագործակցությունը եվրոպական բուհերի հետ, մրցութային հիմունքներով ընտրված բարձր առաջադիմությամբ և սոցիալապես անապահով ուսանողներին հնարավորություն ընձեռում 10-ից 16 ամսով ուսումը շարունակելու Հունաստանի և Լատվիայի բուհերում, իսկ համալսարանի օտար լեզուների և պատմության ամբիոնների երկու դասախոս մանկավարժական և գիտական աշխատանք կատարելու նպատակով գործուղվել են Ֆրանսիայի և Իտալիայի բուհեր: Գործընկեր եվրոպական համալսարանների ներկայացուցիչները 2009 թ. հունիս ամսին եղան Գավառի պետական համալսարանում: Մենք հյուրընկալեցինք Հունաստանի Տեսալոնիկ քաղաքի Ալեքսանդրի անվան համալսարանի, Իտալիայի Վիտերբո քաղաքի Տուշցիայի համալսարանի, Պորտուգալիայի Վիանա դո Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտի, Լատվիայի Ռեզեկնեի բարձրագույն դպրոցի ներկայացուցիչներին: Գավառի պետական համալսարանում կայացավ «Erasmus-Mundus» ծրագրի գործունեության նախորդ տարվա հաշվետվությունը և 2009-2010 ուսումնական տարվա ծրագրի շնորհանդեսը: Իտալիայի

Տուշցիայի համալսարանի պրոֆեսոր Անտոնինո Սկարելին մեր ուսանողների համար կարդաց դասախոսություններ: Համալսարան են այցելել այլ հրավիրյալ դասախոսներ, որոնք հանդես են եկել ակնարկային դասախոսություններով և հիմնականում աշխատել մագիստրատուրայի ուսանողների հետ:

Համալսարանի գործունեության կարևոր բաղադրիչն է դասախոսների, երիտասարդ մասնագետների, մագիստրոսների գիտահետազոտական աշխատանքների խթանումը, գիտխորհրդի կողմից ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի առաջադրած պահանջները բավարարող, գիտության թեկնածուի և դոկտորի գիտական աստիճան ունեցող դասախոսներին դոցենտի և պրոֆեսորի կոչումների շնորհումը, մենագրությունների, ուսումնամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների տպագրության երաշխավորումը, ամենամյա գիտաժողովների կազմակերպումը:

Համալսարանի 11-րդ գիտաժողովն անցկացվեց Վրաստանի Հանրապետության Թելավիի Յա. Ս. Գոգեբաշվիլու անվան պետական համալսարանի հետ համատեղ: Գիտաժողովի նյութերը տպագրվեցին բնական և հասարակական գիտություններին նվիրված ժողովածուներում: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներն առաքվել են Թբիլիսիի, Թելավիի, Բաքումի, Արցախի, Գորիսի պետական համալսարաններին, Գյումրու Միքայել Նալբանդյանի և Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտներին, ինչպես նաև գործընկեր այլ բուհերի և գիտակրթական կազմակերպությունների գրադարաններին: Յուրաքանչյուր ամիս լույս է տեսնում «Գավառի համալսարան» թերթը, վերանայվում և թարմացվում է բուհի «www.gsu.am» ինտերնետային կայքը, ապահովվում է մշտական ինտերնետ կապ համակարգչային լսարաններում և աշխատասենյակներում՝ ինչպես ուսանողների, այնպես էլ վարչական և դասախոսական անձնակազմի համար:

Համալսարանի կարևոր խնդիրն է ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության ակտիվացումը, սովորողների հայրենասիրական դաստիարակությունը, նրանց մեջ բարձր մարդկային որակների ձևավորումը, ազգային ու համամարդկային արժեքների արմատավորումը: Այս նպատակով պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, «կլոր սեղաններ», քննարկումներ, էքսկուրսիաներ հայկական պատմամշակութային վայրեր, նշվում են մեծահամբավ հայորդիների և այլազգի մտավորականների հոբելյանները, իրականացվում դաստիարակչական, տեղեկատվական, ճանաչողական նշանակության ծրագրեր: Ուսանողական գիտական ընկերության կողմից բնագիտական ֆակուլտետում կազմակերպվեցին ակադեմիկոս, աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին նվիրված, իսկ բանասիրական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետներում՝ հայ նոր գրականության և մանկավարժության հիմնադիր Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովներ: ԳՊՀ ուսանողները մասնակցեցին Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության՝ մայր բուհի հիմնադրման 90-ամյակին նվիրված հոբելյանական նստաշրջանին՝ հանդես գալով զեկուցումներով: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախաձեռնությամբ 2009 թվականի հուլիսին Աղավնաձորում կազմակերպվեց «Միջմշակութային հաղորդակցություն և մշակույթների մերձեցում» խորագրով միջազգային ամառային դպրոց, որին ակտիվորեն մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ուսանողները և արժանացան պատվոգրերի: Մեր ուսանողները հաջողությամբ մասնակցել են նաև Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից Ծաղկաձորում կազմակերպված ձմեռային դպրոցի աշխատանքներին:

Համալսարանը համագործակցում է «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և «ՀԵՆԿ» հասարակական կազմակերպության հետ՝ համատեղ իրականացնելով «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագիրը: Համագործակցության շրջանակում կյանքի կոչվեց նաև «Բարի կամք» նախաձեռնությունը, և համալսարանի ուսանողները կատարեցին Գավառի մանկատան այգու բարեկարգման աշխատանքները, այցելեցին Գեղարքունիքի մարզի տարբեր դպրոցներ, գյուղական համայնքներ՝ նպաստելով սոցիալ-մշակութային կյանքի ակտիվացմանը: Բուհում ուսանողների ուժերով կազմակերպվեցին համակարգչային դասընթացներ՝ մարզի երիտասարդության համար:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում ապահովվել է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների փոխհամաձայնեցված և արդյունավետ գործունեությունը, իրականացվել հստակ կազմակերպված փաստաթղթաշրջանառություն, բոլոր դիմումները սահմանված կարգով ստացել են իրենց պատասխանները, անհրաժեշտ գրությունները ժամանակին ուղարկվել ՀՀ կրթության և գիտության նախարարություն և այլ մարմիններ:

Համալսարանի ողջ կոլեկտիվի աշխատանքը միտված է բուհի գործունեությունը ժամանակի մարտահրավերներին համապատասխանեցնելու, դինամիկ զարգացում ապահովելու նպատակների իրագործմանը:

ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

## 1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1.1.ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

| *Դասիչ* | *Մասնագիտության անվանումը* | *Աստիճան* |
|---|---|---|
| | **Բանասիրական ֆակուլտետ** | |
| 031000 | *Հայոց լեզու և գրականություն* | բակալավր, մագիստրոս |
| 032400 | *Ռուսաց լեզու և գրականություն* | բակալավր, մագիստրոս |
| 031300 | *Անգլերեն լեզու* | բակալավր, մագիստրոս |
| | **Բնագիտական ֆակուլտետ** | |
| 020200 | *Կենսաբանություն* | բակալավր, մագիստրոս |
| 020400 | *Աշխարհագրություն* | բակալավր, մագիստրոս |
| 020800 | *Բնապահպանություն և բնօգտագործում (էկոլոգիա)* | բակալավր, մագիստրոս |
| 230100 | *Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա* | բակալավր, մագիստրոս |
| | **Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ** | |
| 030400 | *Պատմություն (իրավունքի հիմունքներ)* | բակալավր, մագիստրոս |
| 051100 | *Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)* | բակալավր, մագիստրոս |
| 030500 | *Իրավագիտություն* | բակալավր, մագիստրոս |

## Տնտեսագիտական ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| 080300 | *Ֆինանսներ* | բակալավր, մագիստրոս |
| 081500 | *Հաշվապահական հաշվառում* | բակալավր, մագիստրոս |
| 080600 | *Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում* | բակալավր, մագիստրոս |

## Հեռակա ուսուցման ֆակուլտետ

| | | |
|---|---|---|
| 031000 | *Հայոց լեզու և գրականություն* | բակալավր, դիպլոմավորված մասնագետ |
| 032400 | *Ռուսաց լեզու և գրականություն* | բակալավր, դիպլոմավորված մասնագետ |
| 030400 | *Պատմություն (իրավունքի հիմունքներ)* | բակալավր, դիպլոմավորված մասնագետ |
| 020400 | *Աշխարհագրություն* | բակալավր, դիպլոմավորված մասնագետ |
| 051100 | *Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)* | բակալավր, դիպլոմավորված մասնագետ |

## 1.2. 2009/2010 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ)

| ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | Ընդունելության քննություններ | | | | Անցողիկ միավորներ | | Ընդամենը ընդունվածների քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մրցութային քննություններ | | | ոչ մրցութային քնն. | վճարովի | վճարովի (տտ) | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| ***1. Բանասիրական ֆակուլտետ*** | | | | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | Հլգ (բ) | Հլ (գ) | ՀժՊ(գ) կամ Օտլ(գ) | | 37.3 | 24.8 | 39 |
| Ռուսաց լեզու և գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | Հլ (գ) | | 27.3 | 25.8 | 16 |
| Անգլերեն լեզու | Անգլ(բ) | Անգլ(գ) | Հլ(գ) | | 38.3 | 24.6 | 26 |
| ***2.Բնագիտական ֆակուլտետ*** | | | | | | | |
| Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ) | - | - | - |
| Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ) | 16.5 | - | 3 |
| Բնապահպանություն և բնօգտագործում | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ) | - | - | - |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլ(գ) | 17.3 | - | 16 |
| ***3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ*** | | | | | | | |
| Պատմություն (իրավունքի հիմունքներ) | ՀժՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլ(գ) | | 26 | - | 15 |
| Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլ(գ) | Մ(գ) | | | 18.1 | 16.8 | 8 |
| Իրավագիտություն | Հլ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ(գ) | | 27.1 | - | 26 |
| ***4. Տնտեսագիտական ֆակուլտետ*** | | | | | | | |
| Ֆինանսներ | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 26 | - | 36 |
| Հաշվապահական հաշվառում | Մ(գ) | Հլ(գ) | Ա(գ) | | 24.3 | - | 16 |
| Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 25.8 | - | 5 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ***5. Հեռակա ուսուցման ֆակուլտետ*** | | | | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | Հլգ (բ) | Հլ (գ) | ՀժՊ(գ) կամ Օտլ(գ) | | | 25 | 35 |
| Ռուսաց լեզու և գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | Հլ (գ) | | | 24.5 | 26 |
| Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ) | | 16 | 38 |
| Պատմություն | ՀժՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլ(գ) | | | 24.5 | 71 |
| Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլ(գ) | Մ(գ) | | | | 16 | 59 |

# 1.3. 2009/2010 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| *ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ* | *Անվճար տեղեր* | *Վճարովի տեղեր* | | *ընդուն. թվա-կազմը* |
|---|---|---|---|---|
| | | *տարկետ. իրավ.* | *առանց տարկետ. իրավ.* | |
| *1. Բանասիրական ֆակուլտետ* | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 1 | - | 13 | 14 |
| Ռուսաց լեզու և գրականություն | 1 | - | 9 | 10 |
| Անգլերեն լեզու | 1 | - | 7 | 8 |
| *2.Բնագիտական ֆակուլտետ* | | | | |
| Կենսաբանություն | 1 | - | 8 | 9 |
| Աշխարհագրություն | 2 | - | 5 | 7 |
| Բնապահպանություն և բնօգտագործում | 1 | - | 5 | 6 |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | 1 | - | 11 | 12 |
| *3. Հումանիտար մասն. ֆակուլտետ* | | | | |
| Պատմություն (իրավունքի հիմունքներ) | 1 | 1 | 6 | 8 |
| Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | 1 | - | 1 | 2 |
| Իրավագիտություն | - | 4 | 18 | 22 |
| *4. Տնտեսագիտական ֆակուլտետ* | | | | |
| Ֆինանսներ | 2 | 1 | 10 | 13 |
| Հաշվապահական հաշվառում | 1 | 1 | 5 | 7 |
| Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում | 1 | 1 | 7 | 9 |
| ***Ընդամենը*** | **14** | **8** | **105** | **127** |

# 2.«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

| | | |
|---|---|---|
| 1 | Հակոբյան Հրանտ Խաչատուրի | *փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, խորհրդի նախագահ* |
| 2 | Հակոբյան Հրանուշ Հրանտի | *ՀՀ սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր* |
| 3 | Մելիքյան Արմեն Ռաֆիկի | *ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր* |
| 4 | Մուկուչյան Տիգրան Տոլիկի | *ՀՀ վարչական դատարանի նախագահ* |
| 5 | Ղազարյան Էդուարդ Մուշեղի | *ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտորի տեղակալ* |
| 6 | Շուքուրյան Յուրա Հայկի | *ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս* |
| 7 | Պողոսյան Նվեր Ղազարի | *ՀՀ Գեղարքունիքի մարզպետ* |
| 8 | Ղուկասյան Արտյուշա Կառլենի | *ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ* |
| 9 | Գևորգյան Էմիլ Սոսի | *ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի դեկան* |
| 10 | Խաչատրյան Աշոտ Հայկի | *ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության զարգացման և վերլուծության վարչության պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր* |
| 11 | Խաչատրյան Վաղարշակ Վահանի | *Կրթության ազգային ինստիտուտի դեպարտամենտի ղեկավար* |
| 12 | Հակոբյան Արսեն Սամվելի | *ՀՀ Կրթության և գիտության ԲՀՄԿ վարչության գլխավոր մասնագետ* |
| 13 | Բլբուլյան Լևոն Ռաֆիկի | *բանաստեղծ, լրագրող* |
| 14 | Կատվալյան Վիկտոր Լիպարիտի | *բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, խորհրդի քարտուղար* |
| 15 | Խլղաթյան Իշխան Երեմի | *տնտեսական գիտությունների թեկնածու, Գավառի պետական համալսարանի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի պրոֆեսոր* |

| | | |
|---|---|---|
| 16 | Մելիքյան Հենրիկ Աշոտի | *տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի վարիչ* |
| 17 | Կուտուզյան Նելլի Ալբերտի | *ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան* |
| 18 | Կարապետյան Վարազդատ Ազատի | *տնտեսական գիտությունների թեկնածու, Գավառի պետական համալսարանի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչ* |
| 19 | Ոսկանյան Անուշ Ավետիքի | *Գավառի պետական համալսարանի Աշխարհագրության ամբիոնի հայցորդ* |
| 20 | Վարդանյան Արսեն Վրույրի | *Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող* |
| 21 | Սուչյան Սիրարփի Սիմոնի | *Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող* |
| 22 | Դանոյան Լուսինե Գուրգենի | *Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանող* |
| 23 | Նավոյան Ռուստամ Լևիկի | *Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող* |
| *24* | Քիշոյան Հայարփի Լևիկի | *Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող* |

# 4.ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

| | | |
|---|---|---|
| 1 | ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ՝ **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** | ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| 2 | ԳՊՀ գիտական խորհրդի քարտուղար՝ **Ասոյան Թաթուլ Արտիկի** | բանասիրական գիտությունների թեկնածու, |
| 3 | ԳՊՀ գիտական խորհրդի անդամներ՝ **Ապրոյան Արսեն Հրաչիկի** | ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր, ասիստենտ |
| 4 | **Ղարիբյան Ալինա Ամբիկի** | Ակադեմիական քաղաքականության վարչության պետ, ասիստենտ |
| 5 | **Կատվալյան Վիկտոր Լիպարիտի** | Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ |
| 6 | **Ավագյան Մարտին Պատվականի** | Բնագիտական ֆակուլտետի դեկան, գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր |
| 7 | **Ղաջոյան Համլետ Գրիշայի** | Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ |
| 8 | **Ամիրխանյան Սամվել Գրիգորի** | Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 9 | **Կուտուզյան Նելլի Ալբերտի** | Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ |
| 10 | **Համբարձումյան Վազգեն Գուրգենի** | Հայոց լեզվի ամբիոնի վարիչ,բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր |
| 11 | **Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի** | Ընդհանուր գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր |
| 12 | **Գայանե Ֆրեդիկի Բդեյան** | Օտար լեզուների ամբիոնի վարիչ |
| 13 | **Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի** | Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու |
| 14 | **Հարությունյան Ռուբիկ Աղաբեկի** | Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ |
| 15 | **Սիմոնյան Արմեն Արշալույսի** | Կենսաբանության և բնապահպանության ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Բնական և էկոլոգիական գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական գիտ.դոկտոր, պրոֆեսոր |
| 16 | **Ավետիսյան Ֆրունզե Վազգենի** | Քիմիայի ամբիոնի վարիչ, քիմական գիտ. թեկ., ԳՊՀ պրոֆեսոր |
| 17 | **Մնացականյան Բորիս Պուտիկի** | Աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր |
| 18 | **Մելիքյան Հենրիկ Աշոտի** | Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր |
| 19 | **Քուրքչյան Լուսիկ Ներսեսի,** | Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր |
| 20 | **Հարությունյան Համլետ Մալխասի** | Պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր |

| | | |
|---|---|---|
| 21 | Մինասյան Կարլեն Արշալույսի | Իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր |
| 22 | Կարապետյան Վարազդատ Ազատի | Ֆինանսներ ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 23 | Ղուլոյան Հակոբ Մելսիկի | Հաշվապահական հաշվառում և աուդիտ ամբոինի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 24 | Զաքոյան Հրաչյա Սամվելի | Բիզնես կազմակերպում ամբոինի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 25 | Հերգնյան  Մարիամ Նորիկի | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 26 | Խաչատրյան Աշոտ Հայկի | Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր |
| 27 | Խնկիկյան Օնիկ Սարգսի | Պատմական գիտությունների դոկտոր |
| 28 | Ավագյան Արամայիս Ռոստոմի | Աշխարհագրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր |
| 29 | Մկրտչյան Սերգեյ Միքայելի | Կենսաբանական գիտ. դոկտոր |
| 30 | Տերտերյան Վահե Ժորայի | ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ |
| 31 | Կարապետյան Անուշ Արևշատի | Բանասիրական ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ |
| 32 | Խալաթյան Դիանա Հրաչիկի | Բնագիտական ֆակուլտետի  ուս. խորհրդի նախագահ |
| 33 | Մկրտչյան Աննա Հայկի | Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ |
| 34 | Խաչատրյան Շուշան Սպարտակի | Տնտեսագիտական ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ |

## 4. ԳՊՀ «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալակիրներ

| *Անուն, Ազգանուն* | *Մեդալի անվանումը և հանձնման տարեթիվը* |
|---|---|
| Հրանտ Խաչատուրի Հակոբյան | Ֆ. Նանսենի անվան ոսկե մեդալ 2006<br>Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալ 2007 |
| Հրանուշ Հրանտի Հակոբյան | Ժողովուրդների բարեկամության ոսկե մեդալ<br>Ֆ. Նանսենի անվ. ոսկե մեդալ 2006<br>ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալ<br>Վազգեն առաջինի ոսկե մեդալ<br>Ակսել Բակունցի անվան ոսկե մեդալ<br>ՄԱՆՑ-ի ոսկե մեդալ<br>Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի աստիճան 2008 |

## 5. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐ

| | *Անուն, ազգանուն* | *Երկիր* | *Դիպլոմի բնութագիրը* | *Հանձնման ժամկետը* | Դիպլոմի համարը |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Իվան Իվանչև** | Բուլղարիա | Հասարակական ակտիվ գործունեության համար | 19.05.2000 | 001 |
| 2. | **Ռիթա Պալյան** | ԱՄՆ | Հայրենասիրական-մարդասիրական արդյունավետ գործունեության համար | 25.05.2004 | 002 |
| 3. | **Ռոբերտ Ենգիբարյան** | Ռուսաստան | Գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների և բարեսիրական գործունեության համար | 29.04.2006 | 003 |
| 4. | **Արշակ Պողոսյան** | Գերմանիա | Կիրառական ֆիզիկայի բնագավառում ունեցած ներդրումների, ինչպես նաև հայ-գերմանական գիտական համագործակցության ծրագրերի իրականացման համար | 18.06.2008 | 004 |

# 6. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

| | Անուն, ազգանուն | Երկիր | Դիպլոմի բնութագիրը | Հանձնման ժամկետը | Դիպլոմի համարը |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Ժիրայր Նիշանյան** | ԱՄՆ | Հասարակական-հայրենասիրական, բարեգործական արդյունավետ գործունեության համար | 08.09.2007 | 01 |
| 2. | **Վահան Ափրոյան** | ՌԴ | Հայրենասիրական-մարդասիրական գործունեության համար | 30.06.2008 | 02 |

# 7. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Ֆակուլտետ, մասնագիտություն | Կուրս | Կրթաթոշակի անվանումը |
|---|---|---|---|---|
| 1.<br>2.<br>3.<br>4.<br>5.<br>6.<br>7.<br>8. | Հակոբյան Տաթևիկ Խաչատուրի<br>Ստեփանյան Էմմա Ռուբենի<br>Վարդանյան Արսեն Վրույրի<br>Կարապետյան Անուշ Արևշատի<br>Հարությունյան Հասմիկ Սուրիկի<br>Վարդանյան Ռուզան Արտակի<br>Ռափյան Հայարփի Օնիկի<br>Սաղաթելյան Արծվի Արշակի | Բանասիրական, Հայոց լեզու և գրականություն | 1-ին<br>1-ին<br>2-րդ<br>3-րդ<br>3-րդ<br>3-րդ<br>4-րդ<br>4-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 9.<br>10.<br>11.<br><br>12.<br>13. | Առաքելյան Մարիամ Միշայի<br>Բաղդասարյան Վիկտորյա<br>Մնացականի<br>Ավետիսյան Լիլիթ Արայի<br>Իսրայելյան Ռուզան Մարատի<br>Գևորգյան Նունե Սամվելի | Բանասիրական, Անգլերեն լեզու<br><br>մագիստրատուրա | 2-րդ<br>2-րդ<br><br>2-րդ<br>2-րդ<br>1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 14.<br>15. | Ղազարյան Սոնյա Սամվելի<br>Արղյան Վարվառա Մնացականի | Բանսաիրական, Ռուսաց լեզու և գրականություն | 1-ին<br>2-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 16. | Դեղոյան Լիլիթ Ռաֆիկի | Բանսաիրական, Ռուսաց լեզու և գրականություն | 3-րդ | Թուրփանջյան հիմնադրամ |
| 17. | Աֆրիկյան Սեդա Խաչիկի | Բանասիրական, Անգլերեն լեզու | 3-րդ | Թուրփանջյան հիմնադրամ |
| 18. | Ավետիսյան Նարեկ Ապրեսի | Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր | 3-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 19. | Բալագոզյան Շուշանիկ Յուրիկի | Բնագիտական, Կենսաբանություն | 3-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 20. | Հունանյան Սևակ Արթուրի | Բնագիտական, Ինֆ. և հաշվ. տեխ. | 1-ին | Ժիրայր Նիշանյան |

| | *Ազգանուն, անուն, հայրանուն* | *Ֆակուլտետ, մասնագիտություն* | *Կուրս* | *Կրթաթոշակի անվանումը* |
|---|---|---|---|---|
| 21. | Գասպարյան Մերի Գեղամի | Բնագիտական, Կենսաբանություն | 1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 22. | Մարգարյան Մարիամ Սպարտակի | Բնագիտական, Աշխարհագրություն | 1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 23. | Արամյան Սիրանուշ  Վարդանի | Բնագիտական, Կենսաբանություն | 3-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 24. | Արևշատյան Սիփան Սուրիկի | Բնագիտական, Ինֆ. և հաշվ. տեխ. | Մագ. 1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 25. | Դարբինյան Նաիրի Հենրիկի | Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր | 3-րդ | Ռոբերտ Ենգիբարյան |
| 26. | Արամյան Սիրանուշ Վարդանի | Բնագիտական, Կենսաբանություն | 3-րդ | Ռոբերտ Ենգիբարյան |
| 27. | Մուսոյան Գոհար | Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր | 3-րդ | Վահան Ափրոյան |
| 28. | Վանեցյան Սոս Արամայիսի | Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր | 2-րդ | Վահան Ափրոյան |
| 29. | Հովհաննիսյան Նաիրի | Բնագիտական, Բնապահպանության | 3-րդ | Վահան Ափրոյան |
| 30. | Մուրադյան Մայրանուշ Կառլենի | Հումանիտար մասնագիտ., Իրավագիտություն | 3-րդ | Թուրփանջյան հիմնադրամ, Ռ. Ենգիբարյան |
| 31. | Մանուկյան Լուսինե Աշոտի | | 3-րդ | Վահան Ափրոյան Ռ. Ենգիբարյան |
| 32. | Աթոյան Սերգո | | 2-րդ | Վահան Ափրոյան |
| 33. | Յազերյան Սոնա | | 2-րդ | Վահան Ափրոյան |
| 34. | Հարությունյան Հարություն Սուրիկի | Հումանիտար մասնագիտ., Պատմ. /իրավ. հիմ./ | մագ. 1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 35. | Վարդանյան Շուշան | Հումանիտար մասնագիտ., Պատմ. /իրավ. հիմ./ | 3-րդ | Վահան Ափրոյան |
| 36. | Ղաջոյան Արմինե Սամվելի | Հումանիտար մասնագ., Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա | 3-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 37. | Աֆրիկյան Տաթևիկ Ռազմիկի | Տնտեսագիտական, Ֆինանս և վարկ | 1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 38. | Կնյազյան Նարեկ Ալբերտի | | 1-ին | |
| 39. | Գևորգյան Աշխեն Աշոտի | | 2-րդ | |
| 40. | Խաչատրյան Շուշան Սպարտակի | | 2-րդ | |
| 41. | Կևեյան Արմեն Վահրամի | | 2-րդ | |
| 42. | Ղազանչյան Քրիստինե Նորիկի | | 2-րդ | |
| 43. | Վանեցյան Արթուր Արամայիսի | | 2-րդ | |
| 44. | Բաղոյան Քրիստինե Մարտիկի | | 4-րդ | |
| 45. | Խաչատրյան Համեստ Սամվելի | | 4-րդ | |
| 46. | Մուրադյան Մարգարիտա | | 4-րդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *Ազգանուն, անուն, հայրանուն* | *Ֆակուլտետ, մասնագիտություն* | *Կուրս* | *Կրթաթոշակի անվանումը* |
| 47. | Սալչյան Արման Աշոտի | Տնտեսագիտական, Ֆինանս և վարկ | 4-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 48. | Սուչյան Սիրարփի | Տնտեսագիտական, Ֆինանս և վարկ | 2-րդ | Վահան Ափրոյան |
| 49.<br>50.<br>51.<br>52. | Հունանյան Օֆելյա Արթուրի<br>Ղազարյան Էդվարդ Սարգսի<br>Բոստանչյան Սարգիս Վարդանի<br>Սուչյան Ռոզա Սիմոնի | Տնտեսագիտական, Բիզնեսի կազմակերպում | 2-րդ<br>2-րդ<br>4-րդ<br>4-րդ | Ժիրայր Նիշանյան |
| 53.<br>54.<br>55. | Խաչատրյան Սուսան Սպարտակի<br>Չարվադարյան Հեղինե Սամվելի<br>Սուչյան Արմեն Տիգրանի | Տնտեսագիտական, Հաշվապահական հաշվառում | 1-ին<br>1-ին<br>1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 56.<br>57. | Խաչատրյան Սուսան<br>Շահբազյան Աննա | Տնտեսագիտական, Հաշվապահական հաշվառում | 2-րդ<br>4-րդ | Վահան Ափրոյան |
| 58. | Խանդանյան Նաիրա Մելիքի | Տնտեսագիտական, Մագիստրատուրա Հաշվապահական հաշվառում | 1-ին | Ժիրայր Նիշանյան |
| 59. | Բադալյան Հարություն | Տնտեսագիտական, Մագիստրատուրա Հաշվապահական հաշվառում | 1-ին | Վահան Ափրոյան |

# Ց. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐԸ) ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

| **Ֆակուլտետ, ամբիոններ** | **Պրոֆե-սորներ** | **Դոցենտ-ներ** | **Ասիս-տենտներ** | **Դասա-խոսներ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|
| **Բանասիրական** | | | | | |
| Հայոց լեզվի | 1 | 2 | - | 6 | 9 |
| Ընդհանուր գրականության | 2 | 1 | 1 | 2 | 6 |
| Ռուսաց լեզվի | 1 | 2 | 2 | 3 | 8 |
| Օտար լեզուների | - | 2 | - | 11 | 13 |
| **Բնագիտական** | | | | | |
| Կենսաբանության և էկոլոգիայի | 6 | 10 | 3 | 3 | 22 |
| Աշխարհագրության | 4 | 1 | - | - | 5 |
| Տեխնիկական գիտությունների | 1 | 5 | 1 | 3 | 10 |
| Ֆիզ. մաթեմատիկայի | 2 | 3 | - | 1 | 6 |
| Քիմիայի | 2 | 1 | - | - | 3 |
| **Հումանիտար մասնագիտությունների** | | | | | |
| Իրավագիտության | 4 | 4 | 4 | 5 | 17 |
| Պատմության | 2 | 5 | 4 | 1 | 12 |
| Հասարակական գիտությունների | 4 | 6 | 1 | 9 | 20 |
| **Տնտեսագիտության** | | | | | |
| Ֆինանսներ և վարկ | - | 4 | 2 | 3 | 9 |
| Հաշվապ. հաշվ. և աուդիտ | 1 | 4 | - | 5 | 10 |
| Բիզնեսի կազմակերպում | - | 3 | 1 | 6 | 10 |
| **Համահամալսարանական** | | | | | |
| Ֆիզ. դաստ. և սպորտի | - | - | - | 3 | 3 |
| **Ընդամենը** | **30** | **53** | **19** | **61** | **163** |



# Գ. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ

## Գ.1.Բակալավրիատ

| Ֆակուլտետ, մասնագիտություն | *Ուսանողների թիվը* | | | | *Ընդա-մենը* |
|---|---|---|---|---|---|
| | I կուրս | II կուրս | III կուրս | IV կուրս | |
| **Բանասիրական** | | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 35 | 27 | 24 | 26 | *112* |
| Ռուսաց լեզու և գրականություն | 21 | 20 | 21 | 27 | *89* |
| Անգլերեն լեզու | 30 | 45 | 31 | 19 | *125* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *86* | *92* | *76* | *72* | *326* |
| **Բնագիտական** | | | | | |
| Կենսաբանություն | 15 | 12 | 16 | 16 | *59* |
| Բնապահպանություն և բնօգտագործում | 20 | 17 | 11 | 18 | *66* |
| Աշխարհագրություն | 11 | 12 | -- | 12 | *35* |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | 27 | 35 | 35 | 31 | *128* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *73* | *76* | *62* | *77* | *288* |
| **Հումանիտար մասնագիտությունների** | | | | | |
| Իրավագիտություն | 35 | 46 | 55 | 43 | *179* |
| Պատմություն (իրավունքի հիմունքներ) | 20 | 23 | 15 | 17 | *75* |
| Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | 17 | 21 | 5 | 15 | *58* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *72* | *90* | *75* | *75* | *312* |
| **Տնտեսագիտական** | | | | | |
| Ֆինանսներ և վարկ | 39 | 43 | 27 | 34 | *143* |
| Հաշվապահական հաշվառում և աուդիտ | 44 | 27 | 20 | 25 | *116* |
| Բիզնեսի կազմակերպում | 19 | 31 | 17 | 28 | *95* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *102* | *101* | *64* | *87* | *354* |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***333*** | ***359*** | ***277*** | ***311*** | ***1280*** |

## 9.2.Մագիստրատուրա

| Ֆակուլտետ, մասնագիտություն | *Ուսանողների թիվը* | | *Ընդա-մենը* |
|---|---|---|---|
| | I կուրս | II կուրս | |
| **Բանասիրական** | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 4 | - | *4* |
| Ռուսաց լեզու և գրականություն | 7 | - | *7* |
| Անգլերեն լեզու | 11 | - | *11* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *22* | *-* | *22* |
| **Բնագիտական** | | | |
| Կենսաբանություն | 4 | - | *4* |
| Բնապահպանություն և բնօգտագործում | 3 | - | *3* |
| Աշխարհագրություն | 3 | - | *3* |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | 9 | - | *9* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *19* | *-* | *19* |
| **Հումանիտար մասնագիտությունների** | | | |
| Իրավագիտություն | 16 | - | *16* |
| Պատմություն (իրավունքի հիմունքներ) | 4 | - | *4* |
| Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | 3 | - | *3* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *23* | *-* | *23* |
| **Տնտեսագիտական** | | | |
| Ֆինանսներ և վարկ | 10 | - | *10* |
| Հաշվապահական հաշվառում և աուդիտ | 7 | - | *7* |
| Բիզնեսի կազմակերպում | 3 | - | *3* |
| *Ընդամենը ֆակուլտետում* | *20* | *-* | *20* |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***84*** | ***-*** | ***84*** |

## 9.3.Հեռակա ուսուցման ֆակուլտետում

| Ֆակուլտետ, մասնագիտություն | Ուսանողների թիվը | | | | | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | բակա-լավր | 6 ամյա | | | | | |
| | I կուրս | II կուրս | III կուրս | IV կուրս | V կուրս | VI կուրս | |
| Հայոց լեզու և գրականություն | 34 | 42 | 29 | 39 | 35 | 29 | 208 |
| Ռուսաց լեզու և գրականություն | 24 | 21 | 19 | 30 | 22 | 32 | 148 |
| Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | 29 | 31 | 17 | 33 | 32 | 34 | 176 |
| Պատմություն (իրավունքի հիմունքներ) | 50 | 52 | 33 | 48 | 36 | 31 | 250 |
| Աշխարհագրություն | 28 | 35 | 19 | 37 | 25 | 21 | 165 |
| **Ընդամենը** | 165 | 181 | 117 | 187 | 150 | 147 | 947 |

# 10. ԾՐԱԳՐԱՎԱՐՏՆԵՐ

## 10.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Ֆակուլտետ, մասնագիտություն | 2008թ. | | | 2009թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բակալավր (գերազանցության դիպլոմով) | այդ թվում նախորդ տարիների | Ընդամենը | բակալավր (գերազանցության դիպլոմով) | այդ թվում նախորդ տարիների | Ընդամենը |
| **Բանասիրական** | | | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | 21(4) | - | 21(4) | 26(7) | | 26 |
| Ռուսաց լեզու և գրականություն | 20(0) | - | 20(0) | 27(1) | 1 | 27 |
| Անգլերեն լեզու | 25 (6) | - | 25 (6) | 19 (2) | | 19 |
| **Բնագիտական** | | | | | | |
| Կենսաբանություն | 13 (1) | - | 13 (1) | 17(2) | 3 | 17 |
| Բնապահպանություն | 15 (1) | - | 15 (1) | 21(1) | 4 | 21 |
| Աշխարհագրություն | 7 (1) | - | 7 (1) | 15(2) | 3 | 15 |
| Հաշվ. մեքենաներ, համալիր. և ցանցեր | 29 (1) | - | 29 (1) | 31(1) | 1 | 31 |
| **Հումանիտար մասն.** | | | | | | |
| Իրավագիտություն | 33(6) | - | 33(6) | 42(9) | 2 | 42 |
| Պատմություն | 9(3) | - | 9(3) | 17(1) | - | 17 |
| Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա | 14(3) | - | 14(3) | 11 | - | 11 |
| **Տնտեսագիտական** | | | | | | |
| Ֆինանսներ և վարկ | 28(5) | - | 28(5) | 31(6) | 4 | 31 |
| Հաշվ. հաշվառում և աուդիտ | 23(5) | - | 23(5) | 25(2) | 5 | 25 |
| Բիզնեսի կազմակերպում | 19(2) | - | 19(2) | 25(3) | - | 25 |
| ***Ընդամենը*** | 256(38) | | 256(38) | 307 (37) | 23 | 307 |

## 10.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Ֆակուլտետ, մասնագիտություն | 2008թ. | | | 2009թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | դիպլոմավորված մասնագետ (գերազանցության դիպլոմով) | այդ թվում՝ նախորդ տարիների | Ընդամենը | դիպլոմավորված մասնագետ (գերազանցության դիպլոմով) | այդ թվում՝ նախորդ տարիների | Ընդամենը |
| Հայոց լեզու և գրականություն | 27 (3) | - | 27 (3) | 29 (2) | 2 | 29 (2) |
| Ռուսաց լեզու և գրականություն | 22 (3) | 3 | 22 (3) | 31 (2) | 3 | 31 (2) |
| Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա | 22 (4) | - | 22 (4) | 28 | - | 28 |
| Պատմություն | 37 | 4 | 37 | 26 | 6 | 26 |
| Աշխարհագրություն | 20 | 7 | 20 | 14 | 1 | 14 |
| **Ընդամենը** | 128 (10) | 14 | 128 (10) | 128 (4) | 12 | 128(4) |

# 1 1. ՊՐԱԿՏԻԿԱ

| N | Ֆակուլտետ<br>Ամբիոններ | Կուրս | Պրակտիկայի<br>անվանումը | Տևողությունը շաբաթներով | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Բանասիրական** | | | | |
| | Հայոց լեզու և գրականություն | III | մանկավարժական | 5 | Գեղարքունիքի մարզի դպրոցներ |
| | Ռուսաց լեզու և գրականություն | IV | մանկավարժական | 6 | Գեղարքունիքի մարզի դպրոցներ |
| | Անգլերեն լեզու | IV | մանկավարժական | 4 | Գեղարքունիքի մարզի դպրոցներ |
| 2 | **Բնագիտական** | | | | |
| | Կենսաբանություն | I<br>II<br>III<br>IV | ուսումնական<br>ուսումնական<br>արտադրական<br>մանկավարժական | 4<br>3<br>3<br>4 | Գավառի մերձակա տարածք<br>Գավառի մերձակա տարածք<br>Գավառի մերձակա տարածք<br>ՀՀ հանրակրթական դպրոցներ |
| | Բնապահպանություն | I<br>II<br>III<br>IV | ուսումնական<br>ուսումնական<br>արտադրական<br>մանկավարժական<br>արտադրական | 4<br>3<br>3<br>2<br>2 | Գավառագետի ափամերձ տարածք<br>Գավառի մերձակա տարածք<br>Գավառի մերձակա տարածք<br>ՀՀ հանրակրթական դպրոցներ<br>ՀՀ մարզպետարաններ, «Սևան»ԱՊ |
| | Աշխարհագրություն | I<br>II<br>IV | ուսումնական<br>ուսումնական<br>մանկավարժական | 5<br>5<br>4 | Գավառի մերձակա տարածք Գավառ-Դիլիջան-Հաղարծին-Գոշավանք-Գավառ<br>Գավառի մերձակա տարածք Գավառ-Սևան-Շորժա-Վարդենիս-Մարտունի-Գավառ<br>ՀՀ հանրակրթական դպրոցներ |
| | Հաշվ. մեքենաներ, համալիր. և ցանցեր | III<br>IV | արտադրական<br>նախաավարտական | 4<br>4 | Գավառի պետ. համալսարան, ”Ռադիո” ՊՓԲԸ,<br>Գավառի պետ. համալսարան |
| 3 | **Հումանիտար մասն.** | | | | |
| | Իրավագիտություն | IV | նախադիպլոմային | 8 | Ընդհանուր իրավասության դատարաններ, մարզային դատախազություն, ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ ոստիկանության Երևանի քաղաքային վարչություն |
| | Պատմություն | IV<br>III | մանկավարժական<br>ուսումնական | 8<br>3 | ՀՀ հանրակրթական դպրոցներ,<br>Գավառի երկրագիտական թանգարան |
| | Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա | IV | մանկավարժական | 6 | Գեղարքունիքի մարզի դպրոցներ<br>Գավառի ուսուցողական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | III | ուսումնական | 4 | կենտրոն |
| 4 | **Տնտեսագիտական** | | | | |
| | Ֆինանսներ և վարկ | III<br>IV<br>V | ուսումնական<br>արտադրական<br>նախադիպլոմային | 6<br>8<br>8 | ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, բանկային համակարգ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ Տարածքային կառավարման և ՏԻՄ մարմիններ, Վիճակագրական տեսչություն, Առևտրաարդյունաբերական պալատ, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| | Հաշվ. հաշվառում և աուդիտ | III<br>IV<br>V | ուսումնական<br>արտադրական<br>նախադիպլոմային | 6<br>8<br>8 | Վիճակագրական տեսչություն, Տարածքային կառավարման և ՏԻՄ մարմիններ Առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հակային տեսչություն, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ «Քյավառ» աուդիտ, բանկային համակարգ, Զբաղվածության մարզային կենտրոն |
| | Բիզնեսի կազմակերպում | III<br>IV | ուսումնական<br>արտադրական | 6<br>8 | Առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հակային տեսչություն, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ |
| 5 | **Հեռակա ուսուցման** | | | | |
| | Հայոց լեզու և գրականություն | VI | մանկավարժական | 8 | ՀՀ հանրակրթական դպրոցներ |
| | Ռուսաց լեզու և գրականություն | VI | մանկավարժական | 8 | ՀՀ հանրակրթական դպրոցներ |
| | Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/ | VI | մանկավարժական | 8 | ՀՀ հանրակրթական դպրոցներ |
| | Պատմություն /իրավունքի հիմունքներ/ | VI | մանկավարժական | 8 | ՀՀ հանրակրթական դպրոցներ |
| | Աշխարհագրություն | VI | մանկավարժական | 8 | ՀՀ հանրակրթական դպրոցներ |

# 12. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Ֆակուլտետ, ամբիոններ | Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուց. թեզիսներ |
|---|---|---|---|---|---|---|
| **Բանասիրական** | | | | | | |
| Հայոց լեզվի | | | | 3 | 6 | |
| Ընդհանուր գրականության | | 1 | | | 18 | |
| Օտար լեզուների | | | | | 1 | |
| Ռուսաց լեզվի և գրականության | | | | | 8 | |
| **Բնագիտական** | | | | | | |
| Կենսաբանության և էկոլոգիայի | | | 1 | 2 | 19 | 5 |
| Աշխարհագրության | | 1 | 1 | | 18 | |
| Ինֆորմատիկայի և հաշվողական տեխն. | | | | 4 | 9 | |
| Ֆիզ.մաթեմատիկայի | | | | | 5 | |
| Քիմիայի | | | | | 4 | |
| **Հումանիտար մասնագիտությունների** | | | | | | |
| Իրավագիտության | | 1 | | | 10 | 2 |
| Պատմության | | 2 | | 1 | 14 | |
| Հասարակական գիտությունների | | | 2 | | 13 | |
| **Տնտեսագիտության** | | | | | | |
| Ֆինանսներ և վարկ | | | | | 3 | |
| Հաշվապահական հաշվառման և աուդիտ | | 1 | | | 6 | |
| Բիզնեսի կազմակերպում | | | | 1 | - | |
| **Ընդամենը** | | **6** | **4** | **11** | **134** | **7** |

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## *Գավառի պետական համալսարանի միջազգային կապերը և փոխանակման ծրագրերը*

2008-2009 ուս. տարում Գավառի պետական համալսարանը ERASMUS MUNDUS EXTERNAL COOPERATION WINDOW ծրագրի շրջանակներում շարունակել է համագործակցությունը ծրագրի մասնակից եվրոպական բուհերի հետ՝ երկու ուսանողների ուսումը շարունակելով Սալոնիկի Ալեքսանդրի անվան տեխնիկական համալսարանում (ATEI OF THESSALONIKI) և մեկ ուսանողինը՝ Ռեզեկնեի համալսարանում (REZEKNE'S AUGSTSKOLA):

2008-2009 ուս.տարում մագիստրոսի կրթական ծրագրով սովորող 1 ուսանող 20 ամսով մեկնել է Հունաստանի ATEI OF THESSALONIKI համալսարան ուսումը շարունակելու համար: Օտար լեզուների ամբիոնի 1 դասախոս նշված ուս.տարում իր հետազոտական աշխատանքը կատարել է Իտալիայի TUSCIA համալսարանում և Պատմության ամբիոնի մեկ դասախոս՝ Գերմանիայում, Իրավագիտության ամբիոնի 2 դասախոս վերապատրաստման դասընթաց են անցել ԱՄՆ-ում: Եղել են նաև այլ գործուղումներ:

2008-2009 ուս.տարում Գավառի պետական համալսարանը շարունակել է համագործակցությունը Վրաստանի Թելավիի, Թբիլիսիի և Բաթումիի պետական համալասարանների հետ:

Գավառի պետական համալսարանը համագործակցում է ՀՀ միջբուհական կոնսորցիումի անդամ բուհերի և կազմակերպությունների հետ.

- Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
- Արցախի պետական համալսարան
- Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
- Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
- Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտ
- Գորիսի պետական համալսարան
- ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտ

# ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մասնագետների և ուսանողների արտասահմանյան գործուղումներ

| N | Երկրներ | ԲՈՒՀ | Մասնագետներ | Ուսանողներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հունաստան | ATEI of The Saloniki | | 2 (բակալավր)<br>2 (մագիստրոս) | 3 |
| 2 | Լատվիա | Rezekne's Augstskola | | 1 | 1 |
| 3 | Իտալիա | Tuscia | 1 | | 1 |
| 4 | ԱՄՆ | San Francisco, Berkly | 2 | | 2 |
| 5. | Գերմանիա | International research school | 1 | | 1 |

*2008/2009 ուսումնական տարում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները գործուղվել են հետևյալ արտասահմանյան գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ ու մասնակցել գիտաժողովների:*

- **Հակոբյան Հրանուշ Հրանտի**

  2008-2009 թ.-ի ընթացքում Լատինական Ամերիկայի երկրներ, Եվրոպական և այլ երկրների գործուղումներ, գիտաժողովներ տարբեր կառավարական, գիտակրթական հաստատություններում:
- **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի**
  1. 2009թ. մարտ - ԱՄՆ Սան Ֆրանցիսկոյի և Բերկլիի համալսարաններ,
  2. 2009թ. սեպտեմբեր – Մակեդոնիայի Հանրապետութան Սկոպիե քաղաքում «Թափանցիկ կրթական համակարգեր և կոռուպցիայի դեմ պայքարին խնդիրներ» թեմայով գիատաժողով:
- **Ապրոյան Արսեն Հրաչիկի**

  2009թ. մարտ-ապրիլ- ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի Սան Ֆրանցիսկոյի, Բերկլիի համալսարաններ, Հաստինգսի, Սան Խոսեի իրավունքի բարձրագույն դպրոցներ:
- **Բդեյան Գայանե Ֆրեդիկի**

  2009թ. փետրվար-մարտ – Իտալիայի Հանրապետության Վիտերբոյի Տուշցիա համալսարան:
- **Հակոբյան Արսեն Աշոտի**

  22.09.2008-05.10.2008 Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ-Պետերբուրգ Անկախ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն (CISK), Երևան, Նոր սոցիալական հետազոտություններ, Գերմանիա, Հենրիխ Բյոլ հիմնադրամ, Միջազգային հետազոտական դպրոց:

  27.11.2008-30.11.2008 Շվեդիա-Սամլո, Կովկասագիտական միջազգային կոնֆերանս:

  30.11.2008-12.12.2008 Լեհաստան, Վարշավա-Վրոդսլավ, լեհ-կովկասյան և կովկաս-լեհական առնչություններ. մշակույթ, պատմություն, քաղաքականություն:

  30.03.2009-30.09.2009 Ֆրանսիա, Անժեր, «Erasmus Mundus External Cooperation Window» մասնագիտական վերապատրաստում:
- **Փանոսյան Հովիկ Հարությունի**

  16.11.2009-25.11.2009 Ճապոնիա, Սիզուոկա ISSM միջազգային կոնֆերանս (զեկուցում):

  15.01.2009-07.04.2009 Նորվեգիա, Բերգենի համալսարան, գիտահետազոտական աշխատանք:

  28.06.2009-02.07.2009 Շվեդիա, Գյոթեբերգ, FEMS Congress (զեկուցում):

  10.07.2009-10.08.2009 Իտալիա, Նեապոլ, FEBS Short Felloship գիտահետազոտական աշխատանք:

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Կատվալյան Վիկտոր Լիպարիտի,*
*բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Դեկանի տեղակալ՝ *Բադալյան Մարինե Միքայելի*

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

| Դասիչ | Մասնագիտություն |
|---|---|
| 031000 | Հայոց լեզու և գրականություն |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն |
| 031300 | Անգլերեն լեզու |

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության, մանկավարժության բակալավրի

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոսի

Ուսանողների թիվը՝ 348

Շրջանավարտների թիվը՝ 72 (բակալավր)

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2008–2009 ուսումնական տարում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում ուսումնական գործընթացը ընթացել է համաձայն ուսումնական պլանների և գիտական խորհրդի կողմից հաստատված ժամանակացույցի: Նախատեսված կրթական բոլոր ծրագրերը լիովին իրականացվել են, զուգահեռաբար կատարվել են գիտամեթոդական, դաստիարակչական, հետազոտական բնույթի որոշակի աշխատանքներ:

Ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքներով ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 70 տոկոս, իսկ գարնանային քննաշրջանի արդյունքներով՝ 68,55 տոկոս: Ընդհանուր ցուցանիշի այս նվազումը, սակայն, չի նշանակում, թե ֆակուլտետում տեղի է ունեցել առաջադիմության իրական անկում: Այսպես, ձմեռային քննաշրջանի համեմատությամբ երկրորդ կուրսերի առաջադիմությունը աճել է ինը տոկոսով (66,30 և 75,35), երրորդ կուրսերինը՝ տասը տոկոսով (57,89 և 68,42): Իրենց ցուցանիշները բարելավել են ինը խմբերից չորսը (Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 2–րդ, Անգլերեն լեզու բաժնի 2–րդ, Հայոց լեզու և գրականություն բաժնի 3–րդ, Անգլերեն լեզու բաժնի 3-րդ կուրսեր), կայուն առաջադիմություն են պահպանում խմբերից երկուսը (Հայոց լեզու և գրականություն բաժնի 2–րդ և Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 3–րդ կուրսեր): Միայն առաջին կուրսի երեք խմբերում է, որ տեղի է ունեցել առաջադիմության անկում (Հայոց լեզու և գրականություն բաժին՝ 80 և 78,79, Անգլերեն լեզու բաժին՝ 90 և 51,72, Ռուսաց լեզու և գրականություն բաժին՝ 57,14 և 45,0): Առաջին կուրսերի ընդհանուր առաջադիմությունը ձմեռային քննաշրջանի 77,91 տոկոսի դիմաց գարնանային քննաշրջանում կազմել է 60,97 տոկոս, ինչը և պատճառ է դարձել ֆակուլտետի ընդհանուր առաջադիմության անկման: Առաջին կուրսեցի եկող սերունդների հետ հարկ է լինելու ավելի ջանադիր աշխատել, գիտելիքների մատուցման սովորական մեթոդներին զուգահեռ պետք է ուսանողներին սովորեցնել սովորելու արվեստը, անհրաժեշտ է ավելի ու ավելի հանգամանորեն երեկվա աշակերտներին բացատրել կրեդիտային համակարգի յուրահատկությունները: Առաջին կուրսեցիների անկայուն առաջադիմության որոշ պատճառներ արտաքուհական բնույթ ունեն: Այդպիսիք են, օրինակ, դպրոցական ծրագրերի ու դասագրքերի անկատարությունը, դպրոցական կրթամակարդակի ակնհայտ անկումը, բուհական ընդունելության քննությունների ներկայումս գործադրվող խիստ անկատար եղանակը, որը թույլ է տալիս խաչեր նկարել իմացող ցանկացած շրջանավարտի դառնալ ուսանող, և արդյունքում ձևավորվում են ունակությունների և գիտելիքների տեսակետից խայտաբղետ ակադեմիական խմբեր, ու քանի որ ընդամենը խաչեր նկարել իմացող և ուսանող դարձած պատանիների ու աղջիկների մեծ մասը ցանկանում է սովորել, սովորաբար գործադրվում են լրացուցիչ ջանքեր՝ դպրոցի բացթողումը լրացնելու համար: Փաստորեն, նախաբուհական կրթական համակարգի թերությունները ցայտուն դրսևորվում են հենց առաջին կուրսում, և բուհական համակարգը այսօր ինքնաբերաբար ստանձնել է նաև այդ թերությունների վերացման պատասխանատվությունը: Ու պետք է նշել, որ ջանադիր աշխատանքի դեպքում դրական արդյունքները չեն ուշանում:

Երկրորդ և երրորդ կուրսերում հիմնականում նկատելի է առաջադիմության տոկոսի աճ: Ուսման մակարդակը զգալիորեն բարձրացել է ռուսական բաժնի խմբերում, ինչը մեծապես

պայմանավորված է Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ակտիվ և ջանադիր գործունեությամբ: Ամբիոնը տարբեր խմբերում կազմակերպել է հանդիպումներ ծնողների հետ, անցկացրել լրացուցիչ պարապմունքներ ու խորհրդատվություններ հետ մնացող ուսանողների հետ, կազմակերպել ուսանողական գիտական կոնֆերանսներ, բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ: Դրական տեղաշարժ է նկատվել նաև Անգլերեն լեզու բաժնի երրորդ կուրսում, որը նախորդ կիսամյակում ունեցավ առաջադիմության բավականին ցածր ցուցանիշ: Ողջ կիսամյակի ընթացքում այս խումբը եղել է դեկանատի և Օտար լեզուների ամբիոնի ուշադրության կենտրոնում, և գարնանային քննաշրջանում առկա է առաջադիմության նկատելի աճ: Բանասիրական ֆակուլտետում իր արդյունքներով լավագույնը մնում է Հայոց լեզու և գրականություն բաժինը. այստեղ առաջադիմության ամենացածր ցուցանիշը առաջին կուրսի 78,79 տոկոսն է, իսկ այս բաժնի երրորդ կուրսը հանդես է բերել ֆակուլտետում առաջադիմության լավագույն արդյունքը՝ 92 տոկոս:

Գարնանային քննաշրջանի արդյունքներով՝ ֆակուլտետի 248 ուսանողներից 41–ը քննությունները հանձնել են միայն «գերազանց» գնահատականներով, 87–ը՝ «գերազանց» և «լավ» գնահատականներով, 42–ը՝ խառը գնահատականներով: 42 ուսանողներ էլ վաստակել են անբավարար գնահատականներ:

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուսանողներից ութը ազատվել են համալսարանից, հինգ ուսանողներ հեռացվել են անբավարար առաջադիմության և անհարգելի բացակայության պատճառով, տարկետում են վերցրել ութ ուսանողներ, և այլ ֆակուլտետներ են տեղափոխվել տասներեք ուսանողներ: Իրենց ուսանողական իրավունքները վերականգնել և այլ ֆակուլտետներից բանասիրական ֆակուլտետ են տեղափոխվել հինգ ուսանողներ:

2008-2009 ուսումնական տարում պետական ավարտական քննություններին մասնակցեցին ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 73 ուսանողներ, որոնցից 24–ը վաստակեցին միայն «գերազանց» գնահատականներ, իսկ 10–ը արժանացան գերազանցության դիպլոմի: Ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողներից մեկը ստացել է անբավարար գնահատական, և այդպիսով ֆակուլտետն ունեցավ 72 շրջանավարտ: Հայոց լեզվի և Հայ գրականության, Ռուսաց լեզվի և Ռուս գրականության պետական ավարտական քննությունների հանձնաժողովները և դրանց նախագահները հիմնականում գոհ էին ուսանողների բանավոր պատասխաններից և ավարտական աշխատանքների որակից, ինչը չի կարելի ասել Անգլերեն լեզու բաժնի շրջանավարտների մասին: Օտար լեզուների ամբիոնում Անգլերեն լեզու առարկայի պետական քննությունից հետո տեղի ունեցած նիստում ամբիոնի վարիչը և դասախոսական կազմը ինքնաքննադատաբար վերլուծել են քննության ընթացքը, հանգել համապատասխան եզրակացությունների:

2008-2009 ուսումնական տարվանից ֆակուլտետն ունի նաև մագիստրատուրայի բաժին, որի առաջին կուրսերում այժմ սովորում են 22 ուսանողներ: Այստեղ գարնանային քննաշրջանի արդյունքներով առկա է 72,73 տոկոս առաջադիմություն: Մագիստրատուրայում հարյուր տոկոս առաջադիմություն ունեն Հայ գրականոթյան ծրագրով սովորող մագիստրանտները: Մագիստրանտները ոչ միայն մասնակցում են դասընթացներին, այլ նաև ունեն իրենց ավարտական թեզերի թեմաները և աշխատում են այդ ուղղությամբ, մասնակցում են գիտական ղեկավարի սեմինարներին, ոմանք պատրաստում են գիտական զեկուցումներ և հոդվածներ: Ուսումնական տարվա ավարտին բակալավրիատի ևս 31 շրջանավարտներ հաջողությամբ մասնակցեցին մագիստրատուրայի ընդունելությանը և շարունակում են իրենց ուսումը ԳՊՀ մագիստրատուրայի համապատասխան բաժիններում:

Ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելուն նպաստել են ինչպես համահամալսարանական, այնպես էլ ֆակուլտետային կամ միայն որևէ բաժնի

վերաբերող տարաբնույթ գիտական, գեղարվեստական, հոբելյանական միջոցառումները, ցերեկույթները, մրցույթները: Յիշատակության արժանի են Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի կազմակերպած ուսանողական գիտական կոնֆերանսները, Գրիբոյեդովին, Գոգոլին, Մեծ հայրենականին նվիրված միջոցառումները, Յայ գրականության ամբիոնի կազմակերպած ցերեկույթը՝ նվիրված Յովհաննես Շիրազի պոեզիային, Յայոց լեզվի ամբիոնի՝ Մայրենի լեզվի օրվան նվիրված միջոցառումը և այլն:

Անցած ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի շրջանակում գործող ամբիոններում թարմացվել են առարկայական ծրագրերը, պատրաստվել են դասախոսությունների էլեկտրոնային տարբերակներ առաջին և երկրորդ կուրսեցիների համար, դասավանդվող առարկաների բնութագրեր, տարբեր կարգի հարցաշարեր ու այլ փաստաթղթեր՝ կրեդիտային համակարգով սովորող կուրսերի համար: Ամբիոններում պարբերաբար անցկացվել են գիտական բանավեճեր, սեմինարներ և քննարկումներ:

Ամբիոնների դասախոսները զբաղվում են նաև գիտական գործունեությամբ: Նրանց հոդվածները տպագրվում են ինչպես ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածուներում, այնպես էլ հանրապետության այլ գիտական հանդեսներում ու ամսագրերում: Անցած ուսումնական տարում հրապարակվել են շուրջ երկու տասնյակ գիտական հոդվածներ, մի շարք դասախոսներ մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների: Ամբիոնների վարիչները մասնակցել են ուսումնագիտական ծրագրերի Ռուսաստանում և Իտալիայում: Մեր ուսանողները մասնակցել են հանրապետական ուսանողական գիտաժողովի, միջմշակութային հաղորդակցմանը նվիրված ամառային դպրոցին: Ամբիոնների մի շարք աշխատակիցներ ավարտում են աշխատանքները գիտական թեզերի ամբողջացման ուղղությամբ և շուտով կներկայացնեն հրապարակային պաշտպանության: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանել է մեկ դասախոս, որը, ի դեպ, ԳՊՅ-ի շրջանավարտ է:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողները կարգապահական բնույթի խախտումներ որպես կանոն թույլ չեն տալիս, անհարգելի բացակայությունները համեմատաբար սակավ են և թույլատրելիի սահմանը սովորաբար չեն անցնում:

Ֆակուլտետի դեկանատը և ամբիոնները վերանայում և ճշգրտում են հաջորդ ուսումնական տարվա ուսումնական պլաններն ու ծրագրերը, ամբողջացնում են դասընթացների առարկայական բնութագրերը, պատրաստում են երրորդ կուրսերի համար անհրաժեշտ ուսումնական նյութերը:

2009–2010 ուսումնական տարին բանասիրական ֆակուլտետի համար հոբելյանական է. լրանում է ֆակուլտետի ձևավորման հինգ տարին, և կարևոր է գնահատել ֆակուլտետի անցած ուղին և նախանշել հետագա զարգացման հեռանկարները՝ առաջ քաշելով որոշակի հայեցակարգ:

Բանասիրական ֆակուլտետը Գավառի պետական համալսարանի կայացած և մրցունակ ստորաբաժանում է, որը կարողանում է բանիմաց մասնագետներ պատրաստել և հասարակությանը մատուցել գիտակրթական որակյալ ծառայություն, ինչի հավաստումը կարող է համարվել տարիների ընթացքում ֆակուլտետի դիմորդների չնվազող հոսքը:

Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը, նպատակ ունենալով ապահովել ուսումնական ողջ գործընթացի որակական հետագա աճ, խարսխված է երեք կարգի իրողությունների վրա.

ա/ ունեցած ձեռքբերումների պահպանում և ամրապնդում,

բ/ թերացումների բացահայտում և վերացում,

գ/ նորանոր նախաձեռնությունների և ծրագրերի հետևողական ներդրում:

Ասվածի համատեքստում՝ բանասիրական ֆակուլտետի հետագա զարգացման հայեցակարգը պարունակում է մի շարք հիմնախնդիրների առաջադրում և դրանց լուծման ուղիների նշում.

1. **Ամբիոնների աշխատանքների արդյունավետության բարձրացում**, ինչին հասնելու համար անհրաժեշտ է

ա/ ամբիոնի նիստերում հաջորդաբար քննարկել առարկայական ծրագրերը՝ դրանք շարունակաբար թարմացնելու միտումով.

բ/ հանգամանորեն ծանոթանալ գործող ուսումնական պլաններին և ՀՀ ԿԳ նախարարության կողմից առաջադրված կրթական չափորոշիչներին, մշակել առաջարկություններ և քննարկման ներկայացնել ֆակուլտետի խորհրդում.

գ/ առավել համակարգված ու հիմնավոր դարձնել քննական հարցաշարերի, հարցատոմսերի, թեստերի, ավարտական թեզերի և կուրսային աշխատանքների թեմաների քննարկումը և կազմումը.

դ/ հետևողականորեն կիրառել դասավանդության նորագույն մեթոդներ՝ հիմնական նպատակ ունենալով գիտելիքների մատուցումը ուսանողների մտածողության զարգացմամբ և աշխարհայացքի ընդլայնմամբ զուգորդելը.

ե/ պարբերաբար կազմակերպել փոխադարձ դասալսումներ և դրանց քննարկումներ.

զ/ հաջորդաբար կազմակերպել ամբիոնի բոլոր աշխատակիցների՝ իրենց գիտական գործունեության վերաբերյալ հաղորդումների լսումներ և քննարկումներ.

է/ անհրաժեշտության դեպքում ձևավորել գիտական որևէ հիմնախնդրով զբաղվող թեմատիկ խմբեր.

ը/ պարբերաբար անցկացնել գիտական սեմինարներ՝ դրանց մասնակից դարձնելով գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողներին.

թ/ մասնագիտական առարկաների շրջանակներում ուսանողներին կանոնավորապես հանձնարարել ռեֆերատներ, էսսեներ, գիտական աշխատանքի պարզագույն այլ եղանակներ, առավել խելացի ուսանողների հետ կատարել համատեղ գիտական աշխատանքներ.

ժ/ մշակել և կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին հանձնարարել ինքնուրույն աշխատանքի այնպիսի թեմաներ, որոնց կատարումը կնպաստի ուսանողի՝ մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը, մտածելու ունակության զարգացմանը:

2. **Դասավանդության որակի հետևողական աճ,** ինչին հասնելու համար անհրաժեշտ ենք համարում.

ա/ շահեկանորեն համադրել դասավանդության դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն եղանակների առավելությունները.

բ/ ստեղծել հնարավորություններ, որպեսզի ուսանողը թղթային կամ էլեկտրոնային կրիչով նախօրոք ունենա անհրաժեշտ բոլոր նյութերը և ի վիճակի լինի յուրաքանչյուր դասի ներկայանալ որոշակի նախագիտելիքով և պարզաբանման ենթակա հարցերով.

գ/ նյութի հանգամանալից մեկնաբանումով, քննարկումներով, հարց ու պատասխանով, այլ եղանակներով հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսանող արդեն լսարանում այս կամ այն չափով յուրացնի մատուցվող գիտելիքը և կարողանա անել դատողություններ.

դ/ պարբերաբար կազմակերպել տվյալ դասընթացի շրջանակներում ուսանողներին առավել հետաքրքրող թեմաների հանգամանալից քննարկումներ ամբիոնի այլ դասախոսների մասնակցությամբ:

3. **Անբավարար գնահատականների քանակի հետևողական նվազեցում**, ինչին հասնելու համար հարկ ենք համարում.

ա/ նախորդ կիսամյակների արդյունքներից ելնելով՝ կազմել ֆակուլտետի ակադեմիապես առավել թույլ ուսանողների ցանկը և այն ունենալ բոլոր ամբիոններում ու դեկանատում.

բ/ ձևավորել ֆակուլտետի ակադեմիապես թույլ ուսանողների ուսման ընթացքին հետևող աշխատանքային խումբ դեկանի, ամբիոնների վարիչների, ուսանողական խորհրդի անդամների մասնակցությամբ, խմբի ամենշաբաթյա նիստերում հաջորդաբար քննարկել թույլ ուսանողների խնդիրները,

գ/ կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություններ և հարցումներ.

դ/ բոլոր առարկաների գծով կիրառել գիտելիքների նվազագույն պաշարի՝ ուսանողի պարտադիր իմացության ապահովման համակարգը:

**4. Ուսումնական գործընթացի, գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության աճի ապահովում**, ինչին հասնելու համար անհրաժեշտ է.

ա/ դասը վարել նորագույն եղանակներով, աշխույժ և բարյացակամ մթնոլորտում, ժամանակին և հիմնավորապես պատասխանել ուսանողներին հուզող մասնագիտական հարցերին, տալ պարզաբանումներ.

բ/ կազմակերպել առարկայական օլիմպիադաներ, վիկտորինաներ.

գ/պարբերաբար կազմակերպել ուսանողական գիտական կոնֆերանսներ, հնարավորության դեպքում լավագույն նյութերը ներկայացնել տպագրության.

դ/ 2009–2010 ուսումնական տարին Հայոց լեզու և գրականություն բաժնի համար հայտարարել Թումանյանական, Ռուսաց լեզու և գրականություն բաժնի համար՝ Չեխովյան, իսկ Անգլերեն լեզու բաժնի համար՝ Շեքսպիրյան. համապատասխան բաժնի յուրաքանչյուր խմբում անցկացնել տվյալ հեղինակի ստեղծագործությունների քննարկումներ, հրատարակել պատի թերթեր, բաժիններում անցկացնել ուսանողական գիտական կոնֆերանսներ.

ե/ անցկացել Լավագույն խումբ, Լավագույն ուսանող, Լավագույն պատի թերթ, Լավագույն լրագրող մրցույթներ.

զ/ էականորեն ակտիվացնել ուսանողական խորհրդի աշխատանքները, բարձրացնել նրա դերը ֆակուլտետում:

**5. «Բանասիրական ֆակուլտետը՝ մշակութային կենտրոն» ծրագրի առաջադրում,** ինչը արդեն սովորական դարձած գրական-երաժշտական, հոբելյանական միջոցառումներից բացի կարող է իրականացվել նաև հետևյալ միջոցառումներով.

ա/ թատերական խմբի ստեղծում, դրա գործունեության կազմակերպում.

բ/ «Ժողովրդական երգիչ» մրցույթի անցկացում և երգիչների խմբի ձևավորում.

գ/ ձեռքի աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպում.

դ/ «Լավագույն ասմունքող» մրցույթի կազմակերպում:

**6. Արտաբուհական գործունեության ծավալում**, որի նպատակն է լինելու.

ա/ Կրթության և գիտության մարզային վարչության հետ համագործակցելով՝ մարզի դպրոցներում դասալսումների միջոցով ուսումնասիրել հայոց, ռուսաց և օտար լեզուների դասավանդման վիճակը, անել եզրակացություններ և տրամադրել խորհրդատվություն.

բ/ ստեղծել ԳՊՀ Լեզվական կենտրոն, որը մարզի բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին կարող է օգնել օտար լեզուներից թարգմանությունների կատարման, հայերենով գրությունների կազմման գործում.

գ/ համագործակցել «Քյավառ» հեռուստաընկերության հետ և այդ ալիքով կազմակերպել բանասիրական բնույթի հաղորդումներ.

դ/ համագործակցել մարզային և քաղաքային գրադարանների հետ, կազմակերպել համատեղ միջոցառումներ.

ե/ համալսարանական նորությունները պարբերաբար ներկայացնել մարզային մամուլում:

**7. Գիտական գործունեության ակտիվացում և որակի բարձրացում**, ինչը կարելի է իրականացնել հետևյալ քայլերով.

ա/ ամբիոնի յուրաքանչյուր աշխատակցի գիտական հետաքրքրությունների որոշում և ուսումնասիրության թեմայի հաստատագրում.

բ/ յուրաքանչյուր ամիս ամբիոնի յուրաքանչյուր աշխատակցի գիտական գործունեության վերաբերյալ հաշվետվության լսում և քննարկում.

գ/ Գավառի պետական համալսարանի գիտաժողովի նյութերի ժողովածուում միայն գիտական որոշակի արժեք ներկայացնող աշխատանքների երաշխավորում հրատարակության.

դ/ «Հայագիտական հանդես» պարբերականի ստեղծում, որտեղ կիրապարակվեն ինչպես մեր աշխատակիցների, այնպես էլ այլ գիտնականների՝ գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող հոդվածներ, որոնք կհետաքրքրեն նաև ուսանողությանը.

ե/ Գավառի պետական համալսարանի հրատարակչության ստեղծում, ինչը թույլ կտա գիտական խորհրդի երաշխավորությամբ կազմակերպել մեր գիտնականների աշխատանքների հրատարակումը:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Վ. Լ. Կատվալյան

## ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## *ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 35 | 2 | 5 | 80.00 |
| 2-րդ | 27 | 2 | 6 | 85.18 |
| 3-րդ | 24 | 0 | 13 | 91.67 |
| 4-րդ | 26 | 0 | 8 | 76.92 |
| Ռուսաց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 21 | 4 | 2 | 57.14 |
| 2-րդ | 20 | 10 | 0 | 40.00 |
| 3-րդ | 21 | 3 | 2 | 76.19 |
| 4-րդ | 27 | 0 | 5 | 92.59 |
| Անգլերեն լեզու | | | | |
| 1-ին | 30 | 3 | 7 | 90.00 |
| 2-րդ | 45 | 10 | 4 | 66.67 |
| 3-րդ | 31 | 8 | 0 | 19.35 |
| 4-րդ | 19 | 4 | 5 | 68.42 |
| **Ընդամենը** | **326** | **46** | **57** | **70,55** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 4 | 0 | 0 | 100 |
| Ռուսաց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 7 | 0 | 0 | 85.71 |
| Անգլերեն լեզու | | | | |
| 1-ին | 11 | 0 | 4 | 63.64 |
| **Ընդամենը** | **22** | **0** | **4** | **77.27** |

## *ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 33 | 4 | 7 | 78.79 |
| 2-րդ | 25 | 2 | 4 | 84.00 |
| 3-րդ | 25 | 0 | 12 | 92.00 |
| Ռուսաց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 20 | 9 | 2 | 45.00 |
| 2-րդ | 20 | 3 | 0 | 75.00 |
| 3-րդ | 20 | 3 | 2 | 75.00 |
| Անգլերեն լեզու | | | | |
| 1-ին | 29 | 10 | 4 | 51.72 |
| 2-րդ | 45 | 9 | 5 | 71.11 |
| 3-րդ | 31 | 6 | 5 | 45.16 |
| **Ընդամենը** | **248** | **46** | **41** | **68,55** |
| **Մագիստրա-տուրա** | | | | |
| Հայոց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 4 | 0 | 4 | 100 |
| Ռուսաց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 7 | 2 | 0 | 71.43 |
| Անգլերեն լեզու | | | | |
| 1-ին | 11 | 0 | 5 | 63.64 |
| **Ընդամենը** | **22** | **2** | **9** | **72.73** |

## 2008/2009 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | - | 3 | 33 | - |

**Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4**

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Համբարձումյան Վազգեն Գուրգենի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Ասոյան Թաքուհի Արտիկի** - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. **Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի** - դասախոս
3. **Խանդանյան Սիրանուշ Կառլենի** - դասախոս
4. **Հարությունյան Հերմինե Խաչիկի** - դասախոս
5. **Վարդանյան Գայանե Լևիկի** - դասախոս
6. **Սարգսյան Ռուզաննա Մարատի** - լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Կատվալյան Վիկտոր Լիպարիտի** - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Ալեքսանյան Թամարա Կարապետի** - դասախոս
3. **Ներսիսյան Վարսիկ Արմենի** - դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի ուսուցման գործնականության և արդյունավետության ապահովման հարցեր:
2. Լեզվաբանության ընդհանուր, ժամանակակից հայոց լեզվի տեսության և պատմության, լեզվի ուսուցման մեթոդիկայի հիմնահարցերի ուսումնասիրություն:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | 3 | 6 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Համբարձումյան Վ. Գ.** Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները // Պատմա-բանասիրական հանդես, Հ. 1, Երևան, 2008, էջ 159-179:
2. **Համբարձումյան Վ. Գ.** Գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների փոխհարաբերության շուրջ // Լրաբեր հասարակական գիտությունների, Հ. 2, Երևան, 2008, էջ 136-139:
3. **Կատվալյան Վ. Լ.** Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների տրական հոլովաձևերը Բայազետի բարբառում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ. 11, Երևան, 2009, էջ 189-196:
4. **Կատվալյան Վ. Լ.** Արարատյան և Բայազետի բարբառների փոխհարաբերությունները // Պատմաբանասիրական հանդես, Հ. 2-3, Երևան, 2009, էջ 145-157:
5. **Ալեքսանյան Թ. Կ.** Կապակցված խոսքի ուսուցումն ըստ Ջանի Ռոդարիի // Նախաշավիղ, Հ. 3-4, Երևան, 2009, էջ 48-54:
6. **Ալեքսանյան Թ. Կ.** Լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի զարգացում (ծրագիր - ձեռնարկ) // Հեղինակային խումբ, ԿԱԻ, Երևան, 2008, 128 էջ:
7. **Ալեքսանյան Թ. Կ.** Աշխատանքային տետր հայոց լեզվից 7-րդ դասարանի համար (ներառական կրթություն) // Հեղինակային խումբ, ԿԱԻ, Երևան, 2008, 32 էջ:
8. **Ալեքսանյան Թ. Կ.** Ավագ դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության առարկայական չափորոշիչներ և ծրագրեր (ըստ հոսքերի) // Երևան: Տիգրան Մեծ, 2009, 108 էջ:
9. **Ներսիսյան Վ. Ա.** Քերականական մի քանի առանձնահատկություններ Հ. Օձնեցու երկերի լեզվում // Աշոտ Տեր-Գրիգորյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ՀՊՄՀ, Երևան, 2009, էջ 89-92:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի, բանասիրական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր*

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Առաքելյան Արա Հրաչիկի -** բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Ղազարյան Նորայր Կարապետի -** բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. **Ղարիբյան Ալինա Ամբիկի** - ասիստենտ
4. **Ղռեջյան Լուսինե Խաչատուրի -** դասախոս
5. **Փոշոտյան Լիլիթ Սարգսի -** սեմինարավար
6. **Բոշյան Նարինե Հովիկի -** լաբորանտ

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Միջնադարյան գրականության, մասնավորապես, «Սասնա ծռեր» էպոսի, ինչպես նաև գերմանական էպոսի առնչությունների վերաբերյալ ուսումնասիրություններ:
2. Չարենցի անտիպ շրջանի հետազոտական աշխատանքներն ու Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության ամբողջական ուսումնասիրությունը:
3. Արդի հայ պոեզիայի վերաբերյալ ուսումնասիրություններ:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | - | - | 18 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Վ. Ռ.** Հոգեբանական միջոցների գործադրումը Լ. Շանթի դրամատուրգիայում // ԵՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, 2009, էջ 42-52:
2. **Գրիգորյան Վ. Ռ.** Մենության բեռը // Վազգենյան դպրանոց, Հ. 3, 2009, էջ 16-19:
3. **Գրիգորյան Վ. Ռ.** Նիբելունգների երգը հայերեն // Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2009, էջ 156-161:
4. **Գրիգորյան Վ. Ռ.** Նիբելունգների երգը հայերեն // Վազգենյան դպրանոց, Հ. 4 /2/, 2009, էջ 9-13:
5. **Ղազարյան Ն. Կ.** Կեցության խոսքը. կառուցվածք և բառոլորտ // «Համատեքստ» տարեգիրք, ԵՊՀ, 2008, էջ 57-67:
6. **Ղազարյան Ն. Կ.** Բանաստեղծության «այլակերպությունը» // «Նորք» հանդես, Հ. 2, 2009, էջ 148-154:
7. **Ղազարյան Ն. Կ.** Հրաչյա Թամրազյանի պոեզիայի թեմատիկ առանցքը // «Նորք» հանդես, 2008, էջ 156-160:
8. **Ղազարյան Ն. Կ.** Բանաստեղծության դրաման // «Կանթեղ» /ԲՈՀ/, Հ. 2, 2008, էջ 39-44:
9. **Ղազարյան Ն. Կ.** Կառուցվածք և բառոլորտ // «էջմիածին», ԺԱ, 2008, էջ 110-118:
10. **Ղազարյան Ն. Կ.** Ճշմարտության կարգի մեջ // «էջմիածին», ԺԲ, 2008, էջ 119-124:
11. **Ղազարյան Ն. Կ.** «Հին եգիպտական մեռյալների գիրքը» և Հ. էդոյանի «Այժմ և միշտ» ժողովածուն // «Կանթեղ» /ԲՈՀ/, Հ. 4, 2008, էջ 3-9:
12. **Առաքելյան Ա. Հ.** Փիլիսոփայական վեպի մի քանի առանձնահատկությունների շուրջ // «Համատեքստ» տարեգիրք, ԵՊՀ, 2008, էջ 44-49:
13. **Առաքելյան Ա. Հ.** Հեսսեն և Արևելքը // Երևան: Վան Արյան, 2009, 80 էջ /մենագրություն/:
14. **Դռեջյան Լ. Խ.** Միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ-իռլանդական մշակութային կապերին // «Պատմաբանասիրական հանդես» լրատու, Հ. 2-3, Երևան, 2009, էջ 319-322:
15. **Ղարիբյան Ա. Ա.** «Սասունցի Դավիթ» էպոսի կանանց կերպարների վիպական-դիցաբանական հատկանիշների համեմատական քննություն // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հ. 11, Երևան, 2009, էջ 221-237:
16. **Ղարիբյան Ա. Ա., Զանգիզորյան Ս. Ս.** Մեծ Մհերի ծնունդը, մանկությունն ու քաջագործությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հ. 11, Երևան, 2009, էջ 237-244:
17. **Բոշյան Ն. Հ.** Գյուղաշխարհի մարդը Բակունցի նովելներում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հ. 11, Երևան, 2009, էջ 253-262:
18. **Պետրոսյան Ա. Հ.** Գոյությունը պայքար է // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հ. 11, Երևան, 2009, էջ 253-262:
19. **Բունիաթյան Ա. Ա.** Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի և Օգոստինոս Երանելու «Խոստովանություններ»-ի առնչակցության մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հ. 11, Երևան, 2009, էջ 272-279:

# ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ ***Գայանե Ֆրեդիկի Բդեյան***, *դասախոս*

## *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. Ասրյան Մագդալենա Սերգեյի - դասախոս
2. Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի - դասախոս
3. Բալագոզյան Անիկ Կարապետի - դասախոս
4. Բալագոզյան Կարինե Արամայիսի - դասախոս
5. Բադալյան Մարինե Միքայելի - դասախոս
6. Ռափյան Նանա Լևիկի - դասախոս
7. Տոնոյան Հռիփսիմե Մելիքի - լաբորանտ

## *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. Մարգարյան Արամ Հայկի - ԳՊՀ դոցենտ
2. Գյուրջայանց Սեդա Միքայելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի - դասախոս
4. Հովվյան Արմենուհի Արտաշեսի - դասախոս
5. Տիգրանյան Սաթենիկ Սաշայի - դասախոս
6. Հայթյան Սաթենիկ Հայրապետի - դասախոս
7. Հովհաննիսյան Հասմիկ - դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անգլերեն լեզվի բառապաշարի ծագումնաբանական ստուգաբանությունը և զուգորդումը այլ լեզուների հետ:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 1 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հովհաննիսյան Հ. Հ.** Ասացվածքները որպես լեզվի ուսուցման կարևոր միջոց // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 11, 2009, էջ 244-247:

# ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝** *Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի, մանկավարժական գիտությունների թեկնածու*

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Գրիգորյան Էդուարդ Ալեքսանդրի** - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Դարբինյան Անելյա Անդրանիկի** - ԳՊՀ դոցենտ
3. **Գրիգորյան Արմեն Ազատի** - ԳՊՀ դոցենտ
4. **Միրիբյան Գայանե Աշոտի** - ասիստենտ
5. **Մուրադյան Նաիրա Էդուարդի** - ասիստենտ
6. **Դաշտոյան Հասմիկ Լյովայի** - դասախոս
7. **Պոտապովա Նինա Վալերիի** - դասախոս
8. **Մելքոնյան Աննա Վրեժի** - լաբորանտ

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ռուսաց լեզվի շարահյուսական ոճաբանության հիմնահարցերը արդի ժամանակաշրջանում:
2. Ռուս և հայ բանահյուսության համեմատական ուսումնասիրում:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 8 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Մուխսիխաչոյան Ա. Մ.** Ուսման անհատական ոճի շուրջ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 11, 2009, էջ 196-200:
2. **Գրիգորյան Է. Ա.** Ռուսերենի, բուլղարերենի և հայերենի դարձվածքների համեմատության հարցի շուրջ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 11, 2009, էջ 200-206:
3. **Դարբինյան Ա. Ա.** Հետմոդեռնիզմը 21-րդ դարի ռուս գրականության մեջ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N11, 2009, էջ 206-209:
4. **Միրիբյան Գ. Ա.** Ռուսական հարսանիքի ծիսական տարածքի հակադրությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N11, 2009, էջ 209-210.

5. **Միրիքյան Գ. Ա.** Символика свадебного дерева в русской и армянской свадебной поэзии // Телавский государственный университет, Сборник научных трудов, N 2 (24), Телави, 2008, с. 275-278.
6. **Միրիքյան Գ. Ա.** К семантике фитонимических символов в фольклерных текстах (на материале армянской и русской свадебных песенных традициях) // Казанский государственный университет, Казанский филологический вестник, Серия 4: История, регионоведение. Международные отношения, Выпуск 7, Казань, 2008, с. 190-194.
7. **Դաշտոյան Հ. Լ.** Ռուսերենի անվանական դարձվածքների մասին // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 10, 2008, էջ 216-221:
8. **Մելքոնյան Ա. Վ.** Ա. Պ. Չեխովի ազդեցությունը Ստ. Զորյանի ստեղծագործական ուղու վրա // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 10, 2008, էջ 216-221:

# ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**Դեկան՝ Ավագյան Մարտին Պատվականի**, գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր

**Դեկանի տեղակալ՝ Գարեյան Մելանյա Վարդանի**

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

| Դասիչ | Մասնագիտություն |
|---|---|
| 020200 | Կենսաբանություն |
| 020800 | Բնապահպանություն և բնօգտագործում |
| 020400 | Աշխարհագրություն |
| 230100 | Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա |

**Մասնագիտացումներ՝** կենսաբանության, մանկավարժության
բնապահպանության /էկոլոգիայի/, մանկավարժության
աշխարհագրության, մանկավարժության
ճարտարագետի

**Ուսանողների թիվը՝** 268

**Շրջանավարտների թիվը՝** 84

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Բնագիտական ֆակուլտետում ուսումնական գործընթացը իրականացվում է չորս մասնագիտությունների գծով՝ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Բնապահպանություն և բնօգտագործում, Կենսաբանություն և Աշխարհագրություն բաժիններում:

Կրթական գործընթացը կազմակերպվում է հաստատված ուսումնական պլաններին համապատասխան՝ըստ պետական կրթական չափորոշիչների:

2009թ.ին ինչպես մեր հանրապետության մյուս բուհերի բնագիտական ֆակուլտետներում, Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում ևս խնդիր առաջացավ՝ առաջին կուրսերի համալրման առումով: Բնագիտական ֆակուլտետ ընդունվեց ընդամենը 19 ուսանող՝ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա մասնագիտությամբ՝ 16 ուսանող, Աշխարհագրություն բաժնում՝ 3 ուսանող: Բնապահպանություն և Կենսաբանություն բաժինները չձևավորվեցին: Պատճառը բնագիտական առարկաների նկատմամբ աշակերտների անտարբերությունն է, գիտելիքների ցածր մակարդակը և բարդ թեստերը, որոնք դիմորդների կողմից չհաղթահարվեցին: Կարելի է կանխատեսել, որ գալիք ուսումնական տարում ընդունելությունը ավելի կդժվարանա, իսկ հաջորդ տարում այն զգալիորեն կպակասի՝ միջնակարգ դպրոցներում 12-ամյա կրթության համակարգը ներդնելու պատճառով: Ելնելով այս հանգամանքից՝ ֆակուլտետի խորհուրդը առաջ է քաշել մի շարք դրույթներ, որոնց հետևողական իրականացումը կարող է հնարավորություն տալ՝ հետագայում շտկելու իրավիճակը.

1.ձեռնարկել գործուն միջոցներ՝ հանրակրթական դպրոցների հետ կապը սերտացնելու ուղղությամբ: Այդ նպատակով դպրոցներում հանդես գալ կենսաբանության և էկոլոգիայի, աշխարհագրության, քիմիայի արդի խնդիրներին նվիրված զեկուցումներով, կազմակերպել հանդիպումներ այդ բնագավառի ճանաչված մասնագետների հետ,

2.հավաքագրել դիմորդներ և անվճար հիմունքներով պարապել կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն առարկաները՝ պատրաստելով մեր բաժիններ ընդունվելու համար,

3. հայտ ներկայացնել ՀՀ Կրթության և գիտության նախարարություն և ստանալ լիցենզիա՝ 2010-2011 ուս.տարում համալսարանում բացելու Կենսաբանություն և էկոլոգիա մասնագիտությունների գծով հեռակա բաժին, որի անհրաժեշտությունը վաղուց կար, իսկ այսօր էլ ավելի արդիական է դարձել:

Իրավիճակի շտկման գործում ուղղակի ազդեցություն կարող է ունենալ մեր բուհի նախապատրաստական բաժնի գործունեությունը: Բնագիտական առարկաների դասավանդումը նախապատրաստական բաժնում լիարժեք դարձնելու համար կարող են ներգրավվել մեր ամբիոնների փորձառու դասախոսները:

Կա խիստ անհրաժեշտություն՝ լուրջ ուշադրություն դարձնելու Գեղարքունիքի մարզում բնագիտական մասնագիտությունների գովազդմանը:

Անհրաժեշտ է մշակել ժամանակացույց՝ մարզի դպրոցներ այցելելու և աշակերտների շրջանում բացատրական աշխատանքներ կատարելու նպատակով: Մեր դասախոսները պատրաստակամություն են հայտնել անվճար հիմունքներով դասընթացներ կազմակերպելու համար (Ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի վարիչ, պրոֆ. Ֆ.

Ավետիսյան, Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Սիմոնյան, Աշխարհագրության ամբիոնի վարիչ, պրոֆ. Բ. Մնացականյան):

Ինչպես Գեղարքունիքի մարզում, այնպես էլ հանրապետությունում ընդհանրապես, տնտեսության զարգացումը պայմանավորված կլինի նաև զբոսաշրջության զարգացման հետագա ընթացքի հետ: Այսօր արդեն հրամայական է բարձր որակավորում ունեցող սերվիսի մասնագետների պատրաստումը ոչ միայն մայրաքաղաքում, այլ նաև մարզային ԲՈՒՀ-երում: Գավառի պետական համալսարանը այդ տեսակետից կարող է առաջատարների շարքում լինել, ինչի համար կա անհրաժեշտ կադրային բազա: Առաջարկվում է աշխարհագրության մասնագիտության բազայի հիման վրա կադրեր պատրաստել աշխարհագրություն և սերվիս մասնագիտությամբ: Նպատակահարմար է նաև ստեղծելու «հողային կադաստր» մասնագիտությամբ նոր բաժին, որն այսօր մեր հանրապետությունում համարվում է ամենամեծ պահանջարկ ունեցող մասնագիտություններից մեկը:

Որպես ուսումնական պրոցեսի կարևոր բաղադրամաս բնագիտական ֆակուլտետում կարևորվում է ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիաների ստեղծումը: Այս ուղղությամբ, չնայած ռեկտորատի կողմից ձեռնարկված քայլերին, այնուամենայնիվ դրանց տեխնիկական հագեցվածության վիճակը բավարար չէ:

Քիմիայի և կենսաբանության լաբորատոր գործնական պարապմունքները կատարվում են մակերեսորեն՝ անհրաժեշտ նյութերի և պարագաների բացակայության պատճառով: Այս բացը լրացնելու նպատակով ամբիոնների կողմից տարվում են աշխատանքներ Երևանի բուհերում և գիտահետազոտական ինստիտուտներում լաբորատոր գործնական որոշ պարապմունքներ անցկացնելու համար:

Ուսումնա-փորձնական բազայի ամրապնդման գործում խիստ կարևորվում է ուսումնա-փորձնական տնտեսության ստեղծումը:

Ուսումնական լաբորատորիաների հագեցմանը զուգահեռ ամբիոնների կողմից առաջարկություն է արվել ստեղծելու ուսումնական կաբինետներ: Կաբինետների համալրումը անհրաժեշտ պարագաներով (գրքեր, ցուցանմուշներ) կկատարվի ամբիոնների դասախոսների օգնությամբ:

Ուսումնական գործընթացի բարելավման գործում բնագիտական ֆակուլտետում կարևորվում է ուսումնական պրակտիկաների պատշաճ ձևով կազմակերպումը և անցկացումը: Այս տարվա ուսումնական պրակտիկայի հաջող կազմակերպման համար ռեկտորատի կողմից հատկացվեց ինչպես տրանսպորտային միջոց, այնպես էլ վառելիք: Սակայն անհրաժեշտ է ավելացնել երթուղիները, աշխարհագրական բաժնի համար՝ նաև հեռավոր պրակտիկաների թիվը: Հաշվետու տարում ուսումնական պրակտիկաները շատ արդյունավետ էին, ուսուցողական և մեծ ոգևորություն առաջացրեցին մեր ուսանողների շրջանում:

Աշխարհագրության ամբիոնի նախաձեռնությամբ նախատեսվել է կազմակերպել և անցկացնել «Իմ աշխարհը» խորագրով միջոցառումների շարք՝ Հայաստանի լանդշաֆտին և կենսաբազմազանությանը ավելի մոտիկից ծանոթանալու համար: Այն կարող է լինել ուսուցողական և սիրով կիրավիրենք նաև մեր համալսարանի այլ ֆակուլտետների ուսանողների, ովքեր հանդես կբերեն հետաքրքրություն և կցանկանան մեր բնաշխարհին ավելի մոտիկից ծանոթանալ:

Ուսումնական պրակտիկաների կազմակերպման գործում լուրջ գործընկեր է «Վիվա-Սելլ MTC» ընկերությունը: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի ուսանողները իրենց պրակտիկան կանցկացնեն այդ կազմակերպությունում: Միաժամանակ ուզում եմ նշել, որ մեր համագործակցությունը չի սահմանափակվում ուսումնական պրակտիկաներով: Ս.թ. օգոստոս ամսին «Վիվա-Սելլ»-ում

կազմակերպվեց համակարգչային ծրագրերի խորացված ուսուցում, որին մասնակցեցին մեր ֆակուլտետի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի 11 ուսանողներ, իսկ նոյեմբեր ամսին անցկացվեցին դասընթացներ՝ դասախոսների համար: Կազմակերպության ղեկավարության կողմից գովեստի խոսքեր ասվեցին մեր ուսանողներին՝ անհրաժեշտ համակարգչային գիտելիքներ ցուցաբերելու մասին և նրանց շնորհվեցին համապատասխան հավաստագրեր: Առաջավոր այս փորձը պետք է խորացնել և փնտրել նոր գործընկերներ՝ համագործակցության համար: «Վիվա-Սելլ»-ի առաջատար մասնագետները համակարգչային ցանցի կազմակերպման և շահագործման հարցերի շուրջ համալսարանում պարբերաբար հանդես են գալիս դասախոսությամբ:

Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը ներառում է ամբիոններում կատարվող գիտական և գիտահետազոտական աշխատանքների ակտիվացումը: Ֆակուլտետի ամբիոնների դասախոսները ընդգրկված են տարբեր գիտական հիմնարկներում կատարվող գիտահետազոտական աշխատանքներում: Սակայն հարկ է նշել, որ առայժմ մեզ մոտ առանձին գիտական թեմաներ չեն կատարվում:

Անհրաժեշտություն է ակտիվացնել այս ուղղությամբ մեր ամբիոնների ջանքերը: Ամբիոնների կողմից մշակված են գիտական աշխատանքների կատարման վերաբերյալ թեմատիկ պլաններ և մեր աշխատանքով պետք է ձեռնամուխ լինենք դրանց իրագործմանը:

Ֆակուլտետում դեռևս անբավարար մակարդակի վրա է գտնվում դրամաշնորհային ծրագրերի մեջ ներգրավումը: Կան բազմաթիվ ծրագրեր արտասահմանյան դոնոր կազմակերպությունների կողմից, որոնց բաշխումը և կատարումը, կարծես, դարձել է երևանյան բուհերի մենաշնորհը: Սակայն, ժամանակն է ակտիվացնել մեր աշխատանքները և 2010-2011 ուսումնական տարում այդպիսի ծրագիր իրականացնել: Դրամաշնորհային ծրագերի կատարումը կարող է նպաստել նաև մեր լաբորատորիաները անհրաժեշտ սարքավորումներով հագեցնելուն:

Բնագիտական ֆակուլտետում զգալի աշխատանք է կատարվել ամբիոնները նոր, երիտասարդ դասախոսական կազմով համալրելու ուղղությամբ: Երիտասարդ, բանիմաց դասախոսներով մեր ամբիոնների համալրումը, նոր, ժամանակակից մեթոդներով դասընթացների կազմակերպումը ուսուցման որակի բարձրացման կարևոր նախապայման են: Ֆակուլտետի մագիստրատուրայում տարբեր մասնագիտությունների գծով սովորում են 41 ուսանողներ: Լավագույն մագիստրանտները մեր տեսադաշտում են և հետագայում նրանց անհրաժեշտ է ներգրավել ուսումնական տարբեր ծրագրերի և թեմաների իրականացման գործընթացում:

Բնագիտական ֆակուլտետում որոշակի աշխատանք է տարվում ուսման առաջադիմության բարձրացման ուղղությամբ: Ֆակուլտետում նկատվում է ուսման առաջադիմության դինամիկ աճ՝ մոտավորապես 15 %-ի չափով՝ նախորդ տարվա համեմատությամբ: Ուսուցման գործընթացը համապատասխանում է առաջադրվող պահանջներին: Դասընթացներում լայնորեն կիրառվում են նոր մեթոդներ, համակարգչային տեխնիկա, ինչը դասախոսությունները դարձնում է ավելի հետաքրքիր և բովանդակալից:

Կարևորում ենք մեր դասախոսների, հատկապես սկսնակ դասախոսների վերապատրաստման խնդիրը: Յնարավորության սահմաններում պետք է ապահովել բնագիտական ֆակուլտետի դասախոսների ներգրավումը հեղինակավոր եվրոպական համալսարաններում իրականացվող Կրթական ծրագրերին, մասնավորապես “Erasmus Mundus”-ի կողմից իրականացվող դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակման ծրագրերին:

Միջազգային կրթական ծրագրերի մեջ ընդգրկելու համար հարկ է նշել օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակը ուսանողության շրջանում: Այս առումով պահանջվում է լրջորեն ուսումնասիրել օտար լեզուներ, հատկապես անգլերեն: Հատկացված ժամաքանակը քիչ է օտար լեզուն բավարար տիրապետելու համար: Հարկավոր է մտածել արտաժամյա լրացուցիչ խմբերի ստեղծման և պարապմունքների անցկացման մասին: Վիճակը նույնքան վատ է նաև ուսանողների կողմից ռուսաց լեզվի իմացության ոլորտում: Իսկ մասնագիտական գրականության գերակշռող մասը ռուսերեն լեզվով է: Հատկապես կրեդիտային համակարգում սովորող ուսանողների մոտ, որոնք կատարում են ինքնուրույն աշխատանք կամ ներկայացնում են անհատական առաջադրանք, զգացվում է ռուսերենի իմացության պակասը:

Նույնը վերաբերում է նաև համակարգչային տեխնիկայի տիրապետմանը: Ոչ մասնագիտական խմբերում 34 ժամյա դասընթացը չի կարող տալ անհրաժեշտ գիտելիքներ՝ համակարգչային տարբեր ծրագրերի իմացության վերաբերյալ: Այս նպատակով ևս պետք է կազմակերպենք արտալսարանային դասընթացներ:

«Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնը պատրաստակամություն է հայտնել օգնելու, որպեսզի յուրաքանչյուր ուսանող կարողանա օգտվել ինտերնետ գլոբալ ցանցի ինֆորմացիոն բազայից:

Ինտերնետը պետք է մատչելի լինի ոչ միայն «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ սովորող մեր ուսանողներին, այլև համալսարանում սովորող յուրաքանչյուր ուսանողի:

Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը ներառում է ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքի բարելավումը, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքի արդյունավետության բարձրացումը: Ֆակուլտետում համալրվել է ուսանողական խորհրդի կազմը: Ուսանողները լիարժեք մասնակցություն են ունենում ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին: Դեկանատի և ուսխորհրդի համագործակցությունը հետագայում պետք է էլ ավելի խորացնենք:

Ֆակուլտետում գործում են «Բնագետի ակումբ», ուսանողական գիտական ընկերություն, բազմաթիվ սպորտային սեկցիաներ: Հատկապես կարևորվում է ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության գործունեությունը: Ֆակուլտետում արդեն ավանդույթ է դարձել ըստ մասնագիտությունների ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպումը, մասնավորապես՝ Կենսաբանություն և Բնապահպանություն բաժինների ամենամյա կոնֆերանսները: Այս տարի առանձին գիտաժողով կազմակերպվեց «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի ուսանողների կողմից: Գիտաժողովի նյութերն առանձին գրքույկով տպագրվել են: Հաշվետու ուսումնական տարում նաև Աշխարհագրության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվեց կոնֆերանս՝ նվիրված աշխարհագրական արդի հիմնախնդիրներին, հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության և անապատացման հիմնախնդիրներին:

Ուսանողների կարգապահության հետագա բարձրացումը ուսման առաջադիմության և կրթության որակի բարձրացման կարևոր երաշխիքներից է:

Ֆակուլտետում տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ նվազագույնի են հասցվել անհարգելի բացակայությունները: Ցածր առաջադիմություն և վատ հաճախելիություն ունեցող ուսանողների և նրանց ծնողների հետ տարվում է բացատրական աշխատանք: Ֆակուլտետում հաճախակի են կազմակերպվում ինչպես ծնողական ժողովներ, այնպես էլ առանձնազրույցներ հետնապահ ուսանողների ծնողների հետ: Պետք է նշել, որ այսպիսի համագործակցությունը տալիս է իր արդյունքը: Այսուհետ էլ նման համագործակցված աշխատանքը ֆակուլտետում կշարունակվի:

Ֆակուլտետում առկա է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ծավալվում է կոլեկտիվ փոխհամաձայնեցված աշխատանք, ինչը հնարավորություն է տալիս ավելի լիարժեք ու նպատակասլաց օգտագործել մեր հնարավորությունները՝ ֆակուլտետի առջև դրված խնդիրները լուծելու համար:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Պ. Ավագյան

## ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### *ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Կենսաբանություն | | | | |
| 1-ին | 13 | - | 7 | 87 |
| 2-րդ | 11 | - | 2 | 67 |
| 3-րդ | 16 | - | 4 | 88 |
| 4-րդ | 15 | 3 | 2 | 67 |
| Բնապահպանություն | | | | |
| 1-ին | 20 | 11 | - | 40 |
| 2-րդ | 17 | 6 | - | 47 |
| 3-րդ | 10 | 3 | - | 55 |
| 4-րդ | 19 | 3 | 1 | 55 |
| Աշխարհագրություն | | | | |
| 1-ին | 11 | 1 | 1 | 91 |
| 2-րդ | 12 | 4 | 2 | 42 |
| 4-րդ | 12 | 5 | 3 | 50 |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | | | | |
| 1-ին | | | | |
| 2-րդ | 27 | 5 | 8 | 74 |
| 3-րդ | 31 | 3 | 5 | 63 |
| 4-րդ | 31 | 6 | 7 | 46 |
| | 27 | 3 | 6 | 68 |
| **Ընդամենը** | **272** | **53** | **48** | **62** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Կենսաբանություն | | | | |
| 1-ին | 4 | - | 2 | 100 |
| Բնապահպանություն և բնօգտագործում | | | | |
| 1-ին | 3 | - | 1 | 100 |
| Աշխարհագրություն | | | | |
| 1-ին | 3 | - | 1 | 67 |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | | | | |
| 1-ին | 9 | - | 2 | 89 |
| **Ընդամենը** | **19** | **-** | **6** | **89** |

## *ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Կենսաբանություն | | | | |
| 1-ին | 14 | - | 4 | 100 |
| 2-րդ | 12 | 1 | 4 | 83.3 |
| 3-րդ | 16 | | 7 | 100 |
| Բնապահպանություն | | | | |
| 1-ին | 17 | 3 | - | 52.9 |
| 2-րդ | 16 | 3 | 1 | 81.2 |
| 3-րդ | 11 | 2 | - | 75 |
| Աշխարհագրություն | | | | |
| 1-ին | 6 | 1 | 1 | 83.3 |
| 2-րդ | 10 | 4 | 2 | 40.0 |
| Ինֆորմատիկա և հաշվող. տեխնիկա | | | | |
| 1-ին | 29 | 13 | 4 | 50 |
| 2-րդ | 31 | 6 | 4 | 61.2 |
| 3-րդ | 29 | 5 | 3 | 48.4 |
| **Ընդամենը** | **191** | **38** | **30** | **70.5** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Կենսաբանություն | | | | |
| 1-ին | 4 | - | 2 | 100 |
| Բնապահպանություն և բնօգտագործում | | | | |
| 1-ին | 3 | - | 1 | 100 |
| Աշխարհագրություն | | | | |
| 1-ին | 3 | - | 2 | 66.6 |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | | | | |
| 1-ին | 9 | - | 5 | 66.6 |
| **Ընդամենը** | **19** | **-** | **10** | **83.3** |

## 2008/2009 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | 2 | 6 | 55 | 5 |

**Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 5**

# ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝ Հարությունյան Ռուբիկ Աղաբեկի**, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Ղարախանյան Կարո Իսահակի -** ֆիզմաթ գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Մկրտչյան Երվանդ Սարգսի -** ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ
3. **Մկրտչյան Լալա Արշալույսի -** լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի -** ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Հայրապետյան Վարդան Ժորեսի -** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. **Հովհաննիսյան Կառլեն Արշիկի -** դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անիզոտրոպ, անհամասեռ մարմնի մեխանիկայի ժամանակակից խնդիրների լուծման մեթոդներ:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 5 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Սարգսյան Վ. Ս., Հայրապետյան Վ. Ժ., Կուտուզյան Ն. Ա.** Անիզոտրոպ անհամասեռ մարմինների մեխանիկայի մի քանի կիրառական խնդիրների լուծման մեթոդներ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 16-23:
2. **Ղարախանյան Կ. Ի., Կուտուզյան Ն. Ա.** Պահպանման օրենքները և տարածության ու ժամանակի համաչափությունը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 24-28:
3. **Մկրտչյան Լ. Ա.** Բնական ռիսկի գնահատման և կառավարման որոշ սկզբունքները // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 150-155:
4. **Кутузян Н. А., Саркисян В. С.** Поперчные колебания анизотропной прямоугольной пластинки в переменном температурном поле // Международная научная конференция “Вычислительная математика и математические проблемы механики” , Украина, Львов, 2009.
5. **Саркисян В. С., Айрапетян В. Ж., Кутузян Н. А.** Решения некоторых задач механики анизотропных неоднородных тел с помащью известных функций // Материалы международного семинара “Актуальные проблемы нелинейной механики оболочек” посв. памяти А. В. Сеченкова, Казанский государственный университет, Казань, 2008, с. 107-108.

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝ Սիմոնյան Արմեն Արշալույսի**, Ռուսաստանի Բնական և էկոլոգիական գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական գիտ.դոկտոր, պրոֆեսոր

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Ավագյան Մարտին Պատվականի -** գյուղ. գիտ. դոկ., դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի -** կենս. գիտ. թեկ., ԳՊՀ դոցենտ
3. **Բատիկյան Իդա Հրանտի -** կենս. գիտ. թեկ., դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Բաղդասարյան Կարեն Կառլոսի -** գյուղ. գիտ. թեկ., դոցենտ,
5. **Գրիգորյան Ստասիկ Մնացականի -** գյուղ. գիտ. թեկ., ԳՊՀ դոցենտ
6. **Սիրականյան Մարինե Սաշայի -** ամբիոնի դասախոս
7. **Հովհաննիսյան Մարինե Հրահատի -** լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Այվազյան Գրիշա Բաղդասարի** - քիմ. գիտ. թեկ., ԳՊՀ դոցենտ
2. **Բեկետովսկի Դմիտրի** - կենս. գիտ. թեկ.
3. **Գրիգորյան Վալերի Վոլոդյայի** - կենս. գիտ. թեկ., դոցենտ,
4. **Թադևոսյան Արտաշես Վահանի** - տեխ. գիտ. թեկ., դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

5. **Ղազարյան Կարեն Արամայիսի** - կենս. գիտ. թեկ.
6. **Ղազարյան Պետրոս Արամի** – կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
7. **Մարգարյան Անահիտ Սամվելի** - կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
8. **Մարտիրոսյան Գևորգ Վոլոդյայի** - կենս. գիտ. թեկ.
9. **Մխիթարյան Ազնիվ Կառլենի**-կենս. գիտ. թեկ, ԳՊՀ դոցենտ
10. **Մկրտչյան Սերգեյ Միքայելի** - կենս. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
11. **Մկրտչյան Անժելա** - կենս. գիտ. թեկ.
12. **Նիկողոսյան Արմենուհի Արմենակի** –կենս. գիտ. թեկ., ԳՊՀ դոցենտ
13. **Սիմոնյան Նիկոլայ Դերենիկի** - ամբիոնի դասախոս
14. **Սիմոնյան Ռուզան Մաքսիմի** - կենս. գիտ. թեկ., ԳՊՀ դոցենտ
15. **Փանոսյան Հովիկ Հարությունի** - կենս. գիտ. թեկ., ԳՊՀ դոցենտ

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| *Թեմայի անվանումը* | *Ղեկավար* |
|---|---|
| 1. Սևանի էնդեմիկ ձկների կենսաէներգետիկական առանձնահատկությունները՝ կապված լճի էկոլոգիական պայմանների հետ: | Ա.Ա. Սիմոնյան<br>անդամներ<br>Ի.Հ.Բատիկյան<br>Ա.Ս.Մարգարյան |
| 2. Ակտիվ թթվածնի նյութափոխանակության խանգարումները տարբեր պաթոլոգիաներում: | Ռ. Սիմոնյան<br>անդամներ<br>Մ. Սիմոնյան |
| 3. Հայաստանի գերխոնավ հողերի գրունտային ջրերի մակարդակի չափանիշների մշակում | Ս.Մ.Մկրտչյան<br>անդամներ<br>Մ. Պ. Ավագյան<br>և ուրիշներ |
| 4. Հայաստանի տարածքում երկրաքիմիական անոմալիաներով տեղանքներից էքստրեմոֆիլ մանրէների և տարբեր տարածաշրջաններից մածնի մերանների կարբոնաթթվային մանրէների մեկուսացումը և դրանց կենսատեխնոլոգիական ներուժը: | Հ. Փանոսյան<br>և ուրիշներ |
| 5. Բնական ջրերի երկաթազերծման նոր արդյունավետ եղանակները: | Գ.Այվազյան |
| 6. Բնական ջրերի արսենազերծման նոր արդյունավետ եղանակները: | Գ.Այվազյան |

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | 1 | 2 | 19 | 5 |

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


1. **Симонян Л. А., Батикян И. Г., Маргарян А. С., Симонян А. А.** Современные представления об этио-патогенетических аспектах эпилепсии, нейрофизиологических и нейрохимических механизмах ее воздействия // Сборник научных статьей Гаварского госуниверситета, 2009, N 11, с. 74-80.
2. **Симонян Л. А., Маргарян А. С., Симонян А. А.** Особенности нарушений метаболизма фосфолипидов в крови и печеночной ткани белых крыс при моделированных коразолом эпилептиформных припадках // Международная научная конференция “Актуальные проблемы интегративной деятельности и пластичности нервной системы”, посвященная 80-летию со дня рождения академика НАНРА и чл.-корр. РАН В.В. Фанарджяна, 2009, с. 286-290.
3. **Симонян А. А., Симонян Л. А., Маргарян А. С., Бадалян Р. Б., Батикян И. Г., Оганнисян М. Г.** Изменения активности АТФ-фосфогидролаз в митохондриях мозга крыс и влияние гипоталамического обогащенного пролином полипептида при коразолиндуцированных эпилептиформных припадках // Сборник научных статьей Гаварского госуниверситета, 2009, N 11, с. 89-93.
4. **Симонян А. А., Симонян Н. Д., Маргарян А. С., Бадалян Р. Б., Батикян И. Г.** Сдвиги в активности $Mg^{2+}$-, $Ca^{2+}$- и $HCO_3^-$-зависимых АТРаз в изолированных митохондриях тканей севанской храмули // Биол. Ж. Армении (в печати), 2009.
5. **Սիմոնյան Ա. Ա.** Մարդու և բնության փոխհարաբերությունների էվոլյուցիան // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 81-89:
6. **Սիմոնյան Ա. Ա., Սիմոնյան Ն. Դ., Մարգարյան Ա. Ս., Բատիկյան Ի. Հ.** ԱՏՖ-ֆոսֆոհիդրոլազային ակտիվության առանձնահատկությունները Սևանի կողակի երկու սեռերի հյուսվածքներից անջատված միտոքոնդրիումներում // ԳԱԱ Զեկույցներ (տպագրության մեջ է), 2009:
7. **Գրիգորյան Վ. Վ., Գրիգորյան Լ. Վ.** Փարախային տզերի ձևաբանական և կենսաբանական որոշ առանձնահատկություններ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 102-104:
8. **Григорян В. В., Нагашян О. З., Щербаков О. В.** Санитарнопаразитологическая оценка сточных вод Ереванской станции аэрации // ՀՊԱՀ գիտական հոդվածների ժողովածու, 2009:
9. **Knaryan V. H., Kevorkyan G. A., Hakobyan V. P.** Stress and trauma inhibit uptake of glutamic acid in rat cerebral cortex slices // Neurochemical I., 2008, v.25, N4, p. 306-307.
10. **Симонян Р. М, Аракелян Л. Н., Бабаян М. А., Тадевосян А. А., Оксузян Г. Г., Симонян Г. М., Алексанян С. С., Симонян М. А.** Повышение уровней сывороточных изоформ цитохрома В $_{558}$ у самок белых крыс по сравнению с особями мужского пола // Мат. конф., посв. 75-летию основания гематологического центра им. Р. Еоляна, Кровь, 2008, N 2(8), с. 95.
11. **Առաքելյան Լ. Ն.** «Կենսատեխնոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2008, Երևան, 22 էջ:

12. **Սիմոնյան Ն. Դ.** Սիգ ձկնատեսակի տարածման և պաշարների տեղաշարժերը Սևանա լճում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 94-99:
13. **Simonyan R. M., Simonyan G. M., Babayan M. A., Arakelyan L. N., Melkonyan L. G., Chaushyan E. S., Simonyan M. A., Galoyan A. A.** The elevation of cytrochrome $B_{558}$ isoformes levels in rat tissue cell membranes, mitochondria and nuclei after electrical stimulation of supraoptic and paraventricular nucleus of hypothalamus. International symposium, Brain immune system // Neurochem, and neuroendocrine aspects, dedic. 80th anniversary of acad. A. Galoyan, Yerevan, 2009, p. 95.
14. **Тадевосян Л. Н., Симонян Г. М., Симонян М. А., Аракелян Л. Н., Айрапетян Р. Л., Геворгян Г. А.** Различия в толерантности металлопротеинов анти- и прооксидантной активности крови крыс после аэробного инкубирования крови с циклофосфатидом // Мед. Наука Армении, 2009, N 2, с. 57-65.
15. **Тер-Тадевосян Л. П., Саркисян Л. В., Ераносян Л. А., Аракелян Л. Н., Ширинян Э. А., Галоян А. А.** Ферменты углеводно-фосфорного обмена в костном мозге и селезенке при десимпатизации. Эффекты нейропептида PRP-1 // Нейрохимия, 2009, (в печати).
16. **Мелконян Л. Г., Симонян Р. М., Симонян Г. М., Бабаян М. А., Аракелян Л. Н., Айрапетян Р. Л., Симонян М. А и Галоян А. А.** Повышение уровня NADPH- зависимой $O_2^-$-продуцирующей и ферригемоглобинвосстанавливающей активностей изоформ цитохрома $b_{558}$ из мембран, митохондрий и ядер клеток органов крыс после электрической стимуляции супраоптик и паравентрикулярных ядер (SON и NPV) гипоталамуса // Нейрохимия, 2009, (в печати).
17. **Panosyan H. H.** Effects of high temperature on the polar lipid pattern and fatty acid composition of thermophilik bacilli // Programme and Attracts of FEBS Workshop “Lipids as regulators of cell function”, Island of Spetses, Greece, 2008, p. 39-40.
18. **Փանոսյան Հ. Հ.** Կյանքը ջրի եռման կետում // Բնագետ. Գիտահանրամատչելի և գիտամեթոդական հանդես, N 3-4, 2008, էջ 27-30:
19. **Паносян О. О., Тозалакян П. В., Попов Ю. Г.** Получение L-аспартата из фумарата аммония с помощь иммобилизованных термофильных бацилл // Материалы XI конференции Гаварского государственного университета (Естественные науки), N 11, **2009**, с. 111-116
20. **Panosyan H. H.** Mikrobial Community in Warm and Hot Springs of Armenia // 3th Congress of European Microbiologists FEMS 2009, Microbes and Man-interdipendence and future challenges, Gothenburg, Sweden, 2009, p. 261.
21. **Ղազարյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Վ.** Թեղուտ գյուղի՝ որպես էկոլոգիական ռիսկային տարածքի, շրջակա անտառների հողերի ընդհանուր բնութագիրը // «էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում» միջազգային կոնֆերանս, ԵՊՀ, Երևան, 2008:
22. **Գրիգորյան Ս. Մ.** «Հացահատիկային մշակաբույսերի սերմերի որակի գնահատումը» թեմայով լաբորատոր-գործնական պարապմունքներ անցկացնելու համար մեթոդական ցուցումներ, Երևան, 2009:
23. **Գրիգորյան Ս. Մ.** «էկոլոգիա. հարցեր և պատասխաններ» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, 98 էջ:
24. **Գրիգորյան Ս. Մ.** Ավելուկի տեսակները, արդյունավետությունը և բերքավաքի ժամկետները Գեղարքունիքի մարզում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 99-102:

25. **Գրիգորյան Ս. Մ, Նաջարյան Ռ. Ն.** ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները // Գիտաարտադրական կոնֆերանսի նյութեր, Երևան-Գյումրի, 2009, էջ 12-15:
26. **Մկրտչյան Ս. Մ., Ավագյան Մ. Պ.** Գեղարքունիքի մարզի հիդրոմորֆ լանդշաֆտների գրունտային ջրերի մակարդակի օպտիմալ խորության որոշումը հացազգիների համար // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 68-71:
27. **Ավագյան Մ. Պ., Մկրտչյան Ս. Մ.** Գեղարքունիքի մարզի գերխոնավ ոռոգելի հողերի ակտիվ շերտի օպտիմալ խոնավության որոշումը հացազգիների համար // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 71-74:

# ՔԻՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ`** **Ավետիսյան Ֆրունզե Վազգենի**,
քիմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

## *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Ավետիսյան Կարինե Սամվելի -** քիմիական գիտ. թեկնածու
2. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի -** տեխնիկական գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Ոսկանյան Անուշ Ավետիքի -** լաբորանտ

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և վնասատուների դեմ պայքարի համար անհրաժեշտ նյութերի սինթեզներ (պեստիցիդներ և պարարտանյութեր):

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 4 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ավետիսյան Ֆ. Վ.** և հեղինակային կոլեկտիվ. Դիազիրիդինիլպիրիմիդին ածանցյալների սինթեզը // (գտնվում է տպագրության մեջ):
2. **Ավետիսյան Ֆ. Վ.** և հեղինակային կոլեկտիվ. Ֆունգիցիդ 4-մեթիլ-6ամինա-2-S-մեթիլդիազիրիդինիլը (ուղարկված է ստանալու ՀՀ-ի արտոնագիր):
3. **Аветисян А. А., Алванджян М., Аветисян К. С.** Новые цинтезы на базе 4-гидрокси-2Н-хромен-2-онов // Журнал Органической Химии, 2009, т. 45(7), с. 1098-1101.
4. **Հովհաննիսյան Ա. Պ.** Միկրոբասպան հատկությամբ օժտված նոր պոլիմերի սինթեզման որոշ առանձնահատկություններ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 44-46:

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝** **Մնացականյան Բորիս Պուտիկի,**
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Ավագյան Արամայիս Ռոստոմի -** աշխարհագրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Գագինյան Ռուդոլֆ Խաչիկի -** աշխարհագրական գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Թորոսյան Միտուշ Մարտինի -** աշխարհագրական գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Մուրադյան Էդիկ Կամսարի -** տեխնիկական գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Զանոյան Ռիտա Աշոտի -** լաբորանտ

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սևանի ավազանի բնառեսուրսային ներուժի համալիր գնահատականը:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | 1 | - | 18 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Մնացականյան Բ. Պ.** Գետավազանային մոտեցումը լանդշաֆտագիտաբանական հետազոտություններում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 134-137:
2. **Մնացականյան Բ. Պ., Չիլինգարյան Լ. Ա.** Սևանա լճի մակարդակի բարձրացման ջրատնտեսական նախադրյալները արդիական ասպեկտով // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 10, էջ 181-185:
3. **Մնացականյան Բ. Պ., Չիլինգարյան Լ. Ա.** Սևանի ավազանի գետային հոսքի բնութագիրը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 10, էջ 198-203:
4. **Մնացականյան Բ. Պ., Աղաջանյան Լ. Օ.** ՀՀ տարածքում ձնածածկույթի փոփոխությունների բացահայտումը և գնահատումը // Երկրաբանության և աշխարհագրության ժամանակակից հիմնահարցերը: Պրոֆ. Վ. Ա. Ավետիսյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական աշխատանքների ժողովածու, Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջ 40-45:
5. **Մնացականյան Բ. Պ., Սարգսյան Վ. Հ., Չիլինգարյան Լ. Ա.** Հայաստանում ջրի սակավության սեզոնային անհամաչափ բաշխման և առավել խոցելի տարածաշրջանների բացահայտումը կլիմայի փոփոխության պայմաններում // Երկրաբանության և աշխարհագրության ժամանակակից հիմնահարցերը: Պրոֆ. Վ. Ա. Ավետիսյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական աշխատանքների ժողովածու, Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջ 46-53:
6. **Մնացականյան Բ. Պ., Պողոսյան Տ. Վ.** Գետավազանի ջրագրաձևաչափական վերլուծությունը որպես առավելագույն հոսքի ուսումնասիրման կարևոր պայման // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 137-141:
7. **Մնացականյան Բ. Պ., Թադևոսյան Գ. Պ.** Լոռու մարզի ջրագրական առանձնահատկությունները ջրօգտագործման խնդիրների տեսանկյունից // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 10, էջ 106-112:
8. **Մնացականյան Բ. Պ., Պողոսյան Տ. Վ.** ՀՀ տարածքում Կուրի ավազանի գետերի էրոզիայի էներգետիկ պոտենցիալի տարածական տարբերությունների մասին // Երկրաբանության և աշխարհագրության ժամանակակից հիմնահարցերը: Պրոֆ. Վ. Ա. Ավետիսյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական աշխատանքների ժողովածու, Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջ 26-32:
9. **Мнацаканян Б. П., Чилингарян Л. А.** Оценка изменения водного баланса озеро Севан при понижении его уровня // Материалы конгресса ЭКВАТЕК-2008, ш/электр. ресурс, Москва, 2008, с. 8.
10. **Мнацаканян Б. П., Погосян Т. В.** О вопросе пространственного распределения влажности в бассейнах горных рек // Материалы международной конференции ''Актуальные проблемы географии горных регионов'', Тбилиси, 2008, с. 294-298.
11. **Мнацаканян Б. П., Тадевосян Г. П.** Морфометрические и структурные особенности гидрографической сети водосборных бассейнов горных рек (на примере

бассейна р. Дебед) // Материалы международной конференции ''Актуальные проблемы географии горных регионов'', Тбилиси, 2008, с. 305-310.
12. **Мнацаканян Б. П., Чилингарян Л. А., Казарян Ц М., Саркисян В. О.** Проблемы управления водными ресурсамы стран Южного Кавказа // Материалы международной конференции, октябрь 1-3, 2008, Ереван, Известия Государственного аграрного университета Арменнии, с. 90-96
13. **Ավագյան Ա. Ռ.** Ասիա // Երևան: Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, II մաս, 2009, 316 էջ (մենագրություն):
14. **Ավագյան Ա. Ռ., Հովհաննիսյան Գ. Ժ.** Հոգևոր հոգեբանական գործոնների դերը բնական (ֆիզիկական) աշխարհագրության ուսուցման գործում // Բնագետ, Երևան, 2009, N 4, էջ 4:
15. **Գագինյան Ռ. Խ.** Գեղարքունիքի մարզի մակերևույթի արտադրական օգտագործման հարցեր // Գավառի պետական համալսարանի Գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 10, էջ 150-155:
16. **Гагинян Р. Х.** Палеогеоморфология вулканических областей Армении и проблемы использования их водных ресурсов // Отечественная геоморфология: прошлое, настоящее, будущее. Материалы XXX пленума геоморфологи комиссии РАН., 15-20 сентября 2008 г., Санкт-Петербург, 2008, с.120-121.
17. **Гагинян Р. Х., Давтян П. Г.** Связь селеобразующих процессов с засухами (на примере Республики Армения) // Селевые потоки: катастрофы, риск, прогноз, защита., Труды международной конференции, Пятигорск, 2008, с. 99-101.
18. **Гагинян Р. Х., Халатов В. Ю.** Геоэкологические аспекты рационального использования подлавовых вод вулканических областей Республики Армения // Вестник МГПУ, серия Естественные науки, 2008, N 2(24), с. 23-27.
19. **Պոտոսյան Ա. Ա., Թորոսյան Մ. Մ.** ՀՀ գյուղական բնակչության շարժընթացի հարցի շուրջ // Գավառի պետական համալսարանի Գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 11, էջ 156-159:
20. **Թորոսյան Մ. Մ., Պոտոսյան Ա. Ա.** Հայաստանի բնօգտագործման առանձնահատկությունները 1925-1927թթ. // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 11, էջ 160-168:

# ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝** **Մելիքյան Հենրիկ Աշոտի**,
տեխնիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Աֆրիկյան Տելեմակ Հայկի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Հակոբյան Կարեն Պարույրի** - տեխ. գիտ. թեկնածու
3. **Հակոբյան Մամիկոն Ջալիբեկի** - տեխ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
4. **Բոշյան Նաիրա Հովիկի** - դասախոս
5. **Բաղդոյան Շուշան Գևորգի** - լաբորանտ

## ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Շիրվանյան Վալերիկ Լևոնի -** ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Հակոբյան Մաքսիմ Ասատուրի -** տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. **Խուրշուդյան Արմեն Կորյունի -** տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Դարբինյան Ալբերտ Սարգսի -** դասախոս
5. **Ղուկասյան Ելենա Արարատի -** դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարդ համակարգերի մոդելավորման, օպտիմալ կառավարման մեթոդների և նրանց կիրառական ծրագրային փաթեթների մշակում:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցում-ների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | 4 | 9 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Մելիքյան Հ. Ա., Արևշատյան Ս. Ս.** Համակարգչային տեստավորման ավտոմատացված համակարգի մշակման մի տարբերակ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 28-31:
2. **Մելիքյան Հ. Ա.** Տարածքային ավտոմատացված համակարգերի օբյեկտների աշխատունակության վերականգնման մեթոդիկա // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 31-34:
3. **Մելիքյան Հ. Ա.** Համակարգչային տեստային առաջադրանքների տեսակները և դրանց ներկայացվող պահանջները // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 34-39:
4. **Մելիքյան Հ. Ա.** Համակարգչային տեստավորման տեստային առաջադրանքների մշակում // Հեղինակային հրատարակություն, Երևան, 2009:
5. **Մելիքյան Հ. Ա., Ավետիսյան Ռ. Ա., Մարկոսյան Ա. Ա.** Կառավարման ավտոմատացված համակարգեր // Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան: Պոլիտեխնիկ, 2009:
6. **Աֆրիկյան Տ. Հ.** Կողմնորոշված հատիկներով հղկասկավառակներ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 39-44:

7. **Հակոբյան Մ. Ա.** Գրաֆիկական ինֆորմացիայի նկարագրման լեզու // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 46-51:
8. **Հակոբյան Մ. Զ., Բարսեղյան Մ. Հ.** «MATLAB» համակարգը ուսումնական գործընթացում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 51-56:
9. **Հակոբյան Մ. Զ.** Փոքր հզորության էլեկտրաշարժիչների մոդելավորումը MATLAB ծրագրային փաթեթի կիրառմամբ // ՀՊՃՀ-ի Լրաբեր-76: Գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու: Հ. 1, մաս 1, Երևան, 2009, էջ 505-510:
10. **Акопян М. З., Егиазарян Г. Г., Мхитарян Э. А.** О компенсации кинематических обратных связей в системах стабилизации с одним несоосным оптическим датчиком // ՀՊՃՀ-ի Լրաբեր -76: Գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու, Հ. 1, մաս 1, Երևան, 2009, էջ 487-491:
11. **Հակոբյան Մ. Զ.** Կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում մասնագիտության բակալավրական ուսուցման նախաավարտական պրակտիկայի անցկացման և ավարտական աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ // Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009:
12. **Հակոբյան Մ. Զ.** Էլեկտրոնիկա և սխեմոտեխնիկա // «Սխեմոտեխնիկա» առարկայից կուրսային աշխատանքների կատարման ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, հեղինակային հրատարակություն, 2009:
13. **Բաղդոյան Ճ. Գ.** Էլեկտրոնային պատկերների ստացման որոշ հարցեր // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Բնական գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 56-59:

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝ Սարգսյան Վահան**

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Հասասյան Գագիկ -** դասախոս
2. **Ասոյան Դավիթ -** դասախոս

# ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ղազոյան Համլետ Գրիշայի,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ

Դեկանի տեղակալ՝ Գևորգյան Գոհար Վոլոդյայի

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

| Դասիչ | Մասնագիտություն |
|---|---|
| 030400 | Պատմություն (իրավունքի հիմունքներ) |
| 030500 | Իրավագիտություն |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) |

Մասնագիտացումներ՝

| | |
|---|---|
| (բակալավրի աստիճան) | մանկավարժություն |
| (մագիստրոսի աստիճան) | իրավագություն |
| | պատմություն. մանկավարժություն |

Ուսանողների թիվը՝ 335

Շրջանավարտների թիվը՝ 72

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2008-2009 ուսումնական տարում Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետն աշխատել է ուսումնական պլաններին համապատասխան:

2009-2010 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը հաշվի է առնում նախորդ տարիների փորձը, կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջները, ինչպես նաև բուհի առջև ծառացած խնդիրները, որոնք պայմանավորված են ֆակուլտետի և մասնագիտությունների առանձնահատկություններով:

Կրթության համակարգում ժամանակի պահանջը ուսման որակի բարելավումն է, և քանի որ այն կարճատև ժամանակահատվածում կամ էլ հապճեպ լուծվելիք խնդիր չէ, ուստի 2009-2010 ուստարվա հայեցակարգի հիմքը ուսման որակի բարելավման հարցն է, որը ենթադրում է երկարատև, հետևողական, արմատական փոփոխություններ, որոնցով և պետք է ապահովվի առաջընթացը:

Առօրյա գիտակցական մակարդակում, ամենօրյա աշխատանքային ընթացքի մեջ թվում է՝ որակի ըմբռնումը պարզ է, ամեն ինչ հասկանալի: Բայց տեսական մակարդակում, այն էլ կրթական համակարգում, երբ մեթոդաբանական խնդիրներ պետք է լուծվեն, մասնավորապես հայեցակարգի նկատմամբ կիրառելիս, որակը հանդես է գալիս որպես ընդհանրական, ինչ-որ առումով հարաբերական հասկացություն, որն էլ հենց շահարկումների տեղիք կարող է տալ: Տեսական մակարդակում մյուս վտանգն այն է, որից պետք է փորձենք խուսափել, որ որքան շատ է փորձ արվում հստակեցնել «որակ» հասկացության շրջանակները, այնքան կարծես ավելի քիչ տեղ է թողնվում նորարարության ու ստեղծագործական մոտեցման համար, մինչդեռ հենց նորարարությունը և ստեղծագործական մոտեցումը պետք է հայեցակարգի բաղկացուցիչ մասերը լինեն: Այսպիսով, կրթական գործընթացի որակի բարձրացման նպատակով բավարար չէ կենտրոնանալ կրթության մուտքային գործոնների և գործընթացների վրա: Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել ելքային ցուցանիշների վրա, այսինքն՝ ինչպիսի արդյունքներ ենք ունենում, ինչպիսի մասնագետներ թողարկում:

Հայեցակարգային նման մոտեցման դեպքում գլխավոր ցուցանիշներն են դառնում սովորողների ուսման առաջադիմությունը, գերազանց ու լավ գնահատականներ ստացողների քանակը ընդհանուրի մեջ, ցածր առաջադիմության պատճառով դուրս մնացածների թիվը, գործատուների բավարարվածությունը համալսարանի պատրաստած մասնագետներից: Միաժամանակ, խիստ կարևորում ենք դասախոսի վարկանիշի բարձրացումը:

Ֆակուլտետի զարգացման գործընթացում կարևորում ենք նաև հասարակական կարծիքի ազդեցությունը: Այս տեսանկյունից ֆակուլտետում ուսուցանվող երեք մասնագիտություններից հասարակայնորեն բարձր վարկանիշ /նաև բուհի առումով/ ունի իրավագիտություն մասնագիտությունը, վկայությունը. ոչ միայն դիմորդների ու ընդունելության քննությունների արդյունքներն են, այլև մյուս մասնագիտական խմբերից տեղափոխվածների /տարեկան միջինը 10-15 ուսանողներ/, ինչպես նաև վերջին տարիներին երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու ցանկություն հայտնածների /տարեկան կտրվածքով 4-5 ուսանողներ/ թիվը: ՀՀ կառավարության կողմից ԳՊՀ-ին հատկացված ուսանողական տեղերի քանակի հարաբերակցությունը իրավագիտություն խմբերում պահպանվում է /միջին խտությունը՝ 45 ուսանող/: Մագիստրոսական խմբերում ևս նորմատիվային

հարաբերակցությունը սահմանված թվաքանակի առումով պահպանվում է: Դեկանատի և իրավագիտության ամբիոնի առաջնահերթ խնդիրն է այս վարկանիշը պահպանել, պատրաստել որակյալ մասնագետներ: Պատմություն մասնագիտությունը ունի միջին վարկանիշ և իրավունքի հիմունքների ներմուծումն ու կրթական ծրագրերում իրավագիտական առարկաների ավելացումը, կարծում ենք, հասարակայնորեն պայմանավորված վարկանիշի բարձրացման լուրջ և ծանրակշիռ երաշխիք է / միջին խտությունը 15 ուսանող, իսկ մագիստրատուրայի խմբերը ևս մնում են միջինի շրջանակներում. միջինը 5 ուսանող/: Վարկանիշային անկում է նկատվում տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա բաժնում /միջին խտությունը 10, առանձին խմբերում 4 և 6, մագիստրատուրայում 2/: Լուծումը տեսնում ենք հանրապետությունում բարձր վարկանիշ ունեցող հոգեբանություն մասնագիտության լրացուցիչ ներառումը և ընդունելության քննությունների ցանկում նոր անվանմամբ ներկայանալը՝ «Տարրական կրթության մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությամբ: Ներկայիս պայմաններում դպրոց-բուհ կապի սերտացման անհրաժեշտությունը նոր խնդիրներ է առաջադրում՝ սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում: Ելքային ցուցանիշները և հանրորեն տեսանելի վարկանիշը բավականին ակնառու ի հայտ են գալիս ուսումնական գործընթացներին զուգահեռ գործնական իրադրություններում և մեզ հնարավորություն ընձեռում տեսնել մեր ուսանողներին որոշակի գործընթացներում: 2008-2009 ուս. տարվա ընթացքում պարբերաբար ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվեցին բազմաբնույթ հարցերի քննարկումներ, տարաբնույթ միջոցառումներ: Եթե նկատի ունենանք, որ դրանց նախորդել էր արտասահմանում ուսանած մեր ուսանողների հաշվետվությունները օտարերկրացի հյուրերի ներկայությամբ, ապա պատկերը կամբողջանա: Այսպիսի իրավիճակներում է, որ ի հայտ է գալիս ուսանողի մտածելու կարողության զուգակցումը ստացած հմտությունների, ձեռք բերած գիտելիքների հետ: Նման միջոցառումների արդյունքում ևս ուսանողներին սովորեցնում ենք խորհրդածել, զգալ, զարգանալ: Դասախոսակենտրոն համակարգը ուսանողակենտրոն համակարգով փոխարինելու պարագայում օբյեկտիվ պայմաններ են ստեղծվում ուսանողին սովորեցնել՝ ստեղծագործաբար մտածել կարողանալու, կողմնորոշվելու, գիտելիքը կիրառելու, հաղորդակցության հմտություններ ուսուցանելու ուղղությամբ: Այս ամենը աչքի առաջ ունենալով՝ ձևավորում ենք Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետին և համապատասխան ամբիոններին բնորոշ ուսման որակի ապահովման բաղադրիչներից մեկը՝ «սովորեցնել մտածել» կարգախոսով: Սա ուսանողի անհատականությունը բնորոշող գործոն է և կարող է կարճ ժամանակահատվածում դառնալ կամ վերածվել հասարակայնորեն պայմանավորված արտաքին վարկանիշի, որքանով այն անմիջապես տեսանելի ու գնահատելի է: Իսկ նման գնահատականներ մեր ուսանողների հասցեին միշտ էլ հնչել են, այսինքն՝ ստեղծագործաբար մտածելու յուրահատուկ կարողություն ունեն, ինչը խրախուսելի է:

Քանի որ կրթության որակի բարելավման ընթացքը միագործոն չէ, այլ փոխկապակցված համալիր միջոցառումների համակարգ է՝ իր որոշակի ուղղվածությամբ, գործողություններով և ժամանակահատվածով, ուստի այն ներկայացվում է ըստ ոլորտների. ուսումնամեթոդական աշխատանքներ՝ այս ոլորտում առաջնահերթ խնդիրը ուսանողների ակադեմիական առաջադիմության բարձրացմանը ուղղված միջոցառումներն են: Նախատեսվում է ուսման առաջադիմության բարձրացում 10% -ով, որից 4-ը առաջին, իսկ 6% -ը՝ երկրորդ կիսամյակում: Ունենք իրական երաշխիքներ ու հնարավորություններ, քանի որ նախատեսվող նմանատիպ միջոցառումներով նույնատիպ ցուցանիշ արդեն իսկ ապահովել ենք նախորդ ուսումնական տարվա ընթացքում՝ առաջադիմությունը 52%-ից հասցնելով 62 %-ի: Գործողությունների հերթականությունը հետևյալն է. լուրջ անհատական աշխատանք տանել նախորդ կիսամյակում

առարկայական պարտքեր ունեցող ուսանողների հետ: Կան ոչ միայն ակադեմիապես թույլ ուսանողներ, այլև վատ ցուցանիշներ ունեցող խմբեր, ներկայումս այդպիսիք են իրավագիտության 4-րդ և պատմության 2-րդ կուրսերը, ընդ որում `իրավագիտություն 4-րդ կուրսում 55 ուսանողներից 31-ը ունեին պարտքեր, իսկ պատմական 2-րդ կուրսում 17-ից` 9-ը: Եթե հասնենք նրան, որ այս երկու խմբերում կիսով չափ կրճատվի անբավարար գնահատական ստացողների քանակը, ապա մեր նախանշած թիվը կապահովենք, իհարկե պայմանով, որ առաջին կուրսերը առնվազն պահպանեն իրենց նախորդների տվյալ ժամանակահատվածի ցուցանիշները: Հետևությունն այն է, որ առաջին կուրսերի վրա հատկապես պետք է լուրջ ուշադրություն դարձնել բոլոր առումներով: Վերջին կիսամյակում առավել ակնհայտ դրսևորվեց այն միտումը, որը կանվանեինք լավ առաջադիմություն ունեցող և առաջատար և վատ ցուցանիշներ ունեցող հետնապահ ուսանողների խիստ բևեռացում: Կիսամյակային ցուցանիշներով այն պարզ տեսանելի է, այսպես. 47 միայն գերազանց, 55 գերազանց և լավ, 31 խառը, և միայն բավարար ստացող ընդամենը 6 ուսանող: Սակայն մտորելու տեղիք են տալիս 80 անբավարար ստացողները, ովքեր 90%-ով լուծարային շրջանում ստանում են բացառապես բավարար գնահատականներ և ձևավորվում է կայուն միջակությունը: Սրանք այն ուսանողներն են, որոնց հետ տարվող աշխատանքի արդյունավետությամբ է պայմանավորված ֆակուլտետի առաջընթացը: Իսկ քննական և լուծարային շրջանում անբավարար արդյունքներ ցուցաբերած «անհույս» ուսանողները հեռացվում են համալսարանից:

Աշխատանքների մյուս ուղղությունը ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարելագործումն է: Այս գործընթացում տեսնում ենք 2 կարգի վտանգ և կարևորը դրանցից խուսափելն է, մեկը` «դոգմատիզմն» է /կաղապարված մնալ/, սա կարող է ի հայտ գալ կրթական չափորոշիչներին բացառապես կառչած մնալու դեպքում, և, «ռելյատիվիզմը»` չափորոշիչներից անչափ շեղվելու վտանգը: Ներկայիս արժեքային մոտեցումները դինամիկ փոփոխող անցումային հասարակության մեջ արագ կարող են հնանալ և ժամանակավրեպ դառնալ առանձին գաղափարներ, հասկացություններ, մեթոդներ, նորմեր և այլն: Ուսանողների լավ սովորող ու ակտիվ մասը նման երևույթներին շատ արագ, անգամ բացահայտ արձագանքում են: Այս առումով շարունակելու ենք նախորդ կիսամյակի փորձը, այն է` ուսումնական պլանները մանրակրկիտ քննարկել ու լրամշակել, ժամանակավրեպը զգալ ու հանել, նորը նկատել ու ներառել: Եթե առաջիկայում ուսանողների մեծամասնության կողմից կնկատվի անտարբեր վերաբերմունք որևէ դասընթացի կամ դասընթացի որոշ մասի նկատմամբ, ապա արմատները պետք է փնտրենք նաև վերը նշված հանգամանքներում, հարկ եղած դեպքում կարող ենք վերանայել անգամ հատկացված դասաժամերի քանակը:

Կրեդիտային համակարգը դեռևս լիովին չի բացահայտել իր հնարավորությունները, ուստի ուսանողների գիտելիքների բազմագործոնային գնահատման համակարգի յուրաքանչյուր գործոնի մանրակրկիտ ուսումնասիրությունը և հնարավորությունների բացահայտումը մնում է առաջիկա ուսումնական տարվա, գուցե և ավելի երկար ժամանակահատվածի կարևորագույն գործը: Այսպես. անհատական աշխատանքների տարբեր ձևերի ընտրություն, հանձնարարվող աշխատանքների թեմաների վերանայում և թարմացում, գործնական պարապմունքների անցկացման մեթոդների կատարելագործում, լուրջ ուշադրություն ընթացիկ ու ամփոփիչ քննությունների անցկացման գործընթացի վրա: Նշված ոլորտներում շատ անելիքներ կան և 2009-2010թ. գործողությունների ծրագրում դրանք մանրամասն, ըստ ժամկետների, նախատեսված են և կիրագործվեն համապատասխան բարոյահոգեբանական ու ստեղծագործական մթնոլորտում: Մասնակիորեն անդրադառնամ գործոններից մեկին` ընթացիկ քննություններին, որի ընդգծված դրական պահն այն է, որ տվյալ դասաժամին ապահովվում է ամենաբարձր հաճախելիությունը, մեծամասամբ 100%:

Գրավորները ստուգելուց հետո կուրսի ամենաբարձր առաջադիմությունը գրանցվում է մոտավորապես 70%, ցածրը երբեմն՝ 30-40%: Մեկ կիսամյակի ընթացքում 280 ուսանողի հաշվարկով հանձնարարվում և ստուգվում է շուրջ 1500 աշխատանք, տարեկան կտրվածքով՝ 3000-ը: Գործընթացը սկսվում է քննական տոմսեր, թեստեր կամ տարբերակներ կազմելով, հաստատվում են աշխատանքները գրելու, հանձնելու ժամկետները, որոշվում միավորների բաշխման կարգը և գործընթացն ավարտվում է աշխատանքները ստուգելով ու գնահատելով: Այս ծավալուն գործընթացը պետք է օպտիմալ շրջանակներում կազմակերպել, այսինքն՝ նյութը կիսամյակի ընթացքում հավասարաչափ բաշխել, տոմսերը կամ թեստերը համարժեք կազմել, հանձնման ժամկետը ճիշտ ընտրել և այլն: Ուստի, յուրաքանչյուր փուլում պահանջվում է ուշադիր ու սրտացավ մոտեցում, շրջահայացություն, անգամ մանրուք թվացող շտկումն իր մեջ պոտենցիալ դրական արդյունքների ավելացման երաշխիք է պարունակում, մանավանդ, որ կրեդիտային համակարգում մեծամասամբ միջանկյալ գրավորների դրական արդյունքներով և մյուս գործոններով է պայմանավորվում գիտելիքի ամփոփիչ գնահատականը: Կրեդիտային համակարգի ընձեռած հնարավորությունների շրջանակներում դասախոսների զգալի մասը ձերբազատվեց գործնական աշխատանքների ողջ դասաժամը մեկ-երկու ուսանողների ուժերով ու ակտիվությամբ անցկացնելու արատավոր պրակտիկայից: Բազմաթիվ մեթոդներ ու մոտեցումներ կան ամբողջ լսարանը ակտիվացնելու համար, պարզապես ջանք ու եռանդ է անհրաժեշտ, և փոքր խմբերում ակտիվության գործակցի չձևավորելը կարելի է անընդունելի համարել: Ինչ վերաբերվում է ամփոփիչ քննություններին, ապա այստեղ մի տարբերիչ հանգամանք կա: Ոչ կրեդիտային համակարգի դեպքում քննությունները գնահատվում էին «3», «4», «5», իսկ կրեդիտայինում 5-ը ուրիշ «փայլ» ունի՝ «A+»,«A-», «A»: Կրեդիտայինի դեպքում ուսանողը ամփոփիչ քննության է ներկայանում արդեն իսկ որոշակի միավորներ վաստակած, ցավոք, երբեմն դրանց էլ ապավինելով: Սակայն կրեդիտային համակարգը ուժեղացնում է ուսանողի մոտիվացիան, առաջացնում ձգտում, ստիպում մշտապես սովորել:

Հայեցակարգը ներառում է ոչ միայն ուսումնական, այլև գիտական բաղադրիչ: Անհրաժեշտ են կոնկրետ քայլեր գիտական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ, գիտական արդյունքներ, այն է՝ մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և հոդվածներ, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանություններ: Նախատեսվում է բոլոր 3 ամբիոնների դասախոսների ուժերով հրատարակման ներկայացնել 40 հոդված և երկու մենագրություն: Խրախուսելի է, որ հոդվածները լինում են բազմաբնույթ, ակտիվություն են ցուցաբերում այն անձինք, ովքեր թեկնածուական կամ դոկտորական ատենախոսությունների պաշտպանության են նախապատրաստվում: Չնայած դրան՝ ամբիոններին դեռևս պակասում է գիտական աշխատանքների հստակ ուղղվածությունը, որը կարող է համախմբել, կոորդինացնել աշխատակիցների ուժերը: Այսուհանդերձ, 2009-2010 ուս. տարում նշմարվում է որոշակի գիտական ուղղվածություն, օրինակ պատմության ամբիոնը ունի տարածաշրջանում ժողովրդագրական տեղաշարժերի հետ կապված ուսումնասիրության ուղղվածություն, իրավագիտության ամբիոնը ուսումնասիրում է իրավունքը՝ որպես արժեք, նորովի մոտեցում է ցուցաբերվում սահմանադրաիրավական ինստիտուտներին, ուսումնասիրվում են սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները և անչափահասների շրջանում քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները, իսկ հասարակագիտության ամբիոնը գիտական աշխատանքներ է կատարում կյանքի իմաստային հիմնախնդիրների, հայ գրողների փիլիսոփայական հայացքների գնահատման, որբության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների բացահայտման, երեխայի իմացական ոլորտի, առանձին հատկությունների և վարքի հոգեբանա-մանկավարժական զարգացման ուղղությունների վերանայման և հայ

մանկավարժների մանկավարժության ոլորտում ներդրումների արժևորման ուղղությամբ: Կարևորում ենք այն, որ դասախոսների կողմից հրատարակած մենագրությունները, հոդվածները ծառայում են ուսումնական նպատակներին: Դասախոսները և դեկանատն ու ամբիոնները աշխատանքներն այնպես են կազմակերպում, որ ուսանողները թե՛ անհատական ու կուրսային, և թե՛ դիպլոմային աշխատանքներ գրելիս՝ օգտվում են այդ նյութերից, անգամ դրանք նպաստում են ծրագրային մոդուլների յուրացմանը: Ուսանողների հոգսը որոշ առումով թեթևացնելու և մեր գործը մի փոքր ծանրաբեռնելու գնով, առաջարկում ենք դասագրքերի, գրականության և գրադարանային ֆոնդի պակասը լրացնելու հետևյալ տարբերակները. նախ ունենալ բոլոր դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները, իսկ մյուսն էլ դասախոսությունների համառոտագրությունը կամ սղագրությունների հրատարակումն է՝ պրակների ձևով:

Անհրաժեշտ ենք համարում հնարավորինս շատ մասնակիցներ ունենալ միջազգային, հանրապետական և ներբուհական գիտական կոնֆերանսներին՝ թե՛ դասախոսական անձնակազմի և թե՛ ուսանողների մասնակցությամբ. սա գիտահետազոտական աշխատանքների ոլորտում ամբիոնների, ուսանողական գիատակ ընկերության ու դեկանատի ուղղորդված աշխատանքների ցուցանիշն է լինելու:

Հեռանկարի տեսակետից ռազմավարական կարևոր մոտեցում է երիտասարդ, տեղաբնակ դասախոսական կադրերով ֆակուլտետի համալրումը: 2009-2010թ. նախատեսվում է իրավագիտության երկու, հոգեբանության գծով՝ երկու, պատմության մասնագիտության մեկ թեկնածուական ատենախոսությունների պաշտպանություն: Սրան ավելացրած, ակնկալում ենք իրավագիտության երկու և պատմության մեկ դոկտորական ատենախոսությունների պաշտպանություն, ինչը գիտական լուրջ նվաճում կարելի է համարել: Այսպիսով, պատմության ամբիոնում չպաշտպանած դասախոս չի լինելու, մյուս ամբիոններում 2-3-ական չպաշտպանած դասախոսներ կմնան: Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը ներառում է ուսանողական աշխատանքները, որոնց նպատակը սովորողների հասարակական ակտիվության բարձրացումն է: Ուսանողների ակտիվ մասը պետք է պատասխանատվություն ստանձնի, ընկերներին ակտիվացնի, խրախուսի ու ոգևորի, անհրաժեշտության դեպքում հանդիմանի, գուցե այս դեպքում շատ հարցեր ավելի լավ լուծվեն:

Գեղարվեստական բոլոր միջոցառումների նպատակն է ուսանողությանը դարձնել բարձրարժեք՝ էլիտար մշակույթի կրողը և նրանցից ձևավորել բարձրաճաշակ հանդիսատես: 2009-2010 ուս. տարվա ընթացքում ուսանողները կազմակերպելու են դասական երաժշտության հսկաներից Բեթհովենի 240-ամյակին նվիրված միջոցառում, երաժշտական տարբեր գործիքների կիրառմամբ մրցույթ, «Ֆակուլտետը մանրապատումներում» հումորային, երաժշտական միջոցառում և այլ ծրագրերի իրականացում: Ֆակուլտետի գործունեությունը կլուսաբանվի համալսարանի թերթում և ֆակուլտետի ռադիոհանգույցով: Սերունդներին սոցիալական փորձի փոխանցման դերը կարևորելով՝ նախատեսում ենք գիտության, կրթության և այլ բնագավառների նշանակավոր, հասարակության կողմից հարգանքի ու վստահության արժանացած մարդկանց հետ հանդիպումների կազմակերպում:

Եվ վերջապես՝ եզրակացությունը մեկ նախադասությամբ. եղածը արժևորել ու պահպանել, բայց դրանով չբավարարվել, խոստացածը կատարել, փնտրտուքը շարունակել՝ սա է զարգացման երաշխիքը:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ. Գ. Ղազոյան

# ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## *ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Իրավագիտություն | | | | |
| 1-ին | 32 | 7 | 3 | 72 |
| 2-րդ | 46 | 8 | 9 | 80 |
| 3-րդ | 55 | 16 | 12 | 47 |
| 4-րդ | 43 | 15 | 10 | 51 |
| Պատմություն | | | | |
| 1-ին | 21 | 11 | - | 43 |
| 2-րդ | 23 | 10 | - | 52 |
| 3-րդ | 16 | - | 6 | 69 |
| 4-րդ | 17 | 7 | 2 | 53 |
| Տարրական.կրթ. մանկ. և մեթոդիկա | | | | |
| 1-ին | 17 | - | - | 94 |
| 2-րդ | 21 | 2 | 2 | 81 |
| 3-րդ | 5 | 1 | - | 80 |
| 4-րդ | 15 | 5 | - | 53 |
| **Ընդամենը** | **311** | **82** | **44** | **62** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Իրավագիտություն | | | | |
| 1-ին | 16 | 4 | 1 | 56 |
| Պատմություն /իրավունքի հիմ./ | | | | |
| 1-ին | 4 | - | 1 | 75 |
| Մանկ. և մեթոդ. /տարրական կրթության/ 1-ին | 3 | - | 1 | 100 |
| **Ընդամենը** | **23** | **4** | **3** | **65** |

## *ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազանցիկների թիվը | Առաջադիմության %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Իրավագիտություն | | | | |
| 1-ին | 35 | 11 | 8 | 51.4 |
| 2-րդ | 46 | 1 | 8 | 84.7 |
| 3-րդ | 55 | 21 | 13 | 32.7 |
| Պատմություն | | | | |
| 1-ին | 20 | 9 | - | 45 |
| 2-րդ | 23 | 11 | 2 | 47.8 |
| 3-րդ | 15 | - | 5 | 53.3 |
| Տարրական.կրթ. մանկ. և մեթոդիկա | | | | |
| 1-ին | 17 | 2 | 7 | 88.2 |
| 2-րդ | 18 | 3 | 1 | 83.3 |
| 3-րդ | 5 | - | 2 | 100 |
| **Ընդամենը** | **234** | **58** | **46** | **59** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Իրավագիտություն 1-ին | 16 | 4 | 4 | 43.7 |
| Պատմություն /իրավունքի հիմ./ 1-ին | 4 | - | 3 | 100 |
| Ման. և մեթոդ. /տարր. կրթության/ 1-ին | 3 | - | 2 | 66.6 |
| **Ընդամենը** | **23** | **4** | **9** | **68** |

## 2008/2009 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 3 | 2 | 1 | 37 | 2 |

**Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3**

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Քուրքչյան Լուսիկ Ներսեսի,**
մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Օհանյան Հայկ Հեքիմի -** մանկ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Հայթյան Արամ Խաչատուրի -** պատմ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Ալեքսանյան Լիլիթ Էդվարդի -** դասախոս
4. **Կոտոլկյան Թամարա Հակոբի -** դասախոս
5. **Պետրոսյան Նաիրա Ֆաhրադի -** դասախոս
6. **Ղազարյան Օլգա Ալբերտի -** լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Հակոբյան Հրանտ Խաչատուրի -** փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Այվազյան Լեյլի Մկրտչի -** մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. **Բարսեղյան Պարգև Աշոտի -** փիլ. գիտ. թեկնածու
4. **Կազդանյան Սուսաննա Շալվայի -** հոգեբան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Ղաջոյան Համլետ Գրիշայի -** փիլ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
6. **Պողոսյան Ռուբիկ Հակոբի -** հոգեբան. գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Սարգսյան Հովհաննես Լավրենտի -** փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. **Վարդանյան Կամո Երեմի -** հոգեբան. գիտ. թեկնածու, դոցենտ
9. **Զարգարյան Արփինե Հրանտի -** դասախոս
10. **Թովմասյան Լիլիթ Սպարտակի -** դասախոս
11. **Հովհաննիսյան Էդուարդ Սարգիսի -** դասախոս
12. **Հովհաննիսյան Հրաչյա Նորիկի -** դասախոս
13. **Սաֆարյան Ալիտա Սոսի** - դասախոս
14. **Սիդելնիկովա Ռիտա Վյաչիսլավի -** դասախոս

# ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխայի իմացական ոլորտի, առանձին հատկությունների և վարքի հոգեբանա-մանկավարժական զարգացման հիմնախնդիրները:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | 2 | - | 13 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Քուրքչյան Լ. Ն., Հարությունյան Ն.** Բռնության հիմնախնդիրները որպես հոգեբանական ուսումնասիրության օբյեկտ // Անձի զարգացման հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողով, Երևան: ԵՊՀ, 2009, էջ 188-191:
2. **Куркчян Л. Н.** Реформирование образования в сфере работы с социально дезадаптированными несовершенналетними // АГПУ им. Х. Абовяна, кафедра развития и прикладной психологии, Ереван , 2008, с. 347-350.
3. **Հայթյան Ա. Խ.** Համաշխարհային քաղաքական զարգացման միտումները վերջին տասնամյակում /1990-2000 թթ./ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 64-71:
4. **Ղաջոյան Հ. Գ.** Շոպենհաուերի փիլիսոփայությունը և Նար- Դոսի «Մահը» վեպը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 72-85:
5. **Բարսեղյան Պ. Ա.** Հին հայոց դիցաբանական նախնիներ Հայկի և Արամի պաշտամունքային առանձնահատկությունները // Հայ աստվածաբանական (գիտական հոդվածների ժողովածու), Բ, Երևան: ԵՊՀ հրատ., 2008, էջ 111-127:
6. **Բարսեղյան Պ. Ա.** Արայի պաշտամունքային առանձնահատկությունների շուրջ // Հայ աստվածաբանական (գիտական հոդվածների ժողովածու), Բ, Երևան: ԵՊՀ հրատ., 2008, էջ 128-136:
7. **Բարսեղյան Պ. Ա.** Սիկհիզմն արդի աշխարհում // ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երևան: ԵՊՀ հրատ., 2008, էջ 224-244:
8. **Բարսեղյան Պ. Ա.** Աճեմյան Շահե (Հովհաննես) Արմենի // Մեր անվանի դասախոսները, երրորդ մաս, Երևան: ԵՊՀ հրատ., 2009, էջ 20-22:
9. **Բարսեղյան Պ. Ա.** Անահիտ դիցուհու պաշտամունքի մի քանի առանձնահատկություններ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 115-123:

10. **Բարսեղյան Պ. Ա.** Կրոնների պատմություն (Արևելքի ազգային կրոններ, բուդդայականություն) // Երևան: ԵՊՀ հրատ., 2009 (բակալավրիատի ընդհանուր մասնագիտական դասընթացի ուսումնական ծրագիր):
11. **Բարսեղյան Պ. Ա.** Մարդու հիմնահարցը կրոններում // Երևան: ԵՊՀ հրատ., 2009 («Կրոնների պատմություն» մագիստրոսական ծրագրի մասնագիտական դասընթացի ուսումնական ծրագիր):
12. **Օհանյան Հ. Հ.** Դասի պլանավորում Խիկ համակարգով // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 132-136:
13. **Կազդանյան Ս. Շ.** Ուսանողների արժեքային կողմնորոշումների հարցի վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 137-139:
14. **Սիդելնիկովա Ռ. Վ.** Որբության հիմնախնդրի հետազոտությունը տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 140-144:
15. **Саркисян О. Л.** Логический инструментарий как составляющая методологии научного познания // Материали годичной научной конференции РАУ, 2008.

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Հարությունյան Համլետ Մալխասի,**
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Խնկիկյան Օնիկ Սարգսի** - պատմ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Թևոսյան Բաղդասար Մանուցի** - պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Արմենակ Սուրենի** - պատմ. գիտ. թեկնածու
4. **Կիրակոսյան Գասպար Լևոնի** - պատմ. գիտ. թեկնածու
5. **Հակոբյան Արսեն Աշոտի** - պատմ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
6. **Համբարձումյան Ռաֆիկ Հայրիկի** - պատմ. գիտ. թեկնածու
7. **Ղարագյոզյան Արմեն Հայկազի** - պատմ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
8. **Պողոսյան Աշխունեչ Ամիրխանի** - պատմ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
9. **Ռաշիդյան Սուրեն Հակոբի** - ԳՊՀ դոցենտ
10. **Շահբազյան Սոֆյա Կարապետի** - լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Ջոհրաբյան Էդուարդ Լեոնդրուշի** - պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Վարդանյան Արգիշտի Մնացականի** - դասախոս

### ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

| Թեմայի անվանումը | Ղեկավար |
|---|---|

| | |
|---|---|
| 1. Անդրկովկասի էթնիկ վերաբնակեցումը 1830-1920թ.թ. | Ա. Խ. Հայրյան |

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղարքունիքի Գավառը VII դարից 1920թ.:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 2 | - | 1 | 14 | - |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Կիրակոսյան Գ. Լ.** Արևելյան Հայաստանի դպրոցների և աշակերտների թվաքանակը XIX դարի 80-90-ական թթ. // ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, թիվ 2, էջ 37-45:
2. **Կիրակոսյան Գ. Լ.** Գյուղատնտեսական ինքնագործները և վարձու աշխատողները Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում (XIX դարի վերջ) // Պատմա բանասիրական հանդես, 2009, թիվ 1, էջ 29-43:
3. **Կիրակոսյան Գ. Լ.** Մեթոդական դիտարկումներ Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական շերտավորման և ուսուցման վերաբերյալ // Ժամանակակից գիտական պրոբլեմների ուսումնասիրությունը բուհերում: Միջբուհական գիտաժողովի նյութեր: Հ. II, մաս I, Հասարակական գիտություններ: Երևան-Գյումրի, 2009թ., էջ 101-124:
4. **Ղարագյոզյան Ա. Հ.** Գառնման գավառի տեղադրության հարցի շուրջ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 166-177:
5. **Ղարագյոզյան Ա. Հ.** Գառնմանի իշխանությունը X-XI դդ: Փառիսոսի թագավորությունը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 160-166:
6. **Ղարագյոզյան Ա. Հ.** Գառնման // Երևան, 2009, 59 էջ (մենագրություն):
7. **Ղարագյոզյան Ա. Հ.** Մեթոդական ցուցումներ «Հին Արևելքի պատմություն» դասընթացի կուրսային և ստուգողական աշխատանքների վերաբերյալ // Երևան, 2009, 23 էջ, (ուսումնա-մեթոդական ձեռնարկ):
8. **С. Гусейнова, А. Акопян, С. Румянцев** Кызыл-Шафаг и Керкендж: история обмена сёлами в ситуации Карабахского конфликта // Тбилиси, 2008.
9. **Հակոբյան Ա. Ա.** Թաքախոս հայեր. պատմություն և ինքնություն, Armenishch –Deutsche Korrespondenz, 2008, N 4 էջ 50-53 (գերմաներեն):
10. **Հակոբյան Ա. Ա.** Թաքախոս հայեր. պատմություն և ինքնություն // Armenishch –Deutsche Korrespondenz, 2009, N 1. էջ 53-55:

11. **Յակոբյան Ա. Ա.** Փոխանակում և վերաբնակեցում, Armenishch –Deutsche Korrespondenz, 2009, N 3. էջ 55-58 (գերմաներեն):
12. **Պողոսյան Ա. Ա.** «Պազիրիկ» գորգի ծագումնաբանության մասին // «Էջմիածին», նոյեմբեր-դեկտեմբեր, 2008, ԺԲ, էջ 63-79:
13. **Պողոսյան Ա. Ա.** Շարժական մշակութային արժեքների գնահատման չափորոշիչների մասին // ԳՊՅ Գիտական հոդվածների ժողովածու, Յումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 177-183:
14. **Զոհրաբյան Է. Լ.** Արմատական փոփոխություններ բանվոր դասակարգի սոցիալական կարգավիճակում 1990-ական թվականներին // «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, N 1, Երևան, 2008, 10 էջ:
15. **Զոհրաբյան Է. Լ., Տետեյան Ա.** Անդրկովկասյան երկրները Իրանի Իսլամական հանրապետության տարածաշրջանային քաղաքականության համատեքստում // ԳՊՅ Գիտական հոդվածների ժողովածու, Յումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 117-127:
16. **Զոհրաբյան Է. Լ.** Քաղաքակրթությունների երկխոսություն, Իրան-Յայաստան /հնագույն ժամանակներ/ // ԳՊՅ Գիտական հոդվածների ժողովածու, Յումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 150-160:
17. **Zohrabyan E. L.** The subject of the Armenian Genocide in the historografhy of Soviet Armenia //Tanulmanyok az örmeny nepirtás köréből, Budapest, 2009, p. 119-132:

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝** **Մինասյան Կարլեն Արշալույսի,**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Բարխուդարյան Սերգեյ Վլադիմիրի -** իրավ. գիտ. թեկնածու
2. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի -** իրավ. գիտ. թեկնածու, ԳՊՅ պրոֆեսոր
3. **Աֆրիկյան Արևիկ Տելեմակի -** դասախոս
4. **Բախտիկյան Լուսինե Վանիկի -** լաբորանտ

### *ՅԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Յակոբյան Յրանուշ Յրանտի -** իրավ. գիտ. դոկտոր, ԳՊՅ պրոֆեսոր
2. **Յակոբյան Ռուզաննա Խաչիկի -** իրավ. գիտ. թեկնածու, ԳՊՅ պրոֆեսոր
3. **Խաչատրյան Աշոտ Յայկի -** իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. **Գեղամյան Արտյոմ Աշոտի -** իրավ. գիտ. թեկնածու
5. **Ղամբարյան Արթուր Սիրականի -** իրավ. գիտ. թեկնածու, ԳՊՅ դոցենտ
6. **Կիրակոսյան Եղիշե Գրիգորի -** իրավ. գիտ. թեկնածու, ԳՊՅ դոցենտ
7. **Մարգարյան Վահրամ Տելեմակի** - իրավ. գիտ. թեկնածու , ԳՊՅ դոցենտ
8. **Ապրոյան Արսեն Յրաչիկի -** ասիստենտ
9. **Յովհաննիսյան Օլգա Արտյոմի -** դասախոս

10. Մարալյան Աննա Սպարտակի - դասախոս
11. Մուրադյան Պապին Օնիկի - դասախոս
12. Պարսամյան Տիրան Խորենի - դասախոս
13. Վարդանյան Մարզպետ Գոռի - ասիստենտ

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի պայմաններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, քրեական և սահմանադրական օրենսդրության բարեփոխման հեռանկարները:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | - | - | 10 | 2 |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Հ. Հ.** Հայ իրավական միտքը և XXI դարի մարտահրավերները // Զեկուցում Հայ իրավաբանների միջազգային համաժողովում, Երևան, 19.09.2009թ.:
2. **Հակոբյան Հ. Հ.** Կամուրջներն արդեն գցված են // Զեկուցում «Հայկական ճարտարապետությունը և XXI դարը» խորագրով ճարտարապետների համահայկական միջազգային համաժողովում, Երևան, 21.04.2009թ.:
3. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 16-25:
4. **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները // Երևան: Իրավունք, 2008, 516 էջ (մենագրություն):
5. **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության միջոցների մասին // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2008, N 10, էջ 36-50:
6. **Акопян Р. Х.** Основополагающие идеи института конституционной ответственности // Сборник научхых трудов, Телавский государственный университет, Телави, 2008, N 2(24), с. 306-312.
7. **Հակոբյան Ռ. Խ.** Նկատառումներ «Սահմանադրականություն» և «Սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունների վերաբերյալ // Օրենք և իրականություն, Միջազգային իրավաբանական գիտական հանդես, Երևան, 2009, N N 4,6, էջ 1-4, 12-14:
8. **Խաչատրյան Ա. Հ.** «Կուսակցական պետություն». Պետական իշխանության կուսակցականացումը և դրա հետևանքները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 25-32:
9. **Խաչատրյան Ս. Ա.** Հազկերտ Երկրորդի և նրա առաջին նախարար Միհրներսեհի՝ հայերի քրիստոնեությունից հրաժարման մասին հրամանների իրավական վերլուծությունը // ԳՊՀ

Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 41-48

10. **Խաչատրյան Ս. Ա.** Համերաշխությունը որպես իրավունքի ներքին, օբյեկտիվ հատկություն // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 32-41:
11. **Ղամբարյան Ա. Ս.** Դատարանում մեղադրանքը փոխելու ինստիտուտի կայացումը դատաիրավական բարեփոխումների ընթացքում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 48-55:
12. **Ապրոյան Ա. Հ.** Անչափահասների քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան: Իրավունք, 2009, N 11, էջ 55-64:
13. **Апроян А. Г.** Становление и развитие институтов защиты прав ребенка в разных странах (сравнительно-правовой анализ) // Сборник научхых трудов, Телавский государственный университет, Телави, 2008, N 2(24), с. 312-320.

# ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ամիրխանյան Սամվել Գրիգորի,*
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Դեկանի տեղակալ՝ *Հերգնյան Մարիամ Նորիկի,*
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

| **Դասիչ** | **Մասնագիտություն** |
|---|---|
| 080300 | Ֆինանսներ |
| 081500 | Հաշվապահական հաշվառում |
| 080600 | Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում |

**Մասնագիտացումներ՝** տնտեսագետի

**Ուսանողների թիվը՝ 398**
**Շրջանավարտների թիվը՝ 134**

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում 2008-2009 ուսումնական տարում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ համաձայն ուսումնական պլանների և ԳՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունված կանոնակարգերի: Ֆակուլտետի խորհրդում և դեկանատի ու ամբիոնների նիստերում քննարկվել են ուսումնական, գիտահետազոտական և կարգապահական հարցեր, որոնք նպաստել են նշված ուղղություններով աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Ուսումնական տարվա սկիզբը պահանջում էր ուժերի լարում, որովհետև ձևավորվել էին մագիստրատուրայի առաջին կուրսերը: Նորաբաց մագիստրատուրայի առաջին կուրս ընդունվեց 33 ուսանող, որից 9-ը մեկնեց զինվորական ծառայության և երեք ուսանողի տրամադրվեց տարկետում առողջական վիճակի պատճառով: 21 ուսանողներից երեքը սովորում են պետության կողմից ուսման վարձի փոխհատուցման սկզբունքով, երեքը օգտվում է զինվորական ծառայության տարկետման իրավունքից: Մագիստրատուրայում դասավանդում են որակյալ մասնագետներ:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետում սովորել են 375 ուսանող, որոնցից 354-ը բակալավրիատում, իսկ 21-ը՝ մագիստրատուրայում: Բակալավրիատի Ֆինանսներ բաժնում սովորում են 143, Հաշվապահական հաշվառում բաժնում՝ 116 և Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնում՝ 95 ուսանող: Իսկ մագիստրատուրայում համապատասխանաբար՝ 10, 8 և 3 ուսանողներ:

Ուսումնական տարվա սկզբից դեկանատն իր առջև խնդիր էր դրել ուսումնական գործընթացը կազմակերպել պատշաճ ձևով, առավելագույնս օգտագործել կրեդիտային համակարգի ընձեռած հնարավորությունները՝ ուսման որակը բարձրացնելու նպատակով, պահպանել ներքին կարգապահական կանոնները:

2008-2009 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետի ուսման առաջադիմությունը կազմեց բակալավրիատում 76.7 /նախորդ տարի այն կազմել էր 62.7 տոկոս/, մագիստրատուրայում՝ 95.2 տոկոս:

Բակալավրիատի երկրորդ կուրսերը, որոնք կրեդիտային համակարգով սովորող առաջին խմբերն էին, ցուցաբերեցին ամենաբարձր առաջադիմությունը՝ 91.3 տոկոս: Առաջադիմությամբ երկրորդ տեղում էին առաջին կուրսերը՝ 76.7 տոկոս: Երրորդ տեղում էին երրորդ կուրսերը 68.8 տոկոս, չորրորդ կուրսի առաջադիմությունը վերջինն էր և կազմեց 67.4 տոկոս:

Ֆակուլտետում 97 ուսանողներ կամ 27.6 %-ը քննաշրջանը հանձնեցին միայն գերազանց գնահատականներով, այդ թվում՝

- առաջին կուրսերում՝ 14 ուսանող,
- երկրորդ կուրսերում՝ 39 ուսանող,
- երրորդ կուրսերում՝ 26 ուսանող,
- չորրորդ կուրսերում՝ 26 ուսանող:

Միայն «գերազանց» և «լավ» գնահատականներով քննաշրջանը հանձնեցին 75 ուսանող կամ 21.4 %-ը, խառը գնահատականներով 83-ը կամ 23.6 %-ը և միայն «բավարար» գնահատականներով 15-ը կամ 4.2 %-ը:

Ֆակուլտետում գերազանցիկներ են 59 ուսանող, որը կազմում է ուսանողների ընդհանուր թվի 14 %-ը, այդ թվում՝

- Ֆինանսներ բաժնից՝ 24 ուսանող,
- Հաշվապահական հաշվառումից՝ 18 ուսանող,
- Բիզնեսի կազմակերպումից՝ 17 ուսանող:

Ամենացածր առաջադիմությունը ցուցաբերեց բիզնեսի կազմակերպում բաժնի 3-րդ կուրսը՝ 58.8 % և երեք մասնագիտությամբ չորրորդ կուրսերը՝ 64-69 %: Այս խմբերում առաջադիմությունը ավելի ցածր կլիներ, եթե դեկանատը ժամանակին չանդրադառնար այս հարցին և չկազմակերպեր հանդիպումներ ծնողների հետ: Դա չորրորդ կուրսերի վերջին քննաշրջանն էր: Հարկ եմ համարում վերլուծել և կարծիք հայտնել ֆինանսներ և վարկ բաժնի 4-րդ կուրսի մասին: Այսպես.

- ✓ Համալսարան են ընդունվել 32 ուսանող,
- ✓ տեղափոխվել են այլ բուհեր 4 ուսանող,
- ✓ այլ ֆակուլտետներից տեղափոխվել են 7 ուսանող,
- ✓ այլ բուհերից տեղափոխվել են 2 ուսանող,
- ✓ հեռացվել են մինչև 3-րդ կուրսը 3 ուսանող,
- ✓ հեռացվել են 4-րդ կուրսում 3 ուսանող,
- ✓ բանակից վերադարձել է 1 ուսանող,
- ✓ ավարտել են 27 ուսանող:

Այս շարժից կարելի է եզրակացնել, որ կուրսն ուշադրության կենտրոնում է եղել, անբավարար առաջադիմությամբ սովորող ուսանողները ժամանակին հեռացվեցին և բուհն ավարտեցին լավագույնները, պետական քննություններից անբավարար ստացան և համալսարանը չավարտեցին ևս 5 ուսանողներ: Այս մոտեցումը նպատակաուղղված է բարձր որակի մասնագետներ պատրաստելուն:

Ծնողական ժողովներ են հրավիրվել հետևյալ ժամանակացույցով.

1. Ֆինանսներ և վարկ 4-րդ կուրսում՝ հոկտեմբեր 2008թ.
2. Բիզնեսի կազմակերպում 4-րդ կուրսում՝ հոկտեմբեր 2008թ.
3. Հաշվապահական հաշվառում և աուդիտ 3-րդ կուրսում՝ հոկտեմբեր 2009թ.
4. Հաշվապահական հաշվառում և աուդիտ 1-ին կուրսում՝ մայիս 2009թ.:

Ծնողների հետ հանդիպման անհրաժեշտությունը կայանում է հետևյալում.

- Տեղեկանում են համալսարանի պահանջներին.
- Ուսանողի հեռացման հարց առաջանալիս՝ ծնողը տեղյակ է լինում իրավիճակին:
- Օգնում է ուսանողների ճիշտ դաստիարակությանը:

Ֆակուլտետի առաջին կուրսերում մանրամասն բացատրվել են կրեդիտային համակարգի սկզբունքները, բաժանվել են «Առաջին կուրսեցու ուղեցույց»-ները: Նկատելի է կրեդիտային համակարգի բազմագործոնային գնահատման ազդեցությունը ուսման որակի վրա: Ամփոփ քննությունից չհավաքելով համապատասխան միավորներ՝ որոշ ուսանողներ չգնահատվեցին և նրանց չտրվեց ամփոփիչ գնահատական: Լուծարային շրջանում այդ ուսանողների մեծ մասը վաստակեցին ավելի բարձր միավորներ: Ուսանողը դրական հանձնելով միջանկյալ քննությունները, մինչև կրեդիտային համակարգով նախատեսված ամփոփիչ գնահատումը, չի բավարարվում ձեռք բերածով, այլ սկսում է հիմնովին նախապատրաստվել ամփոփիչ քննությանը, ինչը ուսման որակի բարձրացման երաշխիք է:

Քննադատաբար պետք է ասենք, որ ամբիոնները պատշաճ ձևով չեն հետևում ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության կոնֆերանսների կազմակերպմանը, քիչ են տպագրվող հոդվածները:

Արդեն ինչպես համալսարանում, այնպես էլ մեր ֆակուլտետում կան ուսանողներ, ովքեր ձգտում են ուսանել արտերկրում: Հաշվետու ժամանակաշրջանում արտերկիր /Հունաստան/ ուսանելուց վերադարձան 2 ուսանողուհիներ /Մազմանյան Անի՝ ՖՎ 3-րդ կուրս և Մուրադյան Մարգարիտա՝ ՖՎ 4-րդ կուրս/ և արտերկիր /Լատվիա/ ուսանելու մեկնեց Բիզնեսի կազմակերպում բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Միրիբյանը և Ֆինանսներ և վարկ բաժնի 2-րդ կուրսի ուսանող Արմեն Կնեյանը /Հունաստան/:

Ֆակուլտետում ավանդույթ են դառնում ինտելեկտուալ մրցույթները: Գործում են տնտեսագետների ակումբը, ուսանողական խորհուրդը: Մեր տեսադաշտում են դաստիարակված, կիրթ մասնագետի ձևավորման խնդիրները: Սակայն պետք է նշել, որ դեռևս բարձր չէ ուսանողների հասարակական ակտիվությունը, ինչը մտահոգվելու տեղիք է տալիս: Ուստի, ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում ներգրավում ենք կրտսեր կուրսերի ուսանողներին:

Կազմակերպում ենք նաև ուսանողների հանդիպումներ գործատուների հետ: Նման միջոցառումները արդյունավետ են և պետք է դարձնել ավանդույթ:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը.

- ԳՊՀ այլ ֆակուլտետներից տնտեսագիտական ֆակուլտետ են տեղափոխվել 12 ուսանող:
- Երևանի բուհեր են տեղափոխվել 3 ուսանող,
- այլ բուհերց ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ է տեղափոխվել՝ 1 ուսանող,
- ԳՊՀ հեռակա ֆակուլտետ է տեղափոխվել՝ 2 ուսանող,
- զորակոչվել են զինվորական ծառայության՝ 20 ուսանող,
- բանակից զորացրվել են՝ 5 ուսանող,
- հեռացվել են՝ 9 ուսանող,
- վերականգնել են իրենց ուսանողական իրավունքները 16 ուսանող,
- ակադեմիական արձակուրդից օգտվել է 9 ուսանող:

Դեկանատը մշտապես զբաղվում է ուսանողների վարձավճարների հավաքագրման խնդրով: Դեռևս չենք կարողանում արմատավորել կիսամյակի ընթացքում վարձերի վճարման պրակտիկան: Ռեկտորատը հնարավոր ամեն ինչ անում է ուսանողությանը այս հարցում աջակցելու ուղղությամբ: 19 ուսանողներ օգտվում են «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի կրթաթոշակից: Հայաստանի Հանրապետության և Արցախի բուհերի տնտեսագիտական ֆակուլտետների՝ գերազանց առաջադիմությամբ սովորողների համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի հիմնադրման և Հայկական դրամի ստեղծման 15-ամյակի կապակցությամբ հայտարարված մրցույթին մասնակցեցին և «Սասունցի Դավիթ» հուշամեդալին ու կրթաթոշակի արժանացան ֆակուլտետի 14 ուսանողներ, իսկ 2 ուսանող արժանացել է Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակին:

Կրեդիտային համակարգի ներդրումը պահանջում է երկարատև, հետևողական աշխատանք և պարտականությունների հստակ բաժանում: Մեր ջանքերը պետք է նպատակամղված լինեն այն բանին, որ աշխատաշուկա մտնեն մրցունակ մասնագետներ: Համալսարանի և աշխատաշուկայի միջև հետադարձ կապի հաստատումը պետք է մնա ֆակուլտետի գործունեության գլխավոր ուղղություններից մեկը: Պետք է ամրապնդել կապը աշխատաշուկայի հետ, նպատակ ունենալով պարզել, թե ինչպիսի տնտեսագետ կադրեր են անհրաժեշտ արտադրության, սպասարկման, ծառայության և այլ ոլորտներին:

2008-2009 ուսումնական տարում համալրվեց ֆակուլտետի դասախոսական կազմը: Հարկ է նշել, որ դա նպաստեց ուսման որակի բարձրացմանը և ամբիոնային աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Վերլուծելով ուսումնական տարվա արդյունքները՝ նախատեսում ենք ուսումնական գործընթացի բարեփոխումներ, այդ թվում՝ ամբիոնների կողմից դասավանդման գործընթացի հսկում և նոր մեթոդների ներդրում, ուսուցման տեխնիկական ապահովում:

Դեկանատը աշխատանքներ է ծավալում, որպեսզի ուսանողները ձեռք բերեն ինքնուրույն աշխատելու փորձ, ձևավորվի սովորելու պատշաճ մշակույթ, միաժամանակ, դրսևորեն հետազոտական ունակություններ, մասնակցեն մրցույթների, տարբեր ծրագրերի:

Մեր խնդիրն է մագիստրատուրայի համար մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող ուսանողների պատրաստումը: Դեկանատը ջանքերը պետք է ակտիվացնի կարգապահության ամրապնդման ուղղությամբ: Կարգապահությունը պետք է ընկալել ամենալայն իմաստով՝ դասերին ներկայություն, մշտապես սովորելու հակում, ուսանողի պարտականությունների կատարման պատրաստակամություն, քաղաքացիական ճիշտ դիրքորոշում և այլն:

Դեկանատն իրականացրել է կրթության որակի բարձրացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- Հետևել է լուծարքին նախորդող շրջանում ուսանողի նախապատրաստմանը և կազմակերպել խորհրդատվություններ:
- Հետևել է, թե ուսանողները ինչպես են օգտվում գրադարանում առկա մասնագիտական գրականությունից:

Դեկանատի, ամբիոնների մշտական գործունեությունը նպատակաուղղվել է. ուսանողի ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորմանը և կարողությունների զարգացմանը: Ուսանողը պետք է մշտապես սովորի և չլինի միայն ունկնդրի դերում:

Ձեռնարկվել են միջոցառումներ.

1. ուսանողի մտահորիզոնը ընդլայնելու, հոգևոր-մշակութային, գեղագիտական, բարոյական զարգացմանը նպաստելու համար.
2. կազմակերպել ենք գրքերի և բարոյագիտական խնդիրների քննարկումներ:

2009 թ. ավարտական պետական քննությունները հանձնելու իրավունք ստացան տնտեսագիտական ֆակուլտետի 91 ուսանող, որից 9-ը վերականգնել էին իրենց ուսանողական իրավունքները:

Պետական ավարտական քննությունները անցկացվեցին 2009թ. մայիսի 10-31-ը, Ֆինանսներ և վարկ, Հաշվապահական հաշվառում և աուդիտ բաժիններում տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Օրդյանի նախագահությամբ, իսկ բիզնեսի կազմակերպում բաժնում՝ ՀՀ Ագրարային համալսարանի ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ, տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Ղազարյանի նախագահությամբ:

Շրջանավարտներից 9-ը ավարտեցին հնգամյա ծրագրով, իսկ 82-ը բակալավրիատի ծրագրով: V կուրսի 9-ը վերականգնված ուսանողներն էլ բարեհաջող հանձնեցին պետական քննությունները:

IV կուրսի 82 ուսանողներից քննությունները բարեհաջող հանձնեցին 72-ը, իսկ 9-ը ստացան անբավարար գնահատական և մեկ ուսանող չներկայացավ քննություններին: Նրանցից 5-ը ֆինանսներ և 4-ը՝ հաշվապահական հաշվառում բաժնից էին: Բիզնեսի կազմակերպում բաժնից բոլորը ստացան դրական գնահատականներ:

Այսպիսով, ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների գծով ավարտեցին 72 ուսանող: Նրանցից 11-ը արժանացան գերազանցության դիպլոմի:

Ավարտական քննությունների արդյունքում արվել են հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

**«Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության գծով.**

- Անհրաժեշտ է բարելավել ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքները, արդյունավետ կազմակերպել արտադրական պրակտիկայի գործընթացը, ինչը հնարավորություն կընձեռի ուսանողների գործնական հմտությունը զուգակցել տեսական գիտելիքների հետ և առավել խոր իմացություն դրսևորել ավարտական քննություններ հանձնելիս:
- «Տնտեսական գործունեության վերլուծություն» և «Հաշվապահական հաշվառում» առարկաների հարցատոմսերում եղած խնդիրները որոշ ուսանողներ լուծում էին դժվարությամբ, հետևաբար, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել գործնական և անհատական աշխատանքներին:
- Դեռևս ցածր է որոշ ուսանողների կողմից միջճյուղային գիտելիքների դրսևորման կարողությունը: Երբեմն այլ առարկաներից ստացած գիտելիքները չեն կարողանում համակարգել ու ներկայացնել, և դրանք օգտագործել մասնագիտական քննությունները հանձնելիս:
- Ցանկալի է, որ ուսանողներն ավելի խորությամբ տիրապետեն հաշվապահական հաշվառման նոր հաշվային պլանին, հաշվապահական հաշվառման բոլոր ստանդարտներին և համապատասխան մասնագիտական գրականությանը:

**«Ֆինանսներ և վարկ» մասնագիտության գծով**

- Դիպլոմային կամ ավարտական աշխատանք կատարած ուսանողների մեծ մասը բարձր մակարդակով հանձնեցին նաև պետական քննությունները: Սակայն նույնը չենք կարող ասել ավարտական աշխատանքներ չգրող ուսանողների մասին:
- Անհրաժեշտ է հնարավորության սահմաններում ավարտական աշխատանքների թեմաները ընտրել ավարտական կուրսի ուսանողների արտադրական պրակտիկայի անցկացման բնագավառին համապատասխան:
- Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել տղա ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների վրա:

**«Բիզնեսի կազմակերպում» մասնագիտության գծով**

- Ուշադրություն դարձնել դիպլոմային աշխատանքների թեմաների և պրակտիկայի վայրի ընտրությանը,
- ավարտական աշխատանքների թեմաներում ընդգրկել գյուղատնտեսության ոլորտը,
- առավել լայն օգտագործել տեխնիկական միջոցներ՝ պաշտպանության գործընթացում:

Տնտեսագիտական ֆակուլտետի՝ 2009-2010 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը ելնում է այն գերակա խնդրից, որ անհրաժեշտ է պատրաստել արդի պահանջներին համապատասխան որակյալ կադրեր: Նկատի ունենալով ծրագրային այս ուղղությունը, ֆակուլտետի 2009-2010թթ. զարգացման հայեցակարգը ներառում է.

1. ուսումնամեթոդական աշխատանքներ,
2. գիտահետազոտական աշխատանքներ,
3. կրթադաստիարակչական աշխատանքներ,
4. միջազգային կրթական ծրագրերի իրագործում,
5. ուսումնական և աշխատանքային կարգապահության բարելավում և ամրապնդում:

Ուսումնամեթոդական աշխատանքում կարևորում ենք մի շարք գործոններ՝ պայմանավորված ներկայիս հրամայականներով: Առաջնահերթը ուսումնական պլանների և

առարկայական ծրագրերի արդիականացումն է: Դրանք ոչ միայն կանխորոշում են ուսումնական գործընթացի բովանդակությունը, այլև վերջինիս իրականացման երաշխիք են: Ուսումնական պլանները և դրանց հիման վրա առարկայի ճիշտ մշակված ծրագիրը պետք է միտված լինեն ոչ միայն տեսական գիտելիքների ապահովմանը, այլև շուկայական պահանջարկին համապատասխանող գործնական հմտությունների ձևավորմանը:

1.1.Կրթության որակի էական բարելավման նպատակով կարևորում ենք կրթական չափորոշիչների և ուսուցման բովանդակության ու տեխնոլոգիաների արդիականացումը:

Վերափոխման հիմքում ընկած են Բոլոնյան գործընթացի սկզբունքները: Ֆակուլտետը հստակեցրել է Բոլոնյան գործընթացից բխող՝ իր առջև դրված նպատակն ու խնդիրները: Մեզ մոտ ներդրվել է բակալավրի և մագիստրատուրայի վրա հիմնված երկաստիճան համակարգը: Մեր նպատակն է՝ հասնել ուսուցման որակի բարելավմանը, աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակության ապահովմանը:

Ֆակուլտետի դեկանատը, ամբիոնները ձգտում են ուժեղացնել որակի ապահովման ներբուհական համակարգը: Որակի ապահովումը ենթադրում է դասավանդման և ուսման որակի բարձրացում:

Ֆակուլտետը որոշակի հետևողականություն է ցուցաբերում ինքնագնահատման ուղղությամբ, որի հիմքում ընկած են կուրսերի (մասնագիտական խմբեր) որակական ստուգումները, որոնք անցկացնում են օպերատիվ և ծրագրային կերպով և հանգեցնում համապատասխան եզրակացությունների ու շտկումների:

1.2.Ուսուցման գործընթացի բարելավման նպատակով ֆակուլտետում նախատեսում ենք դասավանդման տեխնիկական միջոցների լայն կիրառում թեստերի, գործարար խաղերի, իրավիճակային վերլուծության այլ մեթոդների օգտագործում՝ նպատակ ունենալով ամրապնդել տեսական գիտելիքները, զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները և գործնական կարողությունները:

Վերլուծում ենք որակի վրա ազդող գործոնները, փորձում տարբերակել և որոշակիացնել առավել օգտակար և արդյունավետ գործոնները:

1.3. Աշխատանքներ ենք տանում ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Կարևորում ենք.

ա) պրակտիկայի վայրի ճիշտ ընտրությունը,

բ) պրակտիկայի ղեկավարի հաշվետվության կազմումը և ներկայացումը ամբիոն,

գ)պրակտիկայի արդյունքների ճիշտ գնահատումը:

1.4. Ուսումնական գործընթացի բարելավումը պահանջում է դասախոսական կադրերի համալրում, ուստի որակյալ մասնագետներ, երիտասարդ կադրեր ենք ընդգրկել դասախոսական աշխատանքում:

2.1. Ամբիոններում աշխատանքներ ենք իրականացնում գիտահետազոտական աշխատանքը ակտիվացնելու ուղղությամբ՝ ամբիոնային թեմատիկ և դրամաշնորհային թեմաների գծով:

2.2. Նախատեսում ենք ֆակուլտետում ստեղծել տնտեսագիտական հետազոտությունների կենտրոն: Այն կնպաստի ամբիոնների կողմից դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը: Ամբիոնները հետազոտություններում պետք է ընդգրկեն նաև բարձր առաջադիմությամբ ուսանողներին, այդպիսով նրանց կսովորեցնեն կատարել հետազոտական աշխատանք, կօգնեն ուսանողներին ինքնուրույն դրամ վաստակել և վճարել ուսման վարձը:

3.1. Նախատեսում ենք բարեփոխումներ ֆակուլտետի կառավարման գործում: Ֆակուլտետի աշխատանքները կկազմակարպվեն ԳՊՀ խորհրդի և գիտխորհրդի կողմից հաստատված հայեցակարգի և կանոնակարգերին համապատասխան:

Դեկանատի նիստերը պետք է լինեն հրապարակային, կանոնադրական պահանջներին համապատասխան: Ֆակուլտետի խորհրդի նիստերում կքննարկվեն ամբիոնների, մեթոդական միավորումների հաշվետվություններ, զարգացման ծրագրի արդյունքները, նաև ուսումնական, մեթոդական և գիտական աշխատանքների ու այլ հարցեր:

3.2. Կարևորում ենք «Ուսանողի դաստիարակումը ուսանողության միջոցով» սկզբունքի իրականացումը:

3.3 Անհրաժեշտ ենք համարում ակտիվացնել ֆակուլտետի ուսանողական խորհրդի գործունեությունը՝ սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ:

3.4.Նախատեսում ենք ակտիվացնել «Տնտեսագետների ակումբի» աշխատանքները, պարբերական դարձնել Գեղարքունիքի մարզի բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումները, ինչը կնպաստի .

- ապագա գուրծատուի պահանջների վերաբերյալ ուսանողների պատկերացումների ձևավորմանը
- ուսանողների տեսական ու պրակտիկ գիտելիքների զարգացմանն ու համադրմանը:

4.1. Նախատեսում ենք զարգացնել միջազգային կապերը ուսումնական, գիտական, երիտասարդական կազմակերպությունների հետ, խթանել դասախոսների միջազգային ծրագրերին մասնակցելու, որոկավորման բարձրացման և փորձի փոխանակման գործը:

5.1. Արդիականացնել և ճկուն դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը:

- Ապահովել դասապրոցեսի կազմակերպումը համալսարանի սահմաններից դուրս՝ Երևանյան մասնագիտացված գրասենյակներում, կազմակերպություններում և ֆիրմաներում:
- Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների վերաբերյալ դասախոսական կարծիքի հավաքագրում և ծնողական ժողովների անցկացում, որի պրակտիկան առկա է և տվել է իր դրական արդյունքը:

5.2. Անհրաժեշտտ ենք համարում մշտապես ապահովել ուսումնական և աշխատանքային գործունեության կարգապահության բարձր մակարդակ:

Դեկանատը և ամբիոնները հետևողական աշխատանք պետք է կատարեն 2009-2010 ուսումնական տարում ուսումնամեթոդական առաջընթացի ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

Սույն հայեցակարգը իրականացնելու նպատակով դեկանատը և ամբիոնները համատեղ մշակել են միջոցառումների ժամանակացույց և նշանակել պատասխանատու անձանց:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Գ. Ամիրխանյան

# ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## *ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Ֆինանսներ և վարկ | | | | |
| 1-ին | 36 | 7 | 8 | 77.8 |
| 2-րդ | 43 | 3 | 22 | 93.0 |
| 3-րդ | 27 | 5 | 12 | 77.8 |
| 4-րդ | 35 | 11 | 10 | 68.6 |
| Հաշվ. հաշվառում և աուդիտ | | | | |
| 1-ին | 41 | 11 | 5 | 73.2 |
| 2-րդ | 28 | 1 | 6 | 96.4 |
| 3-րդ | 20 | 7 | 6 | 65.0 |
| 4-րդ | 25 | 9 | 4 | 64.0 |
| Բիզնեսի կազմակերպում | | | | |
| 1-ին | 22 | 6 | 1 | 72.7 |
| 2-րդ | 32 | 5 | 11 | 84.4 |
| 3-րդ | 17 | 7 | 8 | 58.8 |
| 4-րդ | 26 | 8 | 4 | 69.2 |
| **Ընդամենը** | **352** | **80** | **97** | **76.7** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Ֆինանսներ 1-ին | 10 | - | 2 | 100.0 |
| Հաշվ. հաշվառում 1-ին | 8 | - | - | 87.5 |
| Ձեռն. տնտեսագիտություն և կառավարում 1-ին | 3 | - | 1 | 100.0 |
| **Ընդամենը** | **21** | **-** | **2** | **95.2** |

## *ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազան-ցիկների թիվը | Առաջադիմու-թյան %-ը |
|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | | | | |
| Ֆինանսներ և վարկ | | | | |
| 1-ին | 39 | 17 | 6 | 46.2 |
| 2-րդ | 43 | 5 | 17 | 69.8 |
| 3-րդ | 27 | 2 | 13 | 63.0 |
| Հաշվ. հաշվառում և աուդիտ | | | | |
| 1-ին | 42 | 25 | 2 | 28.6 |
| 2-րդ | 27 | 14 | 7 | 48.1 |
| 3-րդ | 20 | 5 | - | 75.5 |
| Բիզնեսի կազմակերպում | | | | |
| 1-ին | 19 | 9 | - | 42.1 |
| 2-րդ | 30 | 6 | 7 | 73.3 |
| 3-րդ | 17 | 8 | 2 | 47.1 |
| **Ընդամենը** | **267** | **91** | **54** | **57.6** |
| **Մագիստրատուրա** | | | | |
| Ֆինանսներ 1-ին | 10 | 3 | 2 | 70.0 |
| Հաշվ. հաշվառում 1-ին | 7 | - | - | 100.0 |
| Ձեռն. տնտեսագիտություն և կառավարում 1-ին | 3 | - | 1 | 100.0 |
| **Ընդամենը** | **20** | **3** | **3** | **85.0** |

## 2008/2009 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| | | 1 | 1 | 9 | |

**Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3**

## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ ***Կարապետյան Վարազդատ Ազատի,***
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Մովսեսյան Դավիթ Մերուժանի -** տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. **Ավետիսյան Աստղիկ Սիմոնի -** դասախոս, գործավար
3. **Խաչատրյան Գայանե Արտիկի -** դասախոս, լաբորանտ
4. **Մուրադյան Գուրգեն Գևորգի -** դասախոս
5. **Հերգնյան Մարիամ Նորիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. **Խչեյան Մակիչ Համլետի -** տնտեսագիտության թեկնածու

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Հարությունյան Հարություն Սարգսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. **Խաչատրյան Հակոբ Հայկի -** տնտեսագիտության թեկնածու

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական և տարածքային տնտեսական զարգացում

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| | | | | 3 | |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հերգնյան Մ. Ն.** Մարդկային ռեսուրսները որպես կառավարման գործընթացի արդյունավետ կազմակերպման գրավական // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 283-291:
2. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բեռի ազդեցությունը առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 318-323:
3. **Арутюнян А.С.** Экологические аспекты экономического роста// “Известия” ноябрь, N 2, 2008, с. 67-70.

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հակոբ Մելսիկի Ղուլոյան,*
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Խլղաթյան Իշխան Երեմի -** տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
2. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Ղազոյան Կարինե Համլետի -** դասախոս
4. **Շահբազյան Տաթևիկ Հայկի -** լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Ամիրխանյան Սամվել Գրիգորի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. **Սուքիասյան Հովիկ Հայկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Սարգսյան Պարգև Սուրիկի -** դասախոս
4. **Պողոսյան Ռուդիկ Գեորգու -** դասախոս
5. **Հակոբյան Անահիտ Ալեքսանի -** դասախոս
6. **Մարգարյան Համիկ Անդրանիկի -** դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործում:
բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակում և կատարելագործում:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործում:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| | 1 | | | 6 | |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ.** Հետքեյնսյան տեսության մի քանի հարցադրումների մասին // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 279-282:
2. **Ղուլոյան Հ. Մ.** Կազմակերպության ֆինանսական դրության կանխատեսման մեթոդները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 314-318:
3. **Պողոսյան Ռ. Գ.** Գյուղատնտեսական արտադրանքի և կենսաբանական ակտիվների հաշվառումը ՀՀ-ում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 309-314:
4. **Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Ղարագյոզյան Ա. Ա., Մելքոնյան Ա. Լ.** Ռազմավարական այլընտրանքների ընտրության հնարավոր չափանիշները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N11, 2009, էջ 291-297:
5. **Առաքելյան Վ. Հ., Գրիգորյան Գ. Ռ., Մարգարյան Հ. Ա., Մելքոնյան Ա. Լ.** Արտադրանքի շերտավորման ռազմավարության մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 297--303:
6. **Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա.** Տնտեսական գործունեության վերլուծության արդի խնդիրները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 303-309:
7. **Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Մ., Սարգսյան Գ. Ռ.** Համաշխարհային բանկի խմբի գործունեության գնահատումը ՀՀ-ում, մենագրություն, Երևան, Նահապետ, 2009:

## ԲԻԶՆԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՄԲԻՈՆ

**Ամբիոնի վարիչ՝ Զաքոյան Հրաչյա Սամվելի,**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

### *ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

1. **Կարապետյան Վարազդատ Ազատի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. **Հովակիմյան Ռազմիկ Ռուբենի -** տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Նավասարդյան Անեթ Ալֆրեդի -** դասախոս
4. **Բագոյան Սոնա Սահակի -** դասախոս, լաբորանտ

### *ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ*

1. **Սարգսյան Գոռ Ռոբերտի -** տնտեսագիտության թեկնածու
2.**Ոսկանյան Արթուր Վազգենի -** դասախոս
3. **Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի -** դասախոս
4. **Թադևոսյան Նարինե Հակոբի -** դասախոս
5. **Շահինյան Վարդուհի Էդիկի -** դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՓՄՁ ոլորտի վրա և դրա հաղթահարման հնարավոր ուղիները:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| | | | 1 | | |

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Զաքոյան Հ. Ս.,** Բակալավրիատի ավարտական աշխատանք գրելու մեթոդական ցուցումներ «Գյուղատնտեսության տնտեսագիտություն» առարկայից, Երևան, 2008:

# ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**Դեկան՝** **Կուտուզյան Նելլի Ալբերտի,**
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

| **Դասիչ** | **Մասնագիտություն** |
|---|---|
| *031000* | *Հայոց լեզու և գրականություն* |
| *032400* | *Ռուսաց լեզու և գրականություն* |
| *030400* | *Պատմություն (իրավունքի հիմունքներ)* |
| *020400* | *Աշխարհագրություն* |
| *051100* | *Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)* |

**Մասնագիտացումներ՝**
Բանասեր. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
Բանասեր. Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ
Պատմաբան. Պատմության /իրավունքի հիմունքների/ ուսուցիչ
Աշխարհագրագետ. Աշխարհագրության ուսուցիչ
Տարրական դասարանների ուսուցիչ

**Ուսանողների թիվը՝ 947**

**Շրջանավարտների թիվը՝ 128**

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Բարձրագույն մասնագիտական կրթություն ապահովող ցանկացած համակարգի, այդ թվում` հեռակա ուսուցման համակարգի զարգացման հայեցակարգային խնդիրն է ուսման որակի ապահովումը, ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ մշտական հսկողությունը և այդ գործընթացի հետևողական բարելավումը: Պետության, ինչպես նաև հասարակության կողմից պահանջվող որակյալ կրթություն կարող ենք ապահովել հետևյալ ուղղություններով կատարվող աշխատանքների շնորհիվ.

1. աշխատանքներ` ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման և կառավարման ուղղությամբ,
2. աշխատանքներ` դասավանդման որակի ապահովման, մշտադիտարկման և վերահսկողության ուղղությամբ:

*1.Ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումը և կառավարումը ենթադրում է.*

1.1 Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացում:

Ներկայումս աշխարհում և մեր հանրապետությունում զարգացում ապրող տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը պահանջում է ամենօրյա լուրջ և հետևողական աշխատանք` ուղղված ժամանակակից պահանջներին ուսումնական գործընթացի համապատասխանեցմանը: Ուստի, պետք է արդիականացվեն ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, որոնք ուսումնական գործընթացի կազմակերպման անկյունաքարերն են, ինչպես նաև նպատակային համապատասխանության ցուցիչները:

Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացման շնորհիվ կարելի է մի կողմից արդարացնել սովորողի սպասումները, մյուս կողմից` բավարարել աշխատաշուկայի պահանջները: Ուսումնական պլանները վերանայելիս` լուրջ սպասելիքներ ունենք ԳՊՀ այն մասնագետներից, ովքեր մասնակցում են մանկավարժական բուհերի կոնսորցիումի կողմից կազմակերպվող ինչպես մասնագիտությունների, այնպես էլ առանձին առարկաների, մոդուլների չափորոշիչների մշակման աշխատանքներին: Մասնագիտությունների ուսումնական պլանները ներկայացրել ենք սպասարկող ամբիոններ և առաջարկել առարկայական ծրագրերը, ստուգողական և կուրսային աշխատանքների թեմաները վերանայել: Այս ուղղությամբ իրականացնում ենք հետևողական աշխատանք, կարևորում համագործակցությունը Կրթության ազգային ինստիտուտի Գավառի մասնաճյուղի հետ, հատկապես առարկայի դասավանդման նոր մեթոդների, հանրակրթության բարեփոխումների, գնահատման նոր համակարգերի, ինչպես նաև հանրակրթական առարկաների ծրագրերի նոր թեմատիկային տեղյակ լինելու առումով: Այս գործոնը ևս կնպաստի աշխատաշուկայում շրջանավարտի մրցունակության ապահովմանը:

1.2. Ուսումնաօժանդակ նյութերի ապահովում.

Ուսանողների ակադեմիական առաջադիմության նախորդ տարվա վերլուծությունը ցույց տվեց, որ առաջին և երկրորդ կուրսերում առաջադիմության բարձրացմանը էապես նպաստել է առկա ուսուցման համապատասխան կուրսերում ներդրված կրեդիտային համակարգը` ապահովելով պատրաստի դասախոսությունների տրամադրումը ուսանողին` էլեկտրոնային կամ տպագիր, թղթային տարբերակով, էական է նաև ուսումնամեթոդական ձեռնարկների օժանդակությունը: Ընթացիկ ուսումնական տարում համապատասխան ամբիոնների կողմից նախատեսվում է տպագրել ուսումնամեթոդական ձեռնարկներ հեռակա համակարգում սովորողների համար

«Մաթեմատիկա», «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա», «Ընդհանուր ջրաբանություն» առարկաներից:

1.3. Սեմինար, գործնական պարապմունքների անցկացման մեթոդների կատարելագործում.

Ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման գործում կարևոր դեր է կատարում սեմինար- գործնական պարապմունքների անցկացման մեթոդների կատարելագործումը: Մասնավորապես՝ «Պատմություն» բաժնում «Թանգարանագիտություն և արխիվագիտություն» առարկայի գործնական պարապմունքները նախատեսում ենք անցկացնել Գավառի երկրագիտական թանգարանում, «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնում՝ «Բանավոր խոսքի զարգացում» առարկայի, ինչպես նաև օտար լեզուների դասաժամերը անցկացնել լինգաֆոնային լսարանում:

1.4. Ուսանողների գիտելիքների ստուգման մեթոդների կատարելագործում.

Ամփոփիչ քննությունների անցկացման գործընթացը թույլ չի տալիս լիարժեք հասկանալու ուսման որակի իրական պատկերը, մատնանշելու թե' դասատվության և թե' ուսանողների ուսման գործընթացի թերի կողմերը: Թե՛ ամբիոնների և թե՛ դեկանատի կողմից քննաշրջանի վերահսկողության գործընթացն ունի թերություններ: Պատճառներից գլխավորը քննաշրջանին հատկացվող ժամկետի կարճատևությունն է՝ 3-4 օր, ինչպես նաև այն հանգամանքը, որ քննաշրջանը անմիջապես հաջորդում է դասընթացներին:

Այս նպատակով առաջարկում ենք քննաշրջանին հատկացվող ժամկետների վերանայում. օրինակ՝ 1-ին կիսամյակի քննաշրջանը անցկացնել փետրվար, 2-րդ կիսամյակի քննաշրջանը՝ սեպտեմբեր ամիսներին: Այս կերպ լուծված կլինի նաև ուսանողի տարեկան ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխման խնդիրը: Գործող ժամանակացույցում սեպտեմբերից հունվար ամիսներին ուսանողի ծանրաբեռնվածությունը նույնը չէ, ինչ փետրվարից հունիս ամիսներին:

1.5. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.

Դասընթացների սեղմ ժամկետներում ուսումնական, գեղագիտական միջոցառումների կազմակերպումը և անցկացումը հաճախ անհնար է դառնում, ուստի՝ դեկանատը ծրագրել է միջոցառումների անցկացման այլ ժամանակացույց՝ առանձնացնելով պատասխանատուներին: Ինչպես նաև նախատեսված է հունվարին ուսանողների շրջանում անցկացնել հարցումներ իրենց նախասիրությունների վերաբերյալ և արդյունքներն օգտագործել միջոցառումները կազմակերպելիս:

*1. Աշխատանքեր կրթության որակի ապահովման, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ուղղությամբ:*

2.1.Որակի ապահովման ներքուհական ստորաբաժանման ստեղծում.

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի գործառույթների իրականացման, ինչպես նաև մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային համակարգին ինտեգրման նպատակով անհրաժեշտություն է որակի ապահովման ներբուհական ստորաբաժանման ստեղծումը, ֆակուլտետում համապատասխան մեխանիզմների և հաշվետվողականության համակարգի ներդրումը: Մասնավորապես, ուշադրության կենտրոնում ունենալով ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր մեթոդների կիրառումը, ուսման գործընթացի անհրաժեշտ ռեսուրսային ապահովումը, դասախոսական համակազմի մասնագիտական, կազմակերպչական կարողությունների, հնարավորությունների զարգացումը և նրանց որակավորումների բարձրացումը՝ ֆակուլտետում ուսման որակի ապահովման գործառույթները վերահասցեագրել դեկանատին, ամբիոնին, դասախոսին, ուսանողներին: Չառանձնացնելով կարգապահական և ակադեմիական մակարդակները՝ այնուամենայնիվ, նրանցից առաջինը առավելապես

հասցեագրել դեկանատին, երկրորդը՝ համապատասխան մասնագիտական ամբիոններին: Անցած ուսումնական տարում կարգապահական կանոնները խախտելու, այն է՝ դասերից անհարգելի բացակայության, պատճառով հեռացվել է 29 ուսանող, որոնցից 17-ը՝ առաջին կիսամյակում, իսկ 12 ուսանող՝ երկրորդ կիսամյակում: Քննաշրջանի արդյունքներով, անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով 25 ուսանող հեռացվել է համալսարանից: Նրանցից 11-ը՝ առաջին, իսկ 14 ուսանող՝ երկրորդ կիսամյակում: Առաջարկում ենք պարբերաբար անցկացնել փոխադարձ ստուգումներ և ամբիոններում, ուսումնամեթոդական միավորումներում վերլուծել արդյունքները, առանձնակի կարևորություն տալ ամբիոնի կողմից կիսամյակային և տարեկան կատարված աշխատանքների հաշվետվությունների արդյունքների վերլուծությանը:

2.2. Ինքնավերլուծության և ինքնագնահատման ուղղությամբ կատարվող աշխատանքներ.

Ինքնավերլուծության և ինքնագնահատման նպատակով նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դեկանատի կողմից կկազմակերպվի ստուգայց յուրաքանչյուր սպասարկող մասնագիտական ամբիոն՝ առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ նյութերի ուսումնասիրման, դրանց առկայության ստուգման և լիարժեք ապահովման նպատակով: Նախապես բոլոր ամբիոններին հանձնարարվել է վերանայել, արդիականացնել առարկայական ծրագրերը, ստուգողական աշխատանքների թեմատիկան առավելապես ուղղորդել որոնողականից հետազոտականին՝ տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով հանձնարարել գործնական բնույթի աշխատանքներ, որոնք կստիպեն ուսանողին շփվելու նաև պրակտիկ աշխատանքի հետ:

2.3. Ուսումնական գործընթացի որակի ստուգում՝ հետադարձ կապի ապահովմամբ.

Մասնագիտական կրթության կառավարման շատ գործընթացներ սկսվում են բուհում, սակայն ավարտվում են նրա սահմաններից դուրս: Դրանք հաճախ չունեն հստակ սահմաններ, քանզի բուհական գործունեության արդյունքները նկատելի են դառնում տևական ժամանակի ընթացքում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ նախատեսված է կատարել հարցումներ շրջանավարտների շրջանում, ովքեր աշխատում են իրենց մասնագիտությամբ: Օրինակ՝ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի շրջանավարտներից ստացել ենք առաջարկ՝ ավելացնել «Մանկական գրականություն» առարկայի դասաժամերը, քանի որ դրանք անհրաժեշտ են, սակայն ավելի քիչ են, քան «Արտասահմանյան գրականություն» կամ «Հայ գրականություն» առարկաների պլանային ժամերն են: Ֆակուլտետի դեկանատն առաջարկում է ակադեմիական քաղաքականության վարչությանը վերականգնել կարիերայի կենտրոնի գործառույթները, ինչպես նաև, ելնելով տարածաշրջանում աշխատաշուկայի պասիվությունից, հետադարձ կապի ուսումնասիրությունն ու գործատուներից ստացած արձագանքի վերլուծությունը իրականացնել մեր շրջանավարտների միջոցով: Ուրախությամբ ուզում եմ նշել, որ ՀՀ ԿԳՆ-ի կազմակերպած մրցույթի արդյունքում 2008-2009 ուստարում մարզում լավագույն ճանաչված մանկավարժների թվում է նաև Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի շրջանավարտը:

2.4. Աշխատանքներ՝ աշխատաշուկայի մշտադիտարկման ուղղությամբ.

Ուսման որակի ապահովման խնդիրն անհրաժեշտություն է դարձնում աշխատաշուկայի պահանջարկի մշտական ուսումնասիրությունը, ինչը հրամայաբար պահանջում է կիրառական բնույթի մասնագիտությունների ներդրում, որոնք ունեն շուկայական ապահովվածություն: Ֆակուլտետում առկա մասնագիտություններից յուրաքանչյուրի ուսումնական պլաններում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ այնպես, որ բացի պետական չափորոշիչներից բխող անհրաժեշտ պարտադիր դասընթացներից և մասնագիտական առարկաներից, ուշադրության արժանանա մասնագիտության լրացուցիչ արդիական ուղղվածության

ապահովումը: Օրինակ՝ «Աշխարհագրություն» մասնագիտության ուսումնական պլաններում անհրաժեշտ է ներառել բնապահպանական բնույթի առարկաներ, ինչպես նաև՝ «Քարտեզագրություն, կադաստրային գործ», «Սերվիս» մասնագիտությունների հիմնական ուսումնական առարկաներ, որոնք ունեն շուկայական մեծ պահանջարկ: Կադրերի պատրաստման գործընթացում անհրաժեշտ է պրակտիկաները անցկացնել Հայպետհիդրոմետի, Կադաստրի պետական կոմիտեի կամ այլ կառույցների բազաներում: Պատմության բաժնում ուսումնական պլաններում հնարավորության դեպքում հարկ է ներառել ռազմագիտական առարկաներ, դպրոցներում ռազմագիտության ուսուցչի կամ իրավագիտական առարկաներ՝ իրավունքի հիմունքների ուսուցչի մասնագիտությամբ աշխատելու նպատակով: Ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսումնական պլաններում հարկավոր է ներառել թարգմանչական գործ, լրագրություն (ռուսաց լեզվով) մասնագիտությանն առնչվող առարկաներ:

2.5. Ուսանողների շրջանում հարցումների կազմակերպում և արդյունքների վերլուծություն. Կրթության որակի բարձրացմանը և դրա հնարավորինս ճիշտ գնահատմանը կծառայի ուսանողների շրջանում հարցումների կազմակերպումը (նախատեսված է հունվար և հունիս ամիսներին), այսպես.

ա) անանուն հարցումներ դասատվության որակի, դեկանատի կազմակերպչական աշխատանքների, դասախոսների, վարչական անձնակազմի աշխատանքների վերաբերյալ.

բ) հարցումներ ուսանողների շրջանում հետագա ուսումնառության ժամանակ մասնագիտությանը հարակից ցանկալի առարկաներ, ինչպես նաև առարկայական ծրագրերում ցանկալի թեմաներ ներգրավելու վերաբերյալ /առաջարկությունները հաջորդ կիսամյակներում հաշվի առնելու պայմանով/:

2.6. Ակադեմիական առաջադիմության արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս, որ բոլոր կուրսերում լոկոմոտիվի դերը տանում են այն ուսանողները, ում նախկին բազային կրթությունը միջին մասնագիտական է կամ բարձրագույն: Ուստի առաջարկում ենք հնարավորության սահմաններում ընդլայնել այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկը, որոնց և Գավառի պետական համալսարանի միջև կնքվում են պայմանագրեր՝ շրջանավարտներին բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության վերաբերյալ:

2.7. Միջքննական ժամանակահատվածում սեմինար-խորհրդատվությունների անցկացում՝ նախապես կազմված և հրապարակված ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև ակադեմիապես թույլ ուսանողներին հնարավորության ընձեռում՝ մասնակցելու առկա ուսուցման համապատասխան դասընթացներին:

2.8. Ուսուցման որակի բարելավման որոշակի խթան կարող է հանդիսանալ ուսման վարձերի զեղչը, բարեգործական կազմակերպությունների, կրթական հիմնադրամների, սոցիալական աջակցության ծրագրերի միջոցների օգտագործումը, բոլոր հնարավոր աղբյուրների կիրառումը, դրամաշնորհային ծրագրերի իրագործումը՝ ուղղված սովորողների ֆինանսական աջակցության ցուցաբերմանը, նաև համալսարանի միջոցներից հնարավոր նյութական խրախուսմանը:

2.9. Ուսուցման գործընթացում օգտակար շարժառիթների պատշաճ համակարգի ձևավորման նպատակով կարևոր ենք համարում ֆակուլտետի ենթակառուցվածքներից յուրաքանչյուրի կիսամյակային հաշվետվությունները, կրթության որակի բարելավման նպատակով ուսանողների՝ ստացած կրթությունից բավարարվածության, ուսման մատչելիության սկզբունքի ապահովվածության ստուգումների վիճակագրական վերլուծությունները, դասալսումների համակարգի ակտիվացումը, դասախոսական կազմի վերապատրաստումները:

2.10. Կարևոր խնդիր ենք համարում նաև դիմորդի ուղեցույցի ստեղծումը, ինչը կնպաստի և՛ առկա, և՛ հեռակա համակարգերում գործող մասնագիտությունների լուսաբանմանը, ընդունելության, հետագա ուսումնառության, մասնագիտական որակավորումների շնորհման վերաբերյալ հանրության իրազեկմանը:
Այս ուղղություններով կատարվելիք աշխատանքները ծրագրված են ժամանակային առումով և ըստ պատասխանատուների:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան Ն. Ա. Կուտուզյան

# ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## *ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազանցիկ-ների թիվը | Առաջադի-մության %-ը |
|---|---|---|---|---|
| Հայոց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 32 | - | 7 | 96,8 |
| 2-րդ | 40 | 9 | - | 60 |
| 3-րդ | 28 | - | 6 | 82,2 |
| 4-րդ | 38 | - | 8 | 97,4 |
| 5-րդ | 33 | 1 | 2 | 81,8 |
| 6-րդ | 29 | 1 | 2 | 75,8 |
| Ռուսաց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 24 | 5 | 3 | 79,2 |
| 2-րդ | 21 | - | 2 | 95,2 |
| 3-րդ | 18 | - | 10 | 88,8 |
| 4-րդ | 30 | - | 5 | 100 |
| 5-րդ | 22 | - | 5 | 100 |
| 6-րդ | 32 | - | 18 | 93,7 |
| Պատմություն /իրավունքի հիմ./ | | | | |
| 1-ին | 48 | - | 9 | 98 |
| 2-րդ | 50 | - | 2 | 94 |
| 3-րդ | 33 | 4 | - | 30,3 |
| 4-րդ | 48 | - | 15 | 95,8 |
| 5-րդ | 36 | - | 3 | 97,2 |
| 6-րդ | 30 | 11 | 2 | 56,6 |
| Աշխարհագրություն | | | | |
| 1-ին | 28 | 19 | - | 17,8 |
| 2-րդ | 34 | 1 | 2 | 79,4 |
| 3-րդ | 18 | 2 | 3 | 88,8 |
| 4-րդ | 36 | 3 | - | 86,2 |
| 5-րդ | 25 | - | 5 | 84 |
| 6-րդ | 20 | 1 | - | 25 |
| Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./ | | | | |
| 1-ին | 28 | 4 | - | 85,7 |
| 2-րդ | 31 | - | 11 | 90,3 |
| 3-րդ | 16 | 2 | 1 | 68,7 |
| 4-րդ | 33 | - | 6 | 96,9 |
| 5-րդ | 31 | - | 12 | 96,7 |
| 6-րդ | 34 | 6 | - | 82,3 |
| **Ընդամենը** | **926** | **69** | **139** | **82,2** |

# *ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

| Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս | Քննաշրջանին մասնակցել են | Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը | Գերազանցիկների թիվը | Առաջադիմության %-ը |
|---|---|---|---|---|
| Հայոց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 32 | 1 | - | 84,4 |
| 2-րդ | 34 | 1 | 1 | 91,2 |
| 3-րդ | 27 | - | - | 74,1 |
| 4-րդ | 38 | - | 2 | 84,2 |
| 5-րդ | 33 | - | 1 | 81,8 |
| Ռուսաց լեզու և գրականություն | | | | |
| 1-ին | 24 | 8 | 2 | 45,8 |
| 2-րդ | 20 | 7 | 1 | 55 |
| 3-րդ | 19 | 6 | - | 68,4 |
| 4-րդ | 30 | - | - | 66,7 |
| 5-րդ | 22 | - | 2 | 95,5 |
| Պատմություն /իրավունքի հիմ./ | | | | |
| 1-ին | 47 | 21 | - | 17 |
| 2-րդ | 49 | 16 | - | 46,9 |
| 3-րդ | 32 | 6 | - | 50 |
| 4-րդ | 47 | 13 | - | 61,7 |
| 5-րդ | 36 | 4 | 4 | 83,3 |
| Աշխարհագրություն | | | | |
| 1-ին | 26 | 11 | - | 50 |
| 2-րդ | 33 | 18 | 3 | 39,4 |
| 3-րդ | 19 | 13 | - | 31,6 |
| 4-րդ | 35 | 19 | - | 28,6 |
| 5-րդ | 25 | 8 | 3 | 56 |
| Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./ | | | | |
| 1-ին | 25 | - | 1 | 92 |
| 2-րդ | 33 | 3 | 2 | 78,8 |
| 3-րդ | 16 | - | 3 | 93,8 |
| 4-րդ | 32 | - | 5 | 100 |
| 5-րդ | 31 | - | - | 100 |
| **Ընդամենը** | **765** | **155** | **30** | **65,6** |

# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

**Վարչության պետ՝** ***Ղարիբյան Ալինա Ամբիկի***

Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչությունը իր գործառույթները իրականացնում է երեք հիմնական ուղղություններով՝

- միջբուհական (նախապատրաստական) կրթություն,
- մասնագիտական (քոլեջ) կրթություն,
- բարձրագույն կրթություն.

Կառույցի թիվ մեկ խնդիրն է ապահովել համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը: Այս գործընթացի հետ կապված՝ հաշվետու ժամանակաընթացքում վերանայվել են բուհի ուսումնական պլանները՝ ելնելով կրեդիտային համակարգի պահանջներից: Բակալավրի քառամյա մշակված պլանների հետ զուգահեռ ամբիոնների, դեկանատների, ռեկտորատի համատեղ ջանքերով մշակվել և հաստատվել են բակալավրիատի կրեդիտային քառամյա համակարգի ուսումնական պլանները, ինչը ուսումնական գործընթացը սկսելու նախապայմանն է: Պլաններում կատարվել են մի շարք շտկումներ և ճշգրտումներ՝ կապված դասընթացների, դրանց ժամաքանակների վերաբաշխման, կուրսային աշխատանքների քանակների ճշգրտումների հետ՝ ելնելով մասանգիտական առանձնահատկություններից և նախապես ուղղորդվելով ամբիոնների մասնագիտական խորհրդատվություններով:

Վերանայվել են համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունները, դրանց համապատասխանությունը ուսումնական պլաններին:

Գավառի պետական համալսարանում ռեկտորի հրամանով ստեղծված Կրեդիտային համակարգը ներդնող հանձնաժողովի հետ համագործակցելով՝ վարչությունը մշակել և գիտխորհրդի հաստատմանն է ներկայացրել մագիստրատուրայում կրեդիտային համակարգի ներդրման բազմագործոնային համակարգը:

Կրեդիտային համակարգի պահանջներից ելնելով՝ վարչությունը համագործակցում է ամբիոնների հետ՝ ծրագրերի, թեմատիկ պլանների հաստատման, դասախոսների կողմից անհատական աշխատանքների թեմաների ներկայացման, բացակայությունների մարումների կազմակերպման, առարկաների նկարագրությունների, դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների ներկայացման և ուսումնական գործընթացի հետ կապված բազմաթիվ այլ հարցերի լուծման նպատակով:

2008-2009 ուս. տարվա երկրորդ կիսամյակի սկզբում վաչության կողմից շարունակվեց բաժինը փոխել ցանկացող ուսանողների առարկայական տարբերությունների հանձնման կազմակերպումը, և երկու կիսամյակների արդյունքներով 30 ուսանողներ տեղափոխվեցին համապախատասխան բաժիններ, որոնց մեջ կային ոչ միայն ներբուհական տեղափոխություններ, այլ նաև հանրապետության այլ բուհերից ԳՊՀ տեղափոխվող ուսանողներ:

ԱՔՎ-ն կոորդինացնում և վերահսկում է առաջին և երկրորդ կիսամյակներում սկսված ուսումնամանկավարժական և նախաավարտական պրակտիկաների գործընթացը՝ ուսանողներին ապահովելով համապատասխան օրագրերով:

Երկրորդ կիսամյակում վարչության կողմից անցկացվել է ամբիոնների փաստաթղթային հաշվառում, որը նախատեսվում է անցկացնել յուրաքանչյուր կիսամյակում:

2008-2009 ուս. տարվա առաջին կիսամյակում վարչությունը ստուգել և ներկայացրել է ռեկտորի հաստատմանը միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսումնական պլանները և դասախոսների ծանրաբեռնվածությունները:

Մինչբուհական կրթությունից բուհականին անցման գործընթացը ավելի սահուն դարձնելու համար ԱԲՎ-ն կազմակերպում է նախապատրաստական բաժնի աշխատանքները և փորձում ավելի սերտացնել համալսարան-դպրոց կապը: Այդ շրջանակներում 2008-2009 ուս. տարվա երկրորդ կիսամյակում կազմակերպվեցին շրջայցեր Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներ, տեղի ունեցան հանդիպումներ բարձր դասարանների աշակերտների և մանկավարժական կոլեկտիվների հետ:

Իսկ ընդհանրապես, ԱԲՎ-ն կատարում է ամենօրյա տարաբնույթ աշխատանքներ համալսարանի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ համալսարանի կանոնակարգի և իր իրավասությունների շրջանակներում:

## ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ

| | Ուղղություններ | 2006-2007 ուս.տարի | 2007-2008 ուս.տարի | 2008-2009 ուս.տարի |
|---|---|---|---|---|
| 1 | Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել | 10 | 16 | 18 |
| 2 | ԳՊՀ-ից այլ բուհեր են տեղափոխվել | 12 | 7 | 7 |
| 3 | Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա | 30 | 16 | 13 |
| 4 | Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա | 24 | 23 | 20 |
| 5 | Տարկետում են ստացել | 56 | 90 | 144 |
| | → առողջական վիճակի հիմքով | 41 | 56 | 52 |
| | → զինծառայության մեկնելու հիմքով | 15 | 34 | 92 |
| 6 | ԳՊՀ-ից հեռացվել են | 142 | 119 | 131 |
| 7 | ԳՊՀ-ից ազատվել են (այլ երկիր տեղափոխվելու համար) | 4 | 5 | 21 |
| 8 | Վերականգնվել են ԳՊՀ՝ | 128 | 123 | 145 |
| | → զորացրումից հետո | 13 | 20 | 48 |
| | → հեռացումից հետո | 25 | 72 | 47 |
| | → տարկետումից հետո | 51 | 31 | 50 |
| | *Ընդհանուր շարժը* | *406* | *399* | *499* |

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**Գրադարանի վարիչ՝** ***Բաղալյան Ելիզավետա Արտուշի,*** *մատենագետ*

| | | | |
|---|---|---|---|
| Գրքային ունեցվածքը՝ | 36.834 | Բաժին՝ | 2 |
| ընթերցողները՝ | 2.920 | ընթերցասրահ՝ | 2 |
| հաճախումը՝ | 300.700 | աշխատողների թիվը՝ | 3 |
| գրքատացքը՝ | 600.000 | | |

2008-2009 ուս. տարվա ընթացքում գրադարանը կարևոր ձեռքբերումներ է ունեցել: Գրադարանի պաշարները համալրվել են Գավառի ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկումի գրքային ֆոնդով: Գույքագրվել է շուրջ 4431 կտոր գրականություն: Գրադարանի ընդհանուր ֆոնդի մուտքագրումը համակարգչային բազա և նկարագրումը շարունակվում է: Հարստացել են գրադարանի տեղեկատվական մատենագիտական ցանկերը:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում կատարվեց մագիստրատուրայի ընդունելություն I և II կուրսեր, ուստի գրադարանի աշխատանքներում կարևորվեց մասնագիտական գրականության վերադասավորումը և համակարգումը: Այս աշխատանքներում ընդգրկվեցին տարբեր մասնագիտություններից լավագույն և ակտիվ ուսանողներ, որոնց օգնությամբ զտվեցին մասնագիտական ֆոնդերը: Ամբիոններին են տրամադրվել համապատասխան գրականություն՝ ուսանողներին կուրսային և անհատական աշխատանքները պատրաստելիս աջակցելու նպատակով: Ամբիոններից պահանջվել է դասագրքերի և օժանդակ գրականության ցուցակներ: Մագիստրոսների համար կազմվել են մասնագիտական թեմատիկ-հանձնարարական մատենագիտություններ:

Գրադարանը, լինելով Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ, Գավառի մարզային գրադարանին և հայրենագիտական թանգարանին է հանձնել համալսարանի գիտական հոդվածների ժողովածուների ամբողջ փաթեթը և գիտական հոդվածների մատենագիտությունը, որը կօգնի տարբեր մասնագիտություններով հետաքրքրվող ընթերցողներին:

Գրադարանում կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումները անցկացվել են ակտիվ ուսանողների մասնակցությամբ:

Ընթացիկ տարին համալսարանի համար հոբելյանական էր՝ թումանյանական, կոմիտասական: Համալսարանի հիմնադրման 17-ամյակի կապակցությամբ գրադարանը կազմակերպեց համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի «էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից», «Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում» գրքերի քննարկումներ, թումանյանական ընթերցումներ, առաջին կուրսեցիների համար՝ «Երդում մայրենիին» միջոցառումների շարք: Գրադարանում ցուցադրվող «Նոր գրքեր»-ի և հիշարժան-թեմատիկ հանձնարարական ցանկերից օգտվելով, ֆակուլտետներում կազմակերպվել են տարբեր հետաքրքիր քննարկումներ և միջոցառումներ: Շարունակական աշխատանքներ են տարվում ուսանողների շրջանում գրքերի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու համար, պարբերաբար կազմակերպվում են գրքերի կոլեկտիվ ընթերցումներ և քննարկումներ: Այս հետևողական միջոցառումները նպաստել է նաև գրքերի տացքի, ուսանողների գրադարան

հաճախելիության բարձրացմանը: Ընթերցասրահից օգտվող ուսանողների քանակը բազմապատկվել է, և մեծացել տեղեկատվական գրականության՝ հանրագիտարանների, բառարանների, ակադեմիական հրատարակությունների, սեղմագրերի, մատենագիտական ցանկերի, գրացուցակների, ատլասների և քարտեզների պահանջարկը:

Տեղեկատվական ցանկերը և նշանավոր մարդկանց անհատական ալբոմները հարստացել են համալսարանում պահպանվող պարբերական մամուլի, ինչպես նաև այլ բուհերի գիտական հոդվածների ժողովածուների, պատմա-բանասիրական հանդեսների, մանկավարժական-հոգեբանական, իրավագիտական հանդեսների և ամսագրերի նյութերով:

Գրադարանը պետք է լավագույնս իրականացնի Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական, հոգևոր-մշակութային կենտրոնի իր առաքելությունը:

# «ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» - ԳՊՀ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՐԹ

**Խմբագիր՝** *Մուրադյան Պապին Օնիկի*

Հաշվետու ժամանակաշրջանում լրացավ «Գավառի համալսարան» թերթի հինգերորդ տարին: Թերթն այս ուսումնական տարվանից լույս է տեսնում նոր ձևաչափով՝ գունավոր լուսանկարներով ու ամսագրային լրագրությանը բնորոշ ձևավորմամբ:

Պարբերականին հիմնականում թղթակցում են «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացին հաճախող ուսանողները:

Ամսաթերթն ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու նպատակով այս ուսումնական տարվա ընթացքում ուսանողների և դասախոսների շրջանում հարցում է անցկացվել, թե համալսարանականներն ինչպիսին կցանկանային տեսնել «Գավառի համալսարան» թերթը և ինչպիսի նյութեր կցանկանան կարդալ: Հարցման արդյունքներն ամփոփելուց հետո պարբերականում ավելացել են մի շարք խորագրեր՝ «Մասնագետի անկյուն», «Ուսանողի ամբիոն», «Լսարանից դուրս» կամ «Դիմանկար» և այլն:

«Գավառի համալսարան» թերթն իր համարներում լուսաբանում է բուհի առօրյան՝ ուսումնական ու գիտական գործունեությունը, ներկայացնում ուսանողներին հետաքրքրող հարցեր, անդրադառնում գիտաժողովների, մրցույթների անցկացմանն ու ուսանողական խորհրդի գործունեությանը:

Թերթում տեղ են գտել համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումներին, կարգապահության բարձրացմանը, որակի ապահովմանը վերաբերվող տեղեկատվական նյութեր: Մասնավորապես, անդրադարձել ենք համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակի ապահովման ներբուհական ընթացակարգերի արմատավորման գործընթացներին, ինչպես նաև ռեկտորի ու պրոռեկտորի արտերկիր կատարած այցերին:

Թերթի էջերում հաճախ են տպագրվել նյութեր Գավառի պետական համալսարանի և հանրապետության մյուս բուհերի, գիտական-մշակութային կազմակերպությունների, միջազգային կառույցների համագործակցության մասին: Պարբերականի ուշադրությունից չի վրիպում նաև մեր դասախոսների մասնակցությունը տարատեսակ և տարաբնույթ միջազգային և հանրապետական գիտաժողովներին:

«Գավառի համալսարան» թերթը հաշվետու ժամանակաշրջանում պահպանել է իր կայուն պարբերականությունը, լույս է տեսել ամեն ամիս: Թերթի ողջ տպաքանակն ըստ ընդունված կարգի, անվճար տարածվել է բոլոր ֆակուլտետներում, ամբիոններում և այլ կառուցվածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև մարզի համայնքներում: Թերթը դարձել է համալսարանի ուսանողության, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ինչպես նաև տարածաշրջանի բնակիչների սպասված պարբերականը: Թերթն էլեկտրոնային տարբերակով տեղադրվում է ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.gsu.am:

«Գավառի համալսարան» թերթի հնգամյակին նվիրված գիտխորհրդի հոբելյանական նիստին հրապարակվել է ուսումնական պարբերականի ռազմավարական ծրագիրը: 2009-2010 ուսումնական տարվանից սկսած «Գավառի համալսարան»-ը գործելու է՝ համաձայն այդ ծրագրի:

Նշենք նաև, որ թերթի խմբագրակազմը պատրաստել է www.gsu.am բուհի պաշտոնական ինտերնետային կայքը՝ նոր բաժիններով, պատկերազարդ ձևավորմամբ և լուսանկարներով:

# ՄԻԱՑՅԱԼ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

**Արհմիության նախագահ՝** *Սիրունյան Լյովա Գուրգենի*

Հաշվետու ժամանակահատվածում արհմիութենական կոմիտեն ձեռնարկել է մի շարք միջոցառումներ համալսարանի արհմիության գործունեությունն ակտիվացնելու ուղղությամբ:

ԳՊՀ արհմիությունն արդյունավետորեն համագործակցում է ՀՀ բուհերի արհեստակցական կազմակերպությունների հանրապետական խորհրդի, պետական բուհերի արհմիութենական կոմիտեների, ԳՊՀ ռեկտորատի, ուսանողական խորհրդի, համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների և սոցիալական ուղղվածության ծրագրեր իրականացնող գործընկեր կազմակերպությունների հետ:

Հաշվետու շրջանում արհկոմիտեն իր աշխատանքները կազմակերպել է՝ նպատակ ունենալով հնարավորինս բարելավելու աշխատողների սոցիալական վիճակը: Սոցիալական աջակցություն են ստացել ուսանողները և համալսարանի աշխատակիցները՝ թվով 98 աշխատողների արմիության միջոցներից տրվել է 1 միլիոն 625 հազար դրամի օգնություն, ինչպես նաև համալսարանի աշխատակազմի յուրաքանչյուր աշխատողին ամսական տրվում է 100 դրամ՝ կյանքի և առողջության ապահովագրության համար:

Արհկոմիտեն աշխատանքներ է տարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված աշխատանքային պայմանների բարելավման և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման ուղղությամբ:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Ուսանողական խորհրդի նախագահ՝** ***Տերտերյան Վահե Ժորայի***

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է:

Խորհրդի հիմնական նպատակն է ուսուցման կազմակերպման ու որակի ապահովման մեջ, հասարակական կյանքում համալսարանի սովորողների սոցիալական դերի և ակտիվության բարձրացումը, արդի հասարակական-տնտեսական պայմաններում ուսանողների որակյալ կրթությանը սատարումը, նրանց մասնագիտական, հոգևոր-մշակութային զարգացմանը նպաստումը:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողական խորհուրդը իրականացրել է ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական, մշակութային, ինտելեկտուալ զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

2008թ.-ի սեպտեմբերին կազմակերպվել է «Բարի գալուստ» միջոցառումների շարքը՝ նվիրված առաջին կուրսի ուսանողներին:

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսանողական խորհրդի անդամների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք ուխտագնացություններ և արշավներ դեպի հանրապետության պատմամշակութային վայրեր:

ԳՊՀ ուս. խորհուրդը հոկտեմբերի 21-ին կազմակերպեց ԳՊՀ-ում արդեն ավանդական դարձած «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցեցին համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողական թիմերը:

Նոյեմբերի 13-ին Գավառ քաղաքի երաժշտական դպրոցի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի հիշատակին:

Նոյեմբերի 24-ին կազմակերպվեց Նապոլեոն Բոնապարտի կյանքին և գործունեությանը նվիրված ցերեկույթ:

ՈՒսանողական խորհուրդը տարին եզրափակում է Ամանորին նվիրված համահամալսարանական միջոցառմամբ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի և ուսանողական խորհրդի ջանքերով մեր ուսանողները փետրվարին Ծաղկաձորում մասնակցեցին «Ձմեռային դպրոցի» աշխատանքներին, որտեղ հաղթող ճանաչվեցին «Դատական նախադեպ» թեմայով մրցույթում:

2008 թ. մարտի 7-ին տեղի ունեցավ կոնֆերանս «Կանանց հիմնախնդիրները և կինը հասարակական-քաղաքական կյանքում» թեմայով, որտեղ ներկայացվեցին կանանց իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներ: Մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը կազմակերպվեց մայրությանն ու գեղեցկությանը նվիրված միամսյակ, անցկացվեց շարադրությունների մրցույթ:

2008-2009 ուսումնական տարում կազմակերպվել են սպորտային բազմաթիվ միջոցառումներ՝ շաշու, ձեռքի գնդակի, ֆուտբոլի մրցույթներ:

Ռուսաց լեզվի ամբիոնի հետ համատեղ կազմակերպվեց գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված ռուս մեծ բանաստեղծ Սերգեյ Եսենինի կյանքին և գործունեությանը:

ԳՊՀ Տնտեսագիտական ակումբի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում, որտեղ ուսանողները հանդիպեցին մարզի գործատուների հետ: Վերջիններս ներկայացրին իրենց առաջարկները և ակնկալիքները համալսարանից:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական խորհուրդը համագործակցել է ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության հետ: Ապրիլի 19-ին կայացավ ուսանողական գիտաժողով՝ «Կենսոլորտի էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով: Բոլոր ֆակուլտետներում անցկացվել են կոնֆերանսներ, գիտական բանավեճեր, «կլոր սեղաններ» և սեմինարներ,ինչպես նաև բազմաթիվ այլ միջոցառումներ՝ նվիրված գիտության, կրթության և արվեստի մի շարք ոլորտներին, կազմակերպվել են հանդիպումներ անվանի գիտնականների ու մշակութային գործիչների հետ, էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձաններ, այցելություն Գավառի մանկատուն և օժանդակ դպրոց: ԳՊՀ ուսանողները Գեղարքունյաց թեմի առաջնորդի հետ միասին այցելել են Սևանի Վազգենյան ճեմարան:

ԳՊՀ ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցում է բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, Գեղարքունիքի մարզի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

# ԳՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

**Իրավաբանական կլինիկայի կոորդինատոր՝** *Ապրոյան Արսեն Հրաչիկի*

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան արդեն 6-րդ տարին է, ինչ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գործնական գիտելիքները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի հնգամյա գործունեության ամփոփմամբ, որի կապակցությամբ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը՝ դեկտեմբերի 10-ին, կազմակերպվեց իրավաբան ուսանողների գիտական կոնֆերանս՝ նվիրված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 60-ամյակին: Կոնֆերանսին զեկույցներով հանդես եկան 14 ուսանողներ: Կոնֆերանսին մասնակցեց Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի տնօրեն Քրեգ Հոլստեդը, որը բարձր գնահատեց ուսանողների մասնակցությունը և զեկույցները:

ԳՊՀ-ի Իրավաբանական կլինիկայում ուսանողները ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, սովորում են իրավաբանական գործի կազմման, վարման և լուծման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաև ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին, ինչը նախատեսված չէ ուսումնական պլաններում:

Այս տարի իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Փախստականների իրավունքներ» դասընթացը, որի դասավանդմանն աջակցություն է ցուցաբերում Փախստականների գծով ՄԱԿ-ի հանձնակատարի հայաստանյան գրասենյակը:

2008-2009 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքն են ներկայացրել իրավաբանական կլինիկայում «Փաստաբանական հմտություններ» դասընթացներին:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 13 ուսանողներ, որոնք 124 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի բոլոր ուսանողները Ծաղկաձորում մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից կազմակերպված «Ձմեռային դպրոց 2009»-ին և «Աշնանային դպրոց 2009»-ին՝ ստանալով մասնակցության վկայականներ, հավաստագրեր:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում իրավաբանական կլինիկան 2008-2009 ուս.տարում «Աշխատանքային իրավունք» թեմայով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 180 քաղաքացիներ:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվու-թյուն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ անձանց: Կարևոր է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական

գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդների տիրապետող և տարբեր ծրագրերով վերապատրաստում անցած դասախոսներ:

2009թ. մարտ-ապրիլ ամիսներին իրավաբանական կլինիկայի դասախոսները վերապատրաստում են անցել ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Սան Ֆրանցիսկո և Բերկլի քաղաքների համալսարաններում և ձեռք բերած հմտություններն ու գիտելիքները փոխանցել են կլինիկայի ուսանողներին:

Իրավաբանական կլինիկայի դասախոսները մասնակցել են նաև ABA/ROLI Հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Փախստականների գործերով հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների: Որպես կլինիկայի կոորդինատոր՝ մասնակցեցի Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում կազմակերպված որակավորման բարձրացման դասընթացներին և իմ փորձը փոխանցում եմ ուսանողներին:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան, «Քյավառ» հեռուստաընկերության հետ և այս տարի ակտիվորեն մասնակցում է «Հայաստանի իրավաբանական կլինիկական կրթության» ասոցիացիայի ստեղծմանը:

# ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

***Տնտեսական գծով պրոռեկտոր՝ Ապրոյան Արսեն Հրաչիկի***

2008թ. սեպտեմբերին հաստատվել է Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2008-2009 ուս.տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Ըստ այդմ կազմակերպվել է ավելի քան 24 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, խնդիրները, դրանց լուծման միջոցները: Ներքուհական տնտեսությունը կազմակերպելիս՝ օգտագործվել է ինչպես Համալսարանի տնտեսական աշխատակիցների, այնպես էլ այլ կազմակերպությունների մասնագիտացված աշխատակիցների ներուժը:

Հստակեցվել են համալսարանի տնտեսատեխնիկական աշխատակազմի հաստիքները, կատարվել է գործառույթների տարանջատում հիսուներեք տնտեսատեխնիկական աշխատակիցների միջև, հստակեցվել են նրանց պարտականությունները, կարևորվել է Համալսարանի տնտեսական աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը: Իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

2009թ. փետրվարին ԳՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել է «ԳՊՀ տնտեսատեխնիկական անձնակազմի գործունեության» կանոնակարգը: Ըստ կանոնակարգի՝ համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմը բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից է, որը համալսարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և որակյալ կրթական գործընթաց ապահովելու նպատակով միավորում է համալսարանի տեխնիկական, անվտանգության ապահովման, տնտեսական, սպասարկման աշխատակիցներին:

Համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմի բաժիններն են՝

- ✓ տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցպաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլն),
- ✓ տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),
- ✓ սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, կոորդինացվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների նյութական խրախուսման միջոցներ:

2009թ. Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ 10.000-ական դրամական պարգևատրումներ են ստացել տնտեսական աշխատակազմի բոլոր անդամները: Դրամական պարգևատրման ձևով խրախուսվել են նաև նրանք, ովքեր մասնակցել են համալսարանում իրականացված մասնակի վերանորոգման աշխատանքներին:

*Հաշվետու ժամականահատվածում՝*

1. Հիմնանորոգվել են ԳՊՀ հաշվապահությունը, «Հր.Աճառյանի» անվան լսարանը:
2. Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում: Վերանորոգվել են իրավաբանական կլինիկայի սենյակները, դեկանների,

փոխդեկանների աշխատասենյակները, ամբիոնները, ինչպես նաև հանրակացարանի մի քանի սենյակ և միջանցքը, տեղադրվել են եվրոպատուհաններ և դռներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել նոր արտասահմանյան մակնիշի ծառայողական ավտոմեքենա, տնտեսական, տեխնիկական, գրենական այն բոլոր ապրանքներն ու նյութերը, որոնք անհրաժեշտ են համալսարանի գործունեության բոլոր ոլորտների սպասարկման և որակյալ կրթական գործընթաց ապահովելու համար:

# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ

**ՀՏՇ բաժնի մասնագետներ՝** ***Կարեն Սաշայի Սիրականյան,***

***Հայրիկ Խաչիկի Զարգարյան***

Հաշվետու ժամանակահատվածում Համակարգչային տեխնիկայի շահագործման (ՀՏՇ) բաժինն իրականացրել է ԳՊՀ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման, տպիչների լիցքավորման, համալսարանի ներքին ցանցի շահագործման աշխատանքները:

Ելնելով բուհի աշխատանքների պատշաճ կազմակերպման անհրաժեշտությունից՝ ՀՏՇ բաժինը շարունակեց աշխատանքները՝ ուղղված համակարգչային լոկալ ցանցի զարգացմանը: Արդյունքում ԳՊՀ-ում կառուցված համակարգչային ներքին ցանցը ներառում է ռեկտորատը, ակադեմիական քաղաքականության վարչությունը, բոլոր դեկանատներն ու ամբիոնները: Այդպիսով, առավել դյուրին և արդյունավետ է դարձել բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների փոխադարձ կապը, ուսումնա-վարչական փաստաթղթաշրջանառությունը:

ՀՏՇ բաժինը կրում է նաև համալսարանի համակարգչային լաբորատորիաների և ինտերնետային լսարանի սպասարկման պատասխանատվությունը: ՀՏՇ բաժնի միջոցով է կատարվում ԳՊՀ թերթի համակարգչային դիզայնը:

Աշխատանքներ են տարվում համալսարանի բոլոր ստորաբաժանումներն ինտերնետով ապահովելու, ինչպես նաև ներքին ցանցի և առանձին հանգույցների (համակարգիչների) անվտանգությունն ու պաշտպանվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

Նախնական աշխատանքներ են տարվում նաև ներհամալսարանական տվյալների բազա ստեղծելու նպատակով:

## ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՆ ԸՍՏ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ



## ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿԻ




## ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱԼՐՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ



# 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

**[01.09.2008թ.] ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐ**

Միջոցառումը նվիրված էր առաջին կուրս ընդունված ուսանողներին: Նրանք ծանոթացան ԳՊՀ-ում գործող կարգապահական կանոններին, իմացան նաև իրենց իրավունքներն ու պարտականությունները: Հանդիսավոր արարողությամբ ստացան իրենց ստուգման գրքույկներն ու ուսանողական տոմսերը:

**[06.10.2008թ.] ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ**

Սեմինարն անցկացրեց հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբիկ Պողոսյանը: Այն ուներ հոգեվերլուծական ուղղություն: ԳՊՀ ուսանողներից բացի սեմինարին ներկա էին նաև Սևանի թիվ 2 դպրոցի աշակերտները:

**[08.10.2008թ.] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

Ուսանողական գիտաժողով՝ նվիրված Ա.Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» կատագերգության բեմադրման 180 ամյակին:

**[20.10.2008թ.] ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

Կոնֆերանսը նվիրված էր Ֆրոյդի և Յունգի ուսմունքներին: Ուսանողները ներկայացրեցին ուսմունքները լուսաբանող զեկուցումներ:

**[02.11.2008թ.] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

Բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնում տեղի ունեցավ ուսանողական գիտական ընկերության գիտաժողովը, որը կազմակերպել էր ԳՊՀ Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը: Կոնֆերանսը, որը թվով տասներորդն էր, նվիրված էր բաժնի հիմնադրման 10-րդ տարեդարձին: Հարազատ բաժնի հոբելյանին նվիրված ուսանողական կոնֆերանսում զեկուցումներով հանդես եկան 3-րդ և 4-րդ կուրսերի, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողներ և ՈՒԳԸ-ն:

**[07.11.2008-08.11.2008] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

Երկու օրերի ընթացքում Կենսաբանություն և Բնապահպանություն բաժինների ուսանողները հանդես եկան կենսաբանության և էկոլոգիայի արդի հիմնախնդիրներին նվիրված զեկույցներով: Զեկույցները գրքույկների տեսքով տպագրվեցին:

**[15.11.2008] ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՈՒՍԱՆՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ»**

Հավաքի մասնակիցները հանդիսավոր պայմաններում նշեցին ուսանողի միջազգային օրը, որը ընդունվել է Պրահայում, 1946 թվականին: Միջոցառումը վերածվեց տոնի, ուսանողները կարևորեցին իրենց դերը հասարակությունում ու պետության կյանքում:

**[19.11.2009] ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

Տեղի ունեցավ «Խաղաղության կորպուսի կամավոր» Նիկոլ Քաշինի մասնակցությամբ արտալսարանային դասընթաց տնտեսագիտական ֆակուլտետում: Նա անգլերենով ուսանողներին ծանոթացրեց բիզնեսի վարման փաստաթղթային ձևերին, սովորեցրեց անգլերենով գրել ինքնակենսագրություն:

**[24.11.2008թ.] ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ**

«Անգլերեն լեզու» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները անգլերեն ներկայացրեցին ֆրանսիացի մեծ գեներալ Նապոլեոն Բոնապարտի կյանքն ու գործունեությունը: Ցուցադրվեցին առանձին հատվածներ Բոնապարտի անձնական և քաղաքական գործունեությունից, նկարներ՝ նրա կյանքի, ընտանիքի, ռազմական գործողությունների վերաբերյալ:

**[12.12.2008թ.] ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ**

Ցերեկույթը նվիրված էր Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործության քննարկմանը:

**[12.12.2008] ՇԱՇԿՈՒ ՄՐՑՈՒՅԹ**

Սպորտային մրցմանը մասնակցում էին Բնագիտական, Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողները: Համառ պայքարից հետո առաջին տեղը զբաղեցրեց Հումանիտար ֆակուլտետի ներկայացուցիչը, երկրորդ տեղում էր Բնագիտական, իսկ երրորդ տեղում՝ Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողնեչը:

**[13.12.2008] ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ**

Տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողները հանդիպեցին Գավառի աուդիտորական գրասենյակի աշխատողների հետ: Ծանոթացան պրակտիկ ստուգումների ընթացքին և կուտակված փորձին:

**[13.12.2008] ԲԱՆԱՎԵՃ-ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները հանդիպեցին «Հայկական կարիտաս», ՀԵՆԿ հասարակական կազմակերպությունների և «JMF» հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին տեղեկատվության ազատության, երիտասարդական ակտիվության ապահովման հիմնախնդիրները:

**[15.12.2008թ.] ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

Ռուսաց լեզվի և գրականության բաժնի ուսանողների գիտաժողովը նվիրված էր Ն. Վ.Գոգոլի 200 ամյակին:

**[18.12.2008թ.] ԲԱՆԱՍԵՐՆԵՐԸ ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆ ԱՄԱՆՈՐԻ ՇԵՄԻՆ**

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ նոր շունչ հաղորդեցին հումորի ակումբին: Ուսանողները Գավառի տարածաշրջանի բարբառով ներկայացրին մանրապատումներ տեղաբնիկների կյանքից: Միջոցառումը բազմաբովանդակ էր և համալսարանականներին հաղորդեց բարձր տարամադրություն:

**[26.12.2008] ՏԱՐԵՄՈՒՏԻ ԵՐԵԿՈ**

Կազմակերպել էր համալսարանի ուսխորհուրդը: Միջոցառումը բազմաբնույթ էր: Տոնական մթնոլորտում ամփոփվեց կատարվածը և նախանշվեցին անելիքները: Շնորհալի կատարողները արժանացան ուսանողական խորհրդի սահմանած մրցանակների:

**[15.02.2009] ՍՈՒՐԲ ՎԱԼԵՆՏԻՆ**

Սիրո օրվա առթիվ Բնագիտական ֆակուլտետի ուս. խորհուրդը պատրաստել էր արկղիկ, որտեղ ուսանողները միմյանց նվիրված շնորհավորանքներ, բարեմաղթանքներ և գեղեցիկ նկարազարդված բացիկներ էին գցում: Վերջում յուրաքանչյուր շնորհավորանք գտավ իր հասցեատիրոջը:

**[20.02.2009] ՋԻՆԻՇՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԳՊՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

«Բիզնեսի կազմակերպում» մասնագիտության III կուրսի ուսանողուհի, «Տեղական տնտեսության զարգացում» խմբի համակարգող Դիանա Միրիբյանի նախաձեռնությամբ «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակներում կազմակերպվեց թեմատիկ ֆիլմի ցուցադրություն մարզի Չկալովկա գյուղի ուսուցիչների և բարձր դասարանների աշակերտների համար: Ներկա էին տնտեսագիտական ֆակուլտետի ներկայացուցիչներ:

**[08.03.2009- 07.04.2009] ՄԱՅՐՈՒԹՅԱՆ և ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ**

Միջոցառումների շարքը նվիրված էր կանանց, մայրությանն ու գեղեցկությանը: Ուսանողները ներկայացրեցին հայ բանաստեղծների՝ մորը նվիրված ստեղծագործությունները, կազմակերպեցին շարադրությունների մրցույթ սիրո, մայրության թեմաներով:

**[16.03.2009] ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Միջոցառումը կազմակերպվել էր հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում և նվիրված էր Նար-Դոսի ստեղծագործություններին: Վերլուծվեց նրա «Մահը» վեպը և առնչությունները Շոպենհաուերի փիլիսոփայությանը:

**[10.04.2009-17.04.2009] «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ» ՓԱՌԱՏՈՆ**

Մեկ շաբաթվա ընթացքում համալսարանի բոլոր ֆակուլտետներում անցկացվեց «Ուսանողական գարուն» ավանդական փառատոնը:

**[10.03.2009] ՊՈԵԶԻԱՅԻ ԺԱՄ**

Բանասիրական ֆակուլտետը կազմակերպեց գրական ցերեկույթ՝ «Հայ պոեզիան՝ ռուս բանաստեղծների թարգմանությամբ» խորագրով:

**[13.04.2009թ.] ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Միջոցառումը նվիրված էր Մինաս Ավետիսյանին: Ուսանողները արտապատկերել էին այն նույն նկարները, որոնք նկարել էր Մինաս Ավետիսյանը:

**[14.04.2009] ՆՇՎԵՑ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ**

Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները ներկայացրեցին ականավոր

գիտնականի կյանքն ու գործունեությունը, հանդես եկան ժամանակակից տեխնոլոգիաներին նվիրված զեկույցներով: Զեկուցումները լույս տեսան առանձին գրքույկով:

**[15.04.2009] ՀԱՅ ՊԱՏԱՆՈՒ ԵՐԴՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻՆ**

Միջոցառման նպատակն էր գովերգել մայրենի լեզուն: «Հայոց լեզուն, մեր բառն ու բանը, երկաթագիր մատենագրությունն ու բանաստեղծությունն են մեր ինքնության գրավականը: Եվ հենց նրանք էլ աշխարհին բացեցին մեր էությունը՝ մեր բարձրագույն միտքը»: Միջոցառման ավարտին ուսանողները հատուկ ոգևորությամբ հնչեցրին մայրենի լեզվին նվիրված երդումը:

**[16.04.2009] ԱՆՈՒՇ**

Գավառի պետական համալսարանի ընթերցասրահում թևածում էր թումանյանական շունչը: «Անուշ» օպերայի նախերգանքի հնչյունների և Լոռվա բնաշխարհի գեղեցկությունը պարուրել էին մասնակիցների հոգիները: Ընթերցվեցին Արեգ Թումանյանի հուշերից, Թումանյանի՝ քահանա ձեռնադրվելու պատմությունը, Թումանյանի գրադարանի մասին հոդվածը:

**[19.04.2009] ԽՈՆԱՐՀՈՒՄԻ ՕՐ**

Միջոցառման խորհուրդը խոնարհումն էր Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի առջև: Օրը նաև մեծարումի էր, քանզի կարևորվեց ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի գիտական, մանկավարժական կյանքը և գիտական ժառանգությունը: Քննարկվեց Հ. Խ. Հակոբյանի «Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում» մենագրությունը: Քննարկման կազմակերպիչ Ե. Բադալյանը գիրքը մանրամասն ներկայացրեց ուսանողությանը, որպես գիտական կարևոր մենագրություն:

**[17.04.2009] ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ**

Տնտեսագետների ակումբը հերթական անգամ նախաձեռնեց հանդիպում տարածաշրջանի գործարարների հետ: Ներկայացվեցին տարածաշրջանում բիզնեսի և բանկային գործի առանձնահատկությունները: Հանդիպումը կրում էր կողմնորոշիչ բնույթ:

**[24.04.2009թ.] ԿՈՄԻՏԱՍ 140**

Միջոցառումը նվիրված էր Հայոց մեծ եղեռնին և Կոմիտասի 140-ամյա: Նպատակն էր՝ վեր հանել այն կորած հուշերն ու ապրումները, որոնք վերապրել էր Կոմիտասը: Ընթերցվեցին հատվածներ «Անլռելի զանգակատուն» պոեմից և ներկայացվեցին երաժշտական հատվածներ նրա ստեղծագործություններից: Միջոցառմանը ներկա էր նաև ԳՊՀ սփյուռքահայ բարեկամ Հովսեփ Նալբանդյանը:

**[04.05.2009] ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՕՐ**

Ռուսաց լեզվի և գրականության բաժինը կազմակերպեց միջոցառում՝ նվիրված «Սլավոնական գրչության օրվան»: ԳՊՀ ուսանողները մասնակցեցին Երևանում՝ Մոսկվայի տանը անցկացրած «Խոսում, գրում և կարդում ենք ռուսերեն» միջբուհական փառատոնին:

**[05.05.2009] ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Գեղարքունիքի մարզի առևտրա-արդյունաբերական պալատի կողմից տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների հետ կազմակերպվեց խորհրդատվական հանդիպում: Վերլուծվեցին Գեղարքունիքի մարզի տնտեսության հիմնական ճյուղերը՝ ըստ հինգ

տարածաշրջանների: Քննարկվեցին մարզում փոքր և միջին բիզնեսի զարգացման հիմնախնդիրները:

### [09.05.2009թ.] ՄԱՅԻՍԻ 9

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Հարությունյանը ներկայացրեց դրվագներ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից: Ուսանողների կողմից կատարվեցին նաև հայրենասիրական երգեր:

### [15.05.2009] ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Կենսաբանություն բաժնի առաջին կուրսեցիները բեմադրեցին դատավարություն, որտեղ մեղադրվում էին ծխախոտամոլությունը, թմրամոլությունը և ալկոհոլիզմը: Ներկայացվեցին դրանցից յուրաքանչյուրի բացասական ազդեցությունը և հետևանքները մարդու տարբեր օրգան-համակարգերի վրա: Միջոցառումը ուղեկցում էր տեսաֆիլմերով:

### [17.05.2009] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Կոնֆերանսը նվիրված էր ֆինանսական ճգնաժամի հիմնահարցերին: Մասնակցում էին տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողներ և դասախոսներ, ԱԺ պատգամավոր, տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բոստանջյանը:

### [08.06.2009] ԱՐՏԱՇԱՏԻ ԳԻՆՈՒ, ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Տնտեսագետների ակումբի ուսանողները ծանոթացան Արտաշատի գինու, կոնյակի գործարանի արտադրությանը, մարքեթինգային ռազմավարությանը, ամրապնդեցին տեսական և գործնական գիտելիքները:

Նույն օրը նրանք Վիկտոր Համբարձումյանի 100-ամյակի առիթով եղան Բյուրականի աստղադիտարանում և մեծ գիտնականի թանգարանում:

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ

| *Ազգանուն, անուն, հայրանուն* | *ծառայողական 0-264* |
|---|---|
| **ԳՊՀ-ի կառավարման խորհրդի նախագահ**<br>Հակոբյան Հրանտ Խաչատուրի | **2-38-03**<br>**2-57-75** |
| **ԳՊՀ ռեկտոր**<br>Հակոբյան Ռուզաննա Խաչիկի | **2-57-75**<br>**2-55-75**<br>**28-20-75** |
| **Տնտեսական գծով պրոռեկտոր**<br>Ապրոյան Արսեն Հրաչիկի | **2-55-01** |
| **Բանասիրական ֆակուլտետի դեկան**<br>Կատվալյան Վիկտոր Լիպարիտի | **2-45-24** |
| **Բնագիտական ֆակուլտետի դեկան**<br>Ավագյան Մարտին Պատվականի | **2-62-50** |
| **Հումանիտար ֆակուլտետի դեկան**<br>Ղաջոյան Համլետ Գիրշայի | **2-70-09** |
| **Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան**<br>Ամիրխանյան Սամվել Գրիգորի | **2-36-51** |
| **Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան**<br>Կուտուզյան Նելլի Ալբերտի | **2-84-54** |
| **Ակադեմիական քաղաքականության վարչություն**<br>Ղարիբյան Ալինա Ամբիկի | **2-61-15** |
| **Ուսանողական խորհրդի նախագահ**<br>Տերտերյան Վահե Ժորայի | **2-70-09** |
| **Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ**<br>Բադալյան Մարինե Միքայելի | **2-45-24** |
| **Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ**<br>Հերգնյան Մարիամ Նորիկի | **2-36-51** |
| **Հումանիտար մասն. ֆակուլտետի դեկանի տեղակալ**<br>Գևորգյան Գոհար Վալոդի | **2-70-09** |
| **Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ**<br>Գարեյան Մելանյա Վոլոդյայի | **2-84-36** |
| **Գլխավոր հաշվապահ**<br>Մուրադյան Գուրգեն Գևորգի | **2-42-43** |
| **Ռեկտորի օգնական**<br>Մայիլյան Անուշ Տոլիկի | **2-57-75** |
| **Հատուկ բաժնի պետ**<br>Ծատրյան Գավրուշա Գրիգորի | **2-81-29** |
| **Արհմիության նախագահ**<br>Սիրունյան Լյովա Գուրգենի | **2-81-02** |
| **Ավագ պարետ**<br>Զաքոյան Տարիել Հրաչիկի | **2-84-41** |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ ...........................
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին . . . . . . . .
Բանասիրական ֆակուլտետ . . . . . . . .
Բնագիտական ֆակուլտետ. . . . . . . .
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ. . . . . . . .
Տնտեսագիտական ֆակուլտետ. . . . . . . .
Հեռակա ուսուցման ֆակուլտետ. . . . . . . .
Ակադեմիական քաղաքականության վարչություն . . . . . . . .
ԳՊՀ գրադարան. . . . . . . .
«Գավառի համալսարան» ուսումնական թերթ. . . . . . . .
Միացյալ արհմիութենական կոմիտե. . . . . . . .
Ուսանողական խորհուրդ. . . . . . . .
ԳՊՀ Իրավաբանական կլինիկա . . . . . . .
Տնտեսատեխնիկական գործունեություն. . . . . . . .
Համակարգչային տեխնիկայի շահագործման բաժին . . . .
ԳՊՀ հիշարժան միջոցառումներից . . . . . . . . .
Հավելված. . . . . . . .